


AM 146



Ռ Յ Ղ Դ

Բ. ՏԵՄԻ

ՀՈՒՆԻՍ—ՀՈՒԼԻՍ



ՊԵՏՏՈՒԿԱՆ ԱՐՄԱԳԻՐ
 ՀԱՅՐԱՎԵՏԱԿԱՆ ԿԹՈՌՈՅ
 Ա. Ի. ՋԱՐԻՎՅԱՆԻ

1945



ՍՏՈՒԳՎԱՍԻ Է
 1952 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հայկեկեցեցու ժողովի մասին	3
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ	
2. Համազգային Եկեղեցական ժողովի նախագահության հե- ռագիրը ՍՍՌՄ Ժողկոմսովետի նախագահ Գեներա- լիտի մուս Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ	7
3. Համազգային Եկեղեցական ժողովի երախտագիտական հե- ռագիրը ՍՍՌՄ Ժողովրդական Կոմիսարների Սովետի նախագահ Գեներալիտի մուս Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ	8
4. Համազգային Եկեղեցական ժողովի հեռագիրը ՍՍՌՄ Գերա- յունյն Սովետի նախագահության նախագահ Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆԻՆ	9
5. Համազգային Եկեղեցական ժողովի հեռագիրը Հայկական ՍՍՌ Գերազույն Սովետի նախագահության նախագահ Մացակ Պետրոսի ՊԱՊՅԱՆԻՆ	9
6. ՍՍՌ Միության Կառավարության ներկայացուցիչ, ՍՍՌՄ Կրոնական պաշտամունքի Գործերի Խորհրդի նախագահ Ի. Վ. Պոլյանսկու ճառը Համազգային Եկեղեցական ժողովում	10
7. ՀՍՍՌ Կառավարության ներկայացուցիչ, Հայկական ՍՍՌ Ժո- ղկոմսովետին կից Հայ Եկեղեցու Գործերի Խորհրդի նա- խագահ Ս. Ն. Հովհաննիսյանի ճառը Համազգային Ե- կեղեցական ժողովում	12
8. Դոկտոր Հ. Զոնսոնի ճառը	14
9. Ս. Էլմիաձնի Համազգային Եկեղեցական ժողովի դիմումը քրիստոնյա աշխարհին	15
10. Համազգային Եկեղեցական ժողովի հեռագիրը Ամենայն Ռու- սիա Պատրիարք Ալեքսիին	16
11. Շնորհավորական նամակներ և հեռագրեր Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի ընտրության և օծման առթիվ և Նորին Վեհափառության պատասխանը	16
ՉԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ	
12. Համազգային Եկեղեցական ժողովը	22
13. Համազգային Եկեղեցական ժողովի աշխատանքների մասին	27
14. Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Գեվորգ Զ-ի օծման հանդեսը	45
15. Ծառկերույթի պատիվ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի	49
ԽՐՈՆԻԿԱ	
11. Արժանավայել լյուսահատական	50
17. Հայ Եկեղեցու ժողովին ժամանած պատգ. ու հյուրերի ընդունելությունը Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետում	50
18. Ընդունելությունը ՀՍՍՌ Ժողկոմսովետին կից Հայ Եկեղեցու Գործերի Խորհրդում	51
19. Ծառկերույթ ՀՍՍՌ Ժողկոմսովետին կից Հայ Եկեղեցու Գոր- ծերի Խորհրդում	51
20. Երախտագիտության նպեր 4	52

ՊԱՏՎԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀՈՒՇՆԵՐԻՑ ԵՎ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

21. Կ. Լահ. Գալֆայան — Գեպի շալիկներ	53
22. Գեղեկիկ Վարդապետ — Ուխտավորի մը հուշատետրերն	55
23. Կարապետ ազ. Լահ. Մանուկյան — Մի քանի օր Հայաստանում	56
24. Հուզիչ տպավորություններ	60
25. Հայ եկեղեցական ժողովի պատգամավորների և հյուրերի ձեկնումը	61
26. Ազգային եկեղեց. ժողովի արտասահմ. պատգամ. շնորհակալ. հեռագիրը	62
27. 1945 թվի հունիսի 16-ի Համազգային եկեղեցական ժողովի պատգամավորների անվանացուցակը	64

ԽՄԲԸ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
 ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀՈԴՎԱԾՆԵՐ ՔԵ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԻՑ
 ԵՎ ՔԵ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ
 ԽՄԲԸ ԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԸՍՑԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՍՏ
 ԷՋՄԻԱԾԻՆ, «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԸ ԳՐՈՒԹՅՈՒՆ
 Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»
 Redaction of the magasin „Echmiadzin“ Armenia, USSR.

Պատվեր № 1087 քիթ. 1500

Հայկական ՍՍՏ ԺԿՍ-իև Արց րեթրերի և Խմբագրերի տպարան, Երևան

ՀՐԱՄԱՆԱԻ
Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Զ
ՎԵՀԱՓԱՌ ԵՎ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ



ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Հունիսի 16—22-ին Էջմիածնում շարունակվում էին Հայ Եկեղեցական Ժողովի աշխատանքները: Եկեղեցական Ժողովը լրանց ու միաձայն հավանություն տվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չեորեքչյանի զեկուցումը Հայրենական մեծ պատերազմի օրերին հայ եկեղեցու կատարած գործունեության մասին: Եկեղեցական Ժողովը լսեց ու քննարկեց նաև մի շարք այլ եկեղեցական հարցեր:

Այնուհետև Եկեղեցական Ժողովը անցավ Մայրազույն Պատրիարքի Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրությանը: Հայ եկեղեցու կանոնների համաձայն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության արարողությունը կատարվեց Էջմիածնի Մայր Տաճարում դանիակ: Ընտրությունից առաջ բացատրվեց թեկնածու առաջադրելու և Կաթողիկոս ընտ-


րելու կարգը, և Եկեղեցական Ժողովի բոլոր պատգամավորները երդում ընդունեցին, որից հետո գաղտնի քվեարկությամբ միաձայն Մայրազույն Պատրիարք Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրվեց Գևորգ արքեպիսկոպոս Չեորեքչյանը: Ընտրությունից հետո Եկեղեցական Ժողովի ամբողջ կազմը երգեց «Էջմիածին ի հորե»:

Հունիսի 24-ին Էջմիածնի Մայր Տաճարում հանդիսավոր պատարագով տեղի կունենա Ամենայն Հայոց նորընտիր Կաթողիկոս Գևորգ Զ.-ի օծումը:

Հայ Եկեղեցական Ժողովը իր աշխատանքի սկզբում մեծ խանդավառությամբ ողջունի հեռագիր ուղարկեց ընկեր Ստալինին:

(ՀՀԳ)

(«Սովետական Հայաստան», 24 հունիսի 1945 թ., № 126 (7379))




Համազգային եկեղեցական ժողովը 1945 թ. հունիսի
22-ի նիստում ժամի 4-ին ել 45 րոպեին ս. Էջմիածնի
Մայր Տաճարում միաձայն ԱՄՆԵԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱ-
ԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ել ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆՏՐԵՅ Ց. ԳԵՎՈՐԳ
ՍՐԱԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ:

1945 թ. հունիսի 24-ին ս. Էջմիածնի Մայր Տաճա-
րում սեղի ունեցավ նորին ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՆ-
ՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ց. Ց. ԳԵՎՈՐԳ Զ-ի ՕՃՈՒՄԸ:



Նորին Ս. Օծուբյուն Տ. Տ. Գեվորգ Զ. Վեհափառ և Սրբազնագույն
Կաթողիկոս Ամենայն Հայոց





Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն

**Հ Ա Մ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ Ի Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ը
Ս Ս Ռ Մ Ժ Ո Ղ Ո Վ Ի Դ Գ Ա Կ Ա Ն Կ Ո Ս Ի Ս Ա Բ Ն Ե Ր Ի Ս Ո Վ Ե Տ Ի Ն Ա Խ Ա Գ Ա Հ
Գ Ե Ն Ե Ր Ա Լ Ի Ս Ս Ի Մ Ո Ւ Ս Ի. Վ. Ս Տ Ա Լ Ի Ն Ի Ն**

Ս. Էջմիածնի Համազգային եկեղեցական ժողովը պատմական խոշոր նշանակություն ունեցող երկու հեռագիր է հղել ՍՍՌ Միության ժողովուրդների մեծ առաջնորդ գեներալիսսիսումու ԻՌՍԻՑ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻՉ ՍՏԱԼԻՆԻՆ: Համազգային եկեղ. ժողովը առաջին հեռագրի մեջ, որ հղել է իր աշխատանքների սկզբին, գոհունակությամբ նշում է հայկական պետականության ստեղծումը շնորհիվ Մեծ ՍՏԱԼԻՆԻ, հայ ժողո-

վրդի մեծագույն բարեկամի: Երկրորդ հեռագրում, որ հղվել է աշխատանքների ավարտումից հետո, եկեղեցական ժողովը իր երախտագիտական անհուն զգացմունքն է արտահայտում այն հնարավորությունների ու ամենալայն աջակցության առթիվ, որ շնորհել է Միության Կառավարությունը Համազգային եկեղեցական ժողովին իր պարտականությունները կատարելու համար:

Մոսկվա, Կրեմլ **ՍՍՌ Մ Ժ Ո Ղ Վ Ո Ս Ս Ո Վ Ե Տ Ի Ն Ա Խ Ա Գ Ա Հ**
Մ Ա Բ Հ Ա Լ Ս Տ Ա Լ Ի Ն Ի Ն

Այսօր մենք, Սովետական Միության և արտասահմանյան երկրների հավատացյալ հայության ներկայացուցիչներս հավաքվելով Ս. Էջմիածնի դարավոր կամարների տակ, անցնում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության և եկեղեցական մի շարք հարցերի լուծման, մեր աշխատանքին: Մենք լավ հասկանում ենք, որ յառանգ Ձեր բարեհաճ վերաբերմունքի հայ եկեղեցու համար պատմական առաջնակարգ նըշանակություն ունեցող այս իրադարձությունները կլինեն անիրականանալի: Այս օրերը ամենաերջանիկ օրեր են հայ ժողովրդի դարավոր պատմության մեջ, երբ Մեծ Միությունը, որի իրավահավասար անդամներից մեկն է Սովետական Հայաստանը, այս համաշխարհային ավերիչ պատերազմից շտեմնված հաղթանակով դուրս եկավ

Ձեր հանճարեղ ղեկավարության շնորհիվ, ՍՍՌ Մ ժողովուրդների, մասնավորապես ուսումնական մեծ և վեհանձն ժողովրդի հերոսական ջանքերի շնորհիվ: Եվ առաջին զգացմունքը, որ տոգորում է մեզ, Սովետական Միության և արտասահմանի հայության պատգամավորներին, դա երախտագիտության և շնորհակալության զգացմունքն է դեպի Ձեզ, հայ ժողովրդի մեծագույն բարեկամիդ: Ձեր շնորհիվ իրականացված է հայ ժողովրդի պզտապզտությունը ու հայկական պետականության վերածնունդը և մենք հաստատ հավատացած ենք, որ Ձեր օժանդակությամբ կիրականանան ձեր նշան ու հալածանքների հետևանքով տարագիր դարձած արտասահմանյան հայերի իղձերը և նրանք կվերադառնան իրենց Հայրենիք՝ Սովետական Հայաստան:

Հ Ա Յ Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ Ի Հ Ա Ն Ջ Ն Ա Բ Ա Բ Ո Ւ Թ Յ Ա Մ Բ Ժ Ո Ղ Ո Վ Ի Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Կ Ի Լ Ի Կ Ի Ո Տ ա ճ ճ Կ արողիկոս Գ Ա Բ Ե Գ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն
Ա զ զ Ե Ռ Ի Վ Տ Ե Ղ ա կ ա լ Ա մ Ե Ե ա յ Ն Հ ա յ ոց Հ ա յ ր ա պ Ե տ ու յ յ ա Ն Գ Ե Վ Ո Ր Գ
Ա Ր Ք Ե Պ Ի Կ Ո Պ Ո Ս Լ Ձ Ե Ո Ր Ե Ջ Յ Ա Ն

Երուսաղեմի Պատրիարք ԿՅՈՒՐԵՂ ԵՐԿՐՈՐԳ
ՃԱՆԻԿ ՉԱԳՐ
ՀՍՍՌ Գիտուք. Ակադեմիայի իսկական անդամ ՍՍ. (ՄԱԼԽԱՍՅԱՆ 1
ՀՍՍՌ Գիտուք. Ակադեմիայի իսկական անդամ Ա.Վ. ԽՍԱՀԱԿՅԱՆ 1

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԵՐԱԽՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ
ՍՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԳԵՆԵՐԱԼԻՍՄԻՍՈՒՍ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ**

**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԻՈՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՈՆՈՎԻԶ ՍՍԱԼԻՆԻՆ**

Հայաստանյայց եկեղեցու Համազգային ժողովի պատգամավորներս ավարտելով մեր աշխատանքները հաճույքն ու պատիվն ունենք հայտնելու Ձեզ մեր սրտագին երախտագիտությունը: Սովետական Միության մեզ տրված դյուրություններով մենք հնարավորություն ունեցանք կատարյալ համերաշխությամբ և միաձայնությամբ ընտրելու Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս Տեր Գեվորգ արքեպիսկոպոս Չեղրեջյանին:

Հայրենասիրական զգացմունքով և դիտակցությամբ մեր անկեղծ ուրախությունն ենք հայտնում տեսնելով մեր Հայրենիքի կուլտուրական և տնտեսական վերելքը, որ վեր է քուրք ակնկալություններից:

Չնայելով վերջին տարիների ահավոր պատերազմին, որ բնականաբար, երկրի ուժերը պիտի լարեր պատերազմական պահանջներին գոհացում տալու համար, տեսնում ենք, որ Հայաստանն ընթացել ու ընթանում է հարաճուն զարգացման ճանապարհով: Մենք տեսնում ենք Հայաստանում

արտադրական, գիտական, կուլտուրական, զեղարվեստական և այլ հաստատություններ ու հիմնարկներ: Մենք տեսնում ենք երբեմնի անապատ հողերն այժմ ծաղկած ու մշակված ոռոգման մեծ աշխատանքներով, և անհուն է մեր հրճվանքն ու հիացմունքը մեր ժողովրդական ու պետական կյանքի վերելքը տեսնելով: Մենք խորապես գիտակցում ենք, որ այս բոլորը հնարավոր է այն պատճառով, որ մեր ժողովուրդն էլ մեծ բարեբախտություն ունի Սովետական Միության մեկ անդամը լինելու, վայելելով Ձեր հայրական խնամքն ու բարյացակամ ուշադրությունը:

«Մենք մեծ հույս ունենք, որ Սովետական Միության պետական և քաղաքագիտական իմաստությունը կգտնի նաև միջոց ու ճանապարհ վերացնելու այն անարդարությունը, որին ենթարկվեց մեր ժողովուրդը առաջին համաշխարհային պատերազմի թացքում»:

Ազգային եկեղեցական ժողովի նախագահություն
(«Սովետ. Հայաստան», հուլիս, 6, 1945 թ., № 134 (7337))



ՀԱՄԱՋԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՍՍՌԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆԻՆ

ՍՍՌԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԻԽԱՅԻԼ ԽԼԱՆՈՎԻՉ ԿԱԼԻՆԻՆԻՆ

Հայկական Համազգային Եկեղեցական ժողովը հավաքվելով էջմիածնում և ստանալով բոլոր հնարավորություններն իր աշխատանքի համար գաղտնի բլեքարկություններ միաձայն Ամենայն Հայոց Մայրազույն

Պատրիարք Կաթողիկոս ընտրեց Գեվորգ արքեպիսկոպոս Չեորեքչյանին: Ժողովն իր երախտագիտությունն է հայտնում Սովետական Կառավարության ուշադրության և բարյացակամության համար:

Համազգային Եկեղեցական ժողովի անունից Տաճն Կիլիկիո կաթողիկոս ԳԱՐԵԳԻՆ Ա.

ՀԱՄԱՋԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԱՅԱԿ ՊԵՏՐՈՍԻ ՊԱՊՅԱՆԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԱՅԱԿ ՊԵՏՐՈՍԻ ՊԱՊՅԱՆԻՆ

Այսօր Ս. էջմիածնում Ազգային-Եկեղեցական ժողովի համար հավաքված պատգամավորներս, Սովետական Միությունից և Միջուրբից, ուրախ ենք հայտնելու մեր ջերմ և սրտագին շնորհակալությունները Սովետական Հայաստանի Գերագույն Սովետի Երախտագիտ, Մացակ Պետրոսի Պապյանին, որ ընձեռեցիք մեզ ամեն հնարավորություն-


ներ, որպեսզի մենք կարողանանք այսօր Հայաստանում գումարել այս պատմական ժողովը: Նաև խորապես շնորհակալ ենք, որ ավիք մեզ հնարավորություն՝ մեր խղճի համաձայն ընտրել Ամենայն Հայոց Կաթողիկոս և ազատորեն լուծել Հայոց Եկեղեցու վերաբերյալ կարևոր խնդիրներ: ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒՅՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՅՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՍՍՈՒ ՄԻՈՒՅՅԱՆ ԺՈՂՎՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ի. Վ. ՊՈԼՅԱՆՍԿՈՒ ՃԱՌԸ ՀԱՄԱԶԳ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Հայ եկեղեցու մեծարգո գործիչներ. Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության Կառավարության անունից և նրա լիազորությանը դիմում եմ Ձեզ ողջունելով և ցանկանալով Ձեր աշխատանքին հաջողություն:

մշտապես աջակցել է ժողովրդի ազգային ինքնուրույնությանը, դաստիարակել է նրա ազգային դիտակցության զգացմունքը, նըպաստել է նրա կուլտուրայի զարգացմանը: Հայ եկեղեցու այդ դերը, ազգային միասնությունն պահպանողի դերը, չի կարող ա-



Հայ եկեղեցու օրրանը Մայր Աթոռ Էջմիածնում, որը սրբություն է հանդիսանում բոլոր հավատացյալ հայերի համար, Դուք հավաքվել եք, բարձրապատիվ հովիվապետներ, հոգևոր հովիվներ, աշխարհականներ, Ձեզնով ներկայացնելով ամբողջ Հայ եկեղեցին, որը առաջները հայ ժողովրդի գոյության ամբողջ ընթացքում, այն ժողովրդի, որը անցյալում կրել է շատ ձախորդություններ, տառապանքներ ու զրկանքներ,

վարոված համարվել նաև ներկայումս, մանավանդ հայ ժողովրդի ամբողջ աշխարհում ցրված լինելու պայմաններում:

Ազատագրական մեծ պատերազմի օրերին Հայ եկեղեցին անմասն չմնաց: Նա իր ժամանակավոր ղեկավար արքեպիսկոպոս Գեվորգ Չեղրեքչյանի կոչով, որը բեղմնավոր քիչ ջանքեր չի դրել Հայ եկեղեցու զարգացման գործի մեջ, անմիջական մասնակցություն ցույց տվեց ազատասեր ողջ մարդ-

կուլթյան և համաշխարհային քաղաքակրթ-
 թուլթյան մահացու թշնամի հիտլերյան Գեր-
 մանիայի դեմ մղված պայքարում, այն
 Գերմանիայի, որը ներկայումս ամբողջովին
 ջախջախված է հերոսական Կարմիր Բա-
 նակի և մեր դաշնակիցների բանակների
 կողմից:

Սակայն ռազմական հաղթանակը միայն
 գրավական է հանդիսանում խաղաղութունը
 կազմակերպելու այնպիսի հիմունքներով, որ
 լոնք բացառեն նոր պատերազմի առաջա-
 ցումը և մարդու ազատեին մշտական եր-
 կյուլթի և վաղվա օրվա նկատմամբ անվըս-
 տահուլթյան դժգոհումներից:

Այդ խնդիրը լուծելու համար աշխատում
 են լավագույն մտածողները և, իհարկե, նը-
 րանց ջանքերը անհետևանք չեն մնա:

Այժմ ազատասեր բոլոր ազգերի առաջ
 ծառայել է նաև մի այլ ոչ պակաս պա-
 տասխանատու խնդիր՝ ախտիվորեն աջակ-
 ցել ոչ միայն այդ սկզբունքների մշակմա-
 նը, այլև գլխավորապես բոլոր ուժերը մո-
 բիլիզացնել այդ սկզբունքները գործնական
 կյանքում կիրառելու համար: Աշխարհի
 մութ, ռեակցիոն ուժերը զինքը ամենևին
 ցած չեն դրել և նրանց դեմ մեզ սպասում
 է դեռևս համառ պայքարը:

Թույլ տվեք իմ վստահութունը հայտ-
 նել, որ Հայ եկեղեցին խաղաղ շինարարու-
 թյան բնագավառում ևս ջերմ մասնակցու-
 թյուն ցույց կտա՝ կոչ անելով այդ գործին
 մասնակցելու իր բոլոր անդամներին:

Ժողովը կոչված է նաև լուծելու Հայ ե-
 կեղեցու ներքին կառուցվածքի շատ կարևոր
 հարցեր և քննարկելու այդ եկեղեցու իմաս-
 տուն, փորձված, արժանավոր դեկավար՝
 Գերագույն Պատրիարք և Ամենայն Հայոց
 կաթողիկոս:

Ես հաստատ համոզված եմ, որ Ձեր
 քննարկման ենթակա այդ հարցերը միա-
 համուռ և հաջող լուծում կստանան:

Ժողովի հարգո պատգամավորներ, Դուք
 հավաքվել եք ժողովի Սովետական երկրում,
 այն երկրում, որը ընդմիջա թոթափել է դա-
 վանաբանական, ռասայական, ազգային
 սահմանափակումների ու ճնշումների կա-
 պանքները, այն երկրում, որտեղ ազդարար-

վել և անսասան կենսավորվում է ժողո-
 վրդի լիակատար ազատութուն, որտեղ գո-
 լութուն ունի առանց բացառության կրո-
 նական բոլոր կազմակերպությունների իրա-
 վահավասարութուն: Եվ այդ անշուշտ կը-
 նպաստի ժողովի բեղմնավոր աշխատան-
 քին:

Կառավարության լուծումը պահանջող
 պաշտամունքի հարցերի դժով Սովետական
 Միության Կառավարության և կրոնական
 կազմակերպությունների միջև կապ սահ-
 մանելու համար ստեղծվել է ՍՍՌ Միու-
 թյան Ժողկոմսովետին կից կրոնական
 պաշտամունքների գործերի նորհուրք:

Նորհրդի հիմնական խնդիրն է հանդի-
 սանում՝ նպաստել նորմալ հարաբերություն-
 ների հետագա զարգացմանը կրոնական
 միավորումների և պետության միջև և ամեն
 միավորումների գործունեության վերաբե-
 րող Կառավարության օրենքներն ու որո-
 շումներն առանց որևէ կերպ միջամտելու
 նրանց ներքին կյանքին:

Պետք է ուղղակի ասել, որ նորհրդի և
 Հայ եկեղեցու դեկավարության միջև այն-
 պիսի հարաբերություններ են հաստատվել,
 որոնք նպաստել են Հայ եկեղեցու հեռ
 կապված բոլոր հարցերի լուծման: Ես ինձ
 թույլ կտամ հաստատ հույս հայտնել, որ
 հետագայում սահմանված փոխհարաբերու-
 թյունների հիման վրա ՍՍՌ Միության Ժող-
 կոմսովետին կից կրոնական պաշտամունքի
 գործերի նորհուրքը Հայկական ՍՍՌ Ժող-
 կոմսովետին կից Հայ եկեղեցու գործերի
 նորհրդի հեռ միասին ձգտելու է ոչ միայն
 վերացնել Հայ եկեղեցու ճանապարհին ե-
 դած ամեն տեսակ խոչընդոտները, այլև ա-
 ջակցելու նրա հետագա կազմակերպման
 ամրապնդման:

Վերջում թույլ տվեք մի անգամ ևս Ձեզ
 բոլորիդ հայտնել հաջողության անկեղծ
 ցանկություններ ժողովի առաջիկա աշխա-
 տանքներում:

(«Սովետ. Հայաստան», 17 հունիսի
 1945 թ., № 121 (7374))

**ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ, ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐ-
ԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՃԱՌԸ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՄ**

Եկեղեցական ժողովի հարգելի հոգևոր և աշխարհիկ պատգամավորներ՝

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի կառավարության կողմից լիազորված եմ հաղորդելու Ձեզ նրա ողջունը և լավագույն ցանկությունները՝ արդյունավետ և բեղմնավոր դարձնելու այն

կեղեցական ներքին կյանքի մի շարք հարցեր։

Ազգային եկեղեցական այս ժողովը դուրս է պատմական այնպիսի ժամանակաշրջանում, երբ մեր փառապանծ կարմիր Բանակը դաշնակից պետությունների վրեժն ընդդեմ ռեժիմի հետ միասին վերջնականորեն



աշխատանքը, որ կոչված է կատարելու ներկա Եկեղեցական ժողովը իր օրակարգում դրված եկեղեցական կարևորագույն հարցերի լուծման գործում։

Եկեղեցական ներկա ժողովը գումարվել է կատարելու Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունը, հաստատելու Հայ եկեղեցու սահմանադրությունը, ինչպես և լուծելու ե-

ջախշախեց գերմանական ֆաշիզմը և խորտակեց գերմանական ավազակային իմպերիալիստական տիրապետությունը, եվրոպայում ճնշված ժողովուրդներին պարզեց ազատություն և ստեղծեց բոլոր ժողովուրդների համար խաղաղ կյանքի և տնտեսական բարգավաճման ազատ պայմաններ։

Հայ ժողովուրդը, որ Միության ժողովուրդների ընտանիքում հնագույններից մեկն

է իր դարավոր անցյալով, իր գոյութեան հազարամյակների ընթացքում ենթարկվել է բազմաթիվ հարձակումների, ճնշումների ու ծանր հալածանքների օտար տիրակալների կողմից:

Հայոց եկեղեցին փորձութեան այդ ծանր օրերին չի լքել հայ ժողովրդին: Հայոց եկեղեցին իր բախտը կապել է հայ ժողովրդի հետ, իսկ փոթորկի ժամին նրա լավագույն ներկայացուցիչները անձնվիրաբար պայքարել են ժողովրդի ազատութեան համար և իրենց կյանքը զոհարելով Հայրենիքի փրկութեան ու բարօրութեան համար: Խաղաղ պայմաններում, երբ երկիրը շունչ է բաշել արտաքին հարձակումներից, հայոց եկեղեցիներն ու վանքերը քիչ դեր չեն խաղացել մեր հոգևոր կուլտուրայի զարգացման գործում:

Երբ բռնկվեց համաշխարհային հրդեհը և գերմանական ֆաշիստական հորդաները հարձակվեցին մեր Հայրենիքի վրա, Սովետական Միության ժողովուրդները մի սիրտ և մի հոգի դարձած ծառայան անարգ թըշնամու դեմ և պաշտպանեցին իրենց հայրենի հողը, իրենց ազատությունն ու անկախությունը: Այդ ժամանակ, Հայոց եկեղեցին անմասն չմնաց Հայրենիքի պաշտպանության սրբազան գործից: Ամենայն Հայոց Հայրապետության Ազգայնաբան Տեղակալ Գեվորգ արքեպիսկոպոսի հայրենասիրական ազդու կոչերը ջերմ արձագանք գրտան հայ հոգևորականության և հավատացյալների սրտերում, այդ կոչերը ոգեշնչեցին սփյուռքի ու մեր երկրի հայ եկեղեցու զավակներին, որոնք ամենաջերմ սիրով արամադրեցին իրենց նյութական միջոցները «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը կառուցելուն:

Սովետական Միության Կառավարությունը համակրանքով ընդունեց եկեղեցու հայ-

րենասիրական այդ վերաբերմունքը և բարձր գնահատեց Հայոց եկեղեցու ցույց տված բարոյական-նյութական աջակցությունը Հայրենական պատերազմի ծանր օրերին:

Հայոց եկեղեցին միշտ Հոկտեմբերյան սեպտեմբերի ազատ չի եղել իր ներքին գործերը տնօրինելու մեջ. նա նույնիսկ կրել է ծանր հալածանք ցարական կառավարության կողմից և զուրկ է եղել ազատ ու անկաշկանդ գործունեության պայմաններից:

Սովետական իշխանությունն ազատագրելով մեր ժողովրդին ստրկական պայմաններից, ազատագրեց նաև Հայոց եկեղեցին նրա վրա կարծրացած բռնությունից և ըստեղծեց անկաշկանդ գոյութեան բոլոր պայմանները:

Հայ եկեղեցու և կառավարության միջև կապը իրականացնելու նպատակով, Հայկական ժողովուրդներին կից ստեղծված է Հայ եկեղեցու գործերի Խորհուրդ, որը առանց միջամտելու եկեղեցու ներքին գործերին, աջակցում է եկեղեցու և պետության միջև փոխհարաբերությունների կարգավորմանը և հսկում, որ ժամանակին և ճշտորեն կենսագործվեն Հայ եկեղեցուն վերաբերող կառավարական օրենքներն ու սրբոճանները:

Այս ազատ պայմաններում գումարված Հայ Եկեղեցական ժողովը լուծելով օրակարգում դրված հարցերը՝ իր որոշումներով, անկասկած, կնպաստի Հայ եկեղեցու ամրապնդման ու նրա բարգավաճման գործին:


Հարգելի՛ պատգամավորներ, կրկից անգամ հաջողություն եմ ցանկանում Հայ Եկեղեցական ժողովին իր աշխատանքներն արդյունավետ ավարտելու համար:

(«Սովետական Հայաստան», 17 հունիսի 1945 թ., № 121 (7374))

ԴՈԿՏՈՐ Հ. ԶՈՆՍՈՆԻ ԶԱՌԻՑ

Սրբազան հայրերի և Քրիստոս և քրիստոնյա եղբայրների:

Քսանվեց տարիներից ի վեր այս երկիրը առաջադիմում է. Սովետական Միությանը



Դոկտոր Հ. ԶՈՆՍՈՆ

Այս խիստ պատմական պահին, այս փառավոր ու մեծ եկեղեցու զարթոնքի առիթով տեսա վերականգնումը այս հրկրի ճարտար արվեստի ու կրթության, հիմա էլ տեսնում եմ այս եկեղեցու վերազարթումը:

Հատ բան պետք է շահի եկեղեցու վերականգնումով: Ձեզ վստահացնում եմ, որ մեր երկիրը շատ մեծ հետաքրքրությամբ հետևում է այս շարժմանը: Անգլիայի մեջ չպիտի գտնվի մի եպիսկոպոս, որը շուրջնար ներկա լինել այս պատմական պահին,

Ս. Է Զ Մ Ի Ա Մ Ի Ն Ի Հ Ա Մ Ա Զ Գ Ա Յ Ի Ն Ե Կ Ե Ղ Ե Ց Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ Ի Գ Ի Մ Ո Ւ Մ Ը
Ք Ր Ի Ս Տ Ո Ն Յ Ա Ա Շ Ի Ա Ր Հ Ի Ն

Էջմիածնի եկեղեցական ժողովն իր վերջին նիստում ընդունեց ներքևում հրատարակվող դիմումը՝ ուղղված քրիստոնյա աշխարհին:

Ք Ր Ի Ս Տ Ո Ն Յ Ա Ա Շ Ի Ա Ր Հ Ի Ն

Ազգային-եկեղեցական ժողովը՝ գումարված Ամենայն Հայոց Մայրազույն Պատրիարք Կաթողիկոս ընտրելու նպատակով, իր երախտագրիտական զգացմունքն ու փառաբանությունն է ուղղում առ Աստված ոչ միայն իր գործի ներդաշնակ ու կատարյալ վախճանի համար, այլ որ նաև այդ գումարույթը զուգարկիվում է հանուր մարդկության կյանքի բարօրության և ազատության համար անսահման նշանակություն ունեցող միացյալ ազգերի փառապանծ հաղթանակին:

Քրիստոնեական կրոնն ու եկեղեցիները արտաքո կարգի դեր ունին կատարելիք այդ եղբայրության, արդարության և ազատության գաղափարները կյանք և իրականության դարձնելն է համայն քրիստոնեական

աշխարհի և մարդկության մեջ: Քաղաքական միտումնավոր աշխատանքները քրիստոնեական եկեղեցիների մեջ հիշյալ նպատակների իրականացման ձիայն խոչընդոտ կլինեն: Նոքա նոր և ահավոր պատերազմի ուղին կհարթեն միլիոնավոր մարդկանց կորստյան, մարդկային կուլտուրական ըստեղծագործության ոչնչացման պատճառ կհանդիսանան և մարդկության համար նոր տառապանքների դուրս կբանան:

Տարաբախտաբար հոովմեական եկեղեցին գլխավորող վատիկանը մխրճվում է քաղաքական նպատակների մեջ արգելք հանդիպանալով քրիստոնեական բարձրագույն նըպատակների իրագործմանը և պաշտպանելով զերմանական աշխարհավեր ուժը, որ հանուր մարդկության տառապանքների աղբյուր է հանդիսացել: Ուստի Ազգային-եկեղեցական ժողովը վատիկանի բռնած այս դիրքը, որ անհարկ է քրիստոնեական վրեժի գաղափարներին, համարում է դատապարտելի:

Ազգային-եկեղեցական ժողովի հանձնարարությունը՝

1. Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեվորգ Զ:
2. Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Առաջին:
3. Երուսաղեմի Պատրիարք Կյուրեղ Բ.:
4. Եգիպտոսի թեմի Առաջնորդ Մամբրե Եպիսկոպոս Սիրունյան:
5. Իրանա-Հնդկաստանի թեմի Առաջնորդ Վահան Եպիսկոպոս Կոստանյան:
6. Հյուսիսային Ամերիկայի թեմի Առաջնորդ Տիրան Եպիսկոպոս Ներսոյան:
7. Կալիֆորնիայի թեմի Առաջնորդ Մամբրե Եպիսկոպոս Գալֆայան:
8. Հունաստանի թեմի Առաջնորդ Կարապետ Արևալիսկոպոս Մազումյան:
9. Բուլղարիո թեմի Առաջնորդ Գրիգոր Եպիսկոպոս Կարապետյան:
10. Արարատյան թեմի Առաջնորդ Ներսես վարդապետ:
11. Շիրակի թեմի Առաջնորդ Ռուբեն Եպիսկոպոս:
12. Վրաստանի Հայոց թեմի Առաջնորդ Ներսես Եպիսկոպոս Աբրահամյան:
13. Բաքվի և Թուրքմենստանի թեմի Առաջնորդ Եզնիկ վարդապետ:
14. Հյուսիսային Կովկասի թեմի Առաջնորդ Սուրեն Եպիսկոպոս:
15. Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի Առաջնորդ Կարապետ Եպիսկոպոս:

(«Սովետական Հայաստան», 4 հունիսի 1945 թ., № 133 (7386):

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐԲ ԱԼԵԿՍԻՆ

ՄՈՍԿՎԱ

Նորին Սրբություն Ամենայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիին.

Համահայկական ազգային-եկեղեցական Ժողովը 1945 թ. հունիսի 22-ին ս. էջմիածնի նախաթու Մայր Տաճարում դադանի քվեարկությամբ միաձայն Ամենայն Հայոց

Կաթողիկոս ընտրեց արքեպիսկոպոս Գեփորդ Զեորեբջանին, որի մասին տեղեկացնում եմ Ձեզ:

Համազգային եկեղեցական Ժողովի հաստատման, Տանը կիրիկիտ կաթողիկոս ԳԱՐԵԳԻՆ Ա

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ ԵՎ ՀԵՌԱԳՐԵՐ ԱՏԱՅՎԱԾ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԾՄԱՆ ԱՌԹԻՎ ԵՎ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՎՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԳԻ ՆԱԽԱԳԱՀ Ի. Վ. ՊՈՒՅԱՆՍԿՈՒ ՈՂՋՈՒՅՆԸ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Սովետական Սոցիալիստական Ռեպուբլիկաների Միության Կառավարության անունից և անձամբ իմ կողմից շնորհագրում եմ Ձեզ հայկական եկեղեցու բարձր պատում, որպես ղեկավար առաջնորդ ընտրվելու կապակցությամբ:

Հավատացած եմ, որ Ձեր խմատուն ղեկավարության ներքո Հայկական եկեղեցին նույնպիսի հուանդով, ինչպես Հայրենական

մեծ պատերազմի տարիներում, կվճռի իր առաջ դրված պատասխանատու խնդիրները:

ՍՍՌ Միության Կառավարությունը ինձ հանձնարարել է որպես նվեր Ձեզ հանձնել մեկ հատ «ՁԻՍ—101» մարդատար ախտամեքենա:

Մեծ հաճությամբ կատարում եմ այդ այնքան հաճելի հանձնարարությունը:

Ձեզ անկեղծորեն հարգող ՊՈՒՅԱՆՍԿԻ

ՆՈՐԻՆ Ա. ՕԾՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՎՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԳԻ ՆԱԽԱԳԱՀ Ի. Վ. ՊՈՒՅԱՆՍԿՈՒՆ

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Սովետական Միության Կառավարության և անձամբ Ձեզ մեր ընտրության և օժման աթիվ մատուցած շնորհագրության և անհրաժեշտ և ուղարկված նվերի համար:

Սովետական Կառավարության հուանաբարությունը վերաճնված և ծաղկող Սովետա-

Թ. 244

30 հունիսի 1945 թ.

կան Հայաստանում վերաճնվել է հայ եկեղեցին և հայ հավատացյալները լիակատար հիմք ունեն անսահման երախտապարտ լինելու Սովետական Կառավարության և նրա ղեկավարին՝ Մեծ Մոսկվային: Վերաառաջում ենք մեր աղոթքները Բարձր-յալին Սովետական Միության ծաղկման, նրա ղեկավարների և ամբողջ սովետական Ժողովրդի երկար կյանքի համար:

Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց կաթողիկոս ԳԵՎՈՐԳ Զ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂՎՈՍՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԸ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԲ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի կառավարության անունից և անձամբ իմ կողմից շնորհավորում եմ Ձեր ընտրությունը որպես Հայ Եկեղեցու Գերագույն ղեկավարի:

Համոզված եմ, որ Ձեր հմուտ ղեկավարությամբ Հայ Եկեղեցին նույնպես հաջողությամբ, ինչպես և Հայրենական մեծ պատերազմի տարիներին, կլուծի իր ստաց

ծառայած պատասխանատու խնդիրները: Ձեր ընտրության կապակցությամբ Հայկական ՍՍՌ Ժողովածուներին կից Հայ Եկեղեցու դործերի Պորհուրդը որոշել է Ձեզ նվիրել 6—11 սաղիտ-ընդունիչ: Պորհուրդի այդ որոշումը կատարում եմ հաճույքով:

Հարգանքներով՝
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Ս. Ն.

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒՅՑՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԱԽԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂՎՈՍՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Մեծահարգ Սուրեն Ներսեսյանիչ:

Հաճեցեք ընդունել և հայտնել Մեր խորին շնորհակալությունը Սովետական Հայ կառավարության Մեր ընտրության և օժ-ման առթիվ նրա մատուցած շնորհավորանքի հանդեպ: Մենք Մեր սիրած Սովետա-

կան Հայրենիքի հարազատ և հավատարիմ դավանի ենք և կմնանք այդպիսին և նորա բարգավաճման ու խաղաղության համար շտապան աղոթողը:

ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐԲ ԱԼԵԲՍԻԻ ՇԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ամենայն Հայոց կաթողիկոս ՉԵՈՐԵԲՅԱՆԻՆ:

Ձերդ վեհափառության Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելու և օժիշխու առթիվ շտապում եմ որոտակին կերպով ողջունել Ձերդ սրբություն: Ցանկանում եմ Ձեզ երկար կյանք և առողջություն, երկար ու

երկար տարիներ, որպեսզի Հայ եկեղեցին ծաղկի ու բարգավաճի Ձեր իմաստուն ղեկավարությամբ ի փոսու Աստուծո:

Պատրիարք Մոսկվայի և Համայն Ռուսին ԱԼԵԲՍԻՅԵ

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՏՐԻԱՐԲ—ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԱԼԻՍՏՐԱՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՇԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք կաթողիկոս ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

«Պրավդա» թերթի հաղորդագրությունից տեղեկացա, որ մեզ հարազատ Հայ ժողովրդի կողմից Դուք ընտրվել եք Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք-կաթողիկոս: Երաշխահան զրկախանությունից շնորհավորում եմ Ձերդ սրբության ընտրությունը: Հղում եմ Ձեզ սրտագին բարեմաղթություններս ցանկանալով Ձեզ եր-

կար կյանք և առողջություն Հայ լուսափորչական նախամեծար Աթոռի ծաղկման և բարգավաճման համար, Հայ եկեղեցական դործերը իմաստուն կերպով կարգադրելու համար:

Ողջ վրաստանի պատրիարք կաթողիկոս ԿԱԼԻՍՏՐԱՏ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ՇԵՌԱԳԻՐ ՊԱՏԱՍԻԱՆԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐԲ ԱԼԵՔՍԻՆ ԵՎ ՎՐԱՍԱՆԻ ԿԱՅՈՂԻԿՈՍ ԿԱԼԻՍՏՐԱՏԻՆ

Մոսկվա, Մոսկվայի և համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիին

«Շնորհակալութիւնս եմ հայտնում շնորհափորանքների համար: Աղոթում եմ Ամենաբարձրյալին օգնել մեզ քրիստոնեական եկեղեցիները պատրիարքներին՝ կատարելու մեր սրբազան պարտքը հայրենի եկեղեցիների և սովետական պետութեան հանդեպ: Ամենայն Հայոց կաթողիկոս Գեվորգ Զ

Վրաստանի կաթողիկոս ԿԱԼԻՍՏՐԱՏԻՆ

Շնորհակալութիւնս եմ հայտնում շնորհափորանքների համար: Աղոթում եմ Աստուծուն օգնել հայ և վրացական եղբայրական եկեղեցիներին կատարելու իրենց սրբազան պարտքը Հայրենիքի և Սովետական Պետութեան հանդեպ: Ամենայն Հայոց կաթողիկոս Գեվորգ Զ

ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՑ

Էլմիածին, Նորին Սուրբ օծուքյան, Ամենայն Հայոց կաթողիկոս Գեվորգ Զ ՆՈՐԵՔՑԱՆԻՆ

Յնծութիւնը համակեց մեզ, երբ տեղեկացանք, որ Դուք ընտրվել եք Ամենայն Հայոց կաթողիկոս: Հայտնում ենք մեր ամենաանկեղծ շնորհափորանքները՝ ցանկանալով Ձեզ ուժ և կարողութիւն նորանոր հաղթանակների համար: Դուք արդէն հայ եկեղեցու պատմութեան նոր դարադիմի առաջատարն եք: Մենք աղոթում ենք Ամենաբարձրյալ Աստուծուն օրհնել Ձեզ և

Ձեր առաջնորդութիւնը և օգնել ու աջակցել Ձեզ Ձեր նախաձեռնութիւնները և Ձեր պարտքի կատարման ասպարեզում:

Ամերիկայի հայերի Ազգային Խորհրդի նախագահ՝ ՆՋԻԿ Գործադիր կամիտի նախագահ՝ ՎՐԹԱՆՆՍ Քարտուղար՝ ՕԳՍԵՆ ՍԱՐՅԱՆ

Թավրիզից Ամենայն Հայոց վեհափառ կաթողիկոս Գեվորգ Զ-ին

Շնորհավորելով Ս. Գր. Լուսավորչի Գահին բազմելը, ցանկանում եմ ասողջութիւն և երկար կյանք:

Ներսես արքեպ. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆ

Իսպանացի եկեղեցական խորհրդից՝ «Սնդուքում ենք ընտրուել մեր սրբիական շնորհափորանքները»: Գահիրե, «Մատուցի Դավիթ» տանկային շարասյան կոմիտեից՝ Երջանիկ ենք սրբիական երկյուղածութեամբ շնորհափորելու Ձեր ամենաարժանավոր ընտրութիւնը, որպես Ամենայն Հայոց կաթողիկոս:

ԼՈՆԴՈՆԻՑ, ԳԱԼՈՒՍ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆԻ ՀՐԱՎԱՆԳՈՎ ՀԱԿՈՔՅԱՆԸ ՇԵՌԱԳՐՈՒՄ Է

Նորին Սուրբ օծուքյան Ամենայն Հայոց վեհափառ կաթողիկոսին

Լոնդոնի Սուրբ Սարգիս եկեղեցու հոգաբարձութեան նախագահ պարոն Գալուստ Գյուլբենկյանը հրահանգել է ինձ Ձերպ նստ

րին Սուրբ Օծութեանը հղել յուր ջերմազին անձնական շնորհափորանքները, ընդ մին և յուր ամենաանկեղծ գոհունակութիւնը միաձայնութեամբ հայ եկեղեցու բարձրալուսն առաջնորդ զեկալար ընտրվելու համար:

ԲՈՍՏՈՆԻՑ—ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԿԱԶ ՂԱԶԱՐՅԱՆԻՑ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՏՈՒԱՐՏԻՑ

Ձեզ ենք հղում մեր շնորհավորանքները և լավագույն ցանկութունները Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելու առթիվ: Մեր ժողովրդի, եկեղեցու հոգաբարձութան անունից ցանկանում ենք Ձեզ ուժ

և կորով: Հույս ունենք, որ Դուք ձեր անսպառ եռանդով ու կարողութուններով Ամերիկահայ եկեղեցիներին միասնականութունն ու բարեկարգութունը նոր ուժերով առաջ կմղեք:

ՆՅՈՒՅՈՐՔԻՑ—ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ

Հայկական պրոպրետիվ լիգան շնորհավորում է Ձեզ միաձայնությամբ կաթողիկոս ընտրվելու առթիվ: Այսպիսի ընտրությունը ապացուցում է Ձեր դժբախտությունների անհուն սերն ու նվիրվածությունը հանդիպ հայ ժողովրդի: Ծնորհավորելով Ձեզ ցանկանում ենք առողջություն և արեւատություն: Դուք, Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում, ինչպես քաջ հովիվ,

հայ ժողովրդին առաջնորդեցիք և տարաք Ձեր հայրենասիրական ուղիով, օժանդակելով փառապանծ Կարմիր Բանակին, որը հայ ժողովրդին աղատեց Փաշիզից, պսակելով յուր անունը հավերժական փառքով:

ՈՒՂԻԱԿԱՆ ԳԳԱԿԱՆՔԵՐԵՐՈՎ
ՊՐՈՓՐԵՏԻՎ ԼԻԳԱՅԻ ԲԱՐՈՍՈՂԱՐ՝
ՕԳՍԵՆ ՍԱՐՅԱՆ

ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻ, ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԻՄՈՆՅԱՆԻՑ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Դուք, որ հրեշտակի պես կառչել եք սուրբ տեղանքին և պահպանում եք այն հանուն ամեն կողմ սփռված հայերի և հանուն նրանց հոգևոր կյանքի բավարարման: Ձնայելով Ձեր տարիքին, հավատացած ենք որ Աստված հնարավորություն կընձեռնի:

Ձեր վեհափառությունը, երկար տարիների համար ապահովելով Ձեր սկսած դեկամբրությունն ու առաջնորդությունը և Ձեր առաքելական ձեռքով հովանի վրինի աշխարհի ամեն կողմերը սփռված հայության միացյալ տրադիցիաներին ու ցանկություններին:

ԶԻԿԱԳՈՅԻ ՀԱՅԵՐԻՑ—ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ձեր կողմից գտնվող հայերս որդեկան սիրով շնորհավորում ենք Ձեր դժբախտությունների անունից ընտրվելու և ցանկանում ենք

Ձեզ երկար կյանք և բազմաթիվ քաջատուղջ տարիներ:

ՓԱՐԻՋ, ՀԱՅՐԱՊԵՏ ՄԵԼԻՔ ՄՈՒՇԴՈՒՄԲԱՐՅԱՆԻՑ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

Ամենամանկեղծ կերպով շնորհավորում ենք Ազգային-եկեղեցական ժողովին Գե-

վորդ Զ-ին կաթողիկոս ընտրելու և օժելու առթիվ:

ԼՈՆԴՈՆԻՑ—ԷՋՄԻԱԾԻՆ, ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Երիտասարդության Կենտրոնական Կոմիտեն և Գործադիր մարմինը շնորհավորելով Ձեր ընտրությունը ցանկանում են, որ Դուք երկար ու երկար տարիներ արդյու-

նավետ ու ծաղկուն կերպով դեկամբրեք հայ եկեղեցին ու Մայր Աթոռը: Էջմիածնի երիտասարդների և գործադիր մարմնի նախագահ ԳԻՆԻԱՐ ՄԵԼԿՆՆԻՍ

ՖԻԼԱԴԵԼՖԻԱՅԻՑ, ՆՈՐԻՆ ՎԵՅԱՓԱՌՈՒԹՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ԿԱՅՈՂԻԿՈՍԻՆ

Խնդրում եմ ջերմագին շնորհավորանքներս հաղորդել Համազգային-եկեղեցական ժողովին, որը փառապանծ դարագլուխ է

բաց անում մեր եկեղեցու պատմութեան մեջ: «Կռուհկ» քերթի խմբագրություն ԳԱՌՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԲՈՍՏՈՆԻՑ, ՆՈՐԻՆ ՎԵՅԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳ Զ ԿԱՅՈՂԻԿՈՍԻՆ

Սուրբ և փառապանծ Հայր, Ձեր Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելն ու սըրբալույս օծումը բոլոր հայերի սրտերը լցրեց ցնծութեամբ և դոճունակութեամբ: Խնդրում ենք ընդունել մեր որդիական սիր

րո հանդիսավոր խոստումները, ցանկանալով, որ Բարձրալը Ձեզ հովանավորի և ուժ ու կարողություն առ, որպեսզի դուք փառավորապես ի դուրս հանեք նրա սուրբ դործը:

ԲՈՒՆԵՆՈՍ ԱՅՐԵՍԻՑ—ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏԵՂԱԿԱԼԻՆ

Բունենոս Այրեսի հայկական համայնքը շնորհավորում և ողջունում է Ազգային-եկեղեցական ժողովի դուամարումը ցանկանա-

լով նրան արդյունավետ դործունեություն: Փոխքեմակալ՝ Ներսես վարդապետ ԴՈՒՐԱՋՅԱՆ

ԼՈՆԴՈՆ, ՇՆՈՐՀԲ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՍՏՅԱՆԻՑ

Նորին վեհափառություն Ամեհայն Հայոց կաթողիկոսին

Մեր պատգամավորները վերադարձան: Ցավում ենք, որ չեք ստացել մեր շնորհավորական հեռագիրը Ձեր Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելու առթիվ: Լոնդոնի հայ հասարակությունը Ձեր գլխավորությունն է հղում իր ամենաջեր-

մագին շնորհավորանքները, ցանկանալով Ձեզ ուրախ և հաջող ղեկավարություն: Սրտագին ողջունում ենք Սովետական Հայաստանի մեր հայրենակիցներին, նրանց ուղղելով մեր եղբայրական ղեկավարների ջերմ հավաստիքը:

ՆՅՈՒՅՈՐԲԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԿՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ, ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՇԱԿ ՂԱՐԱԳՅՈՋԱՆԻՑ

Նորին վեհափառություն Գևորգ Զ Ամեհայն Հայոց կաթողիկոսին

Լոնդոնի Հայկական Բարեգործական ընկերության անունից թույլ տվեք ինձ Ձեր գլխավոր Օծությունը շնորհավորել Լուսավորչի դահ բարձրանալը: Թույլ տվեք այս առթիվ Ձեզ մատուցել մեր ջերմագին և

սրտագին ողջուններն ու շնորհավորանքները, ցանկալ Ձեզ երկար կյանք և եռանդուն դործունեություն հայ ժողովրդի հողեր կյանքի կազմակերպման դործում:

Բացի սրանցից ստացված են բազմաթիվ շնորհավորական հեռագրեր աշխարհի բոլոր կողմերից և Սովետական Միության բազմաթիվ քաղաքներից՝ Օդեսսայից,

Ռոստովից, Նախիջևանից, Սուվուսից, Կրասնոդարից, Բաքից, Թբիլիսիից, Կիրովականից, Երևանից, Լենինականից, Սևվանից և այլն, Միյուսքի զանազան քա-

ղաքների՝ Գաշերի, Արեքսանդրիայի, կայի դանազան քաղաքների համայնքներից, հողեկորականներից, հատարակական հիմնարկներից, թերթերի խմբագրություններից, հատարակական դարձիչներից, ինչպես և մասնավոր անձերից:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՂԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԹԵՍԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԳՆԵՐԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ի պատասխան Նորին Սրբութեան ընտրութեան և օժման առթիվ տուցված շնորհափորական բաղձաթիվ հեռագրերի, որոնք ստացվել են թե՛ Սոփեոական Մխութեան դանազան քաղաքներից և թե՛ արտասահմանից, ուղարկել է հետևյալ հեռագիրը բոլոր թեմակալ առաջնորդներին.

«Մամուլի միջոցով հաղորդեցեք Մեր դուհունակությունն ու Հայրապետական օրհնությունը և բարեմաղթությունները թե՛ միջայն հաստատություններին, թե՛ թերթի խմբագիրներին և առանձին անհատներին, որոնք հաճել էին շնորհավորել Մեր Հայրապետական ընտրությունն ու օծումը»:

ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ





ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

ԱՌԱՋԻՆ ՀԱՆԳԻՊՈՒՄ

Պատմական օրեր է ապրում Ս. Էջմիածինը: Իր ամբողջ անցյալում Մայր Աթոռը չի ունեցել այն շուքն ու վեհությունը, ինչ որ այսօր:

Հայաստանյայց եկեղեցին հրճվանքի ու ցնծության մեջ է:

Աշխարհի չորս կողմից ժամանել են նրա սիրատուն զավակները նրա դարավոր ճակատը նոր հմայնքների ու հաղթանակների փառքով պսակելու:

Մի պահ... և վանքի գավիթը աղմկում է այտոների ճռնչյունից:

Պատգամավորները և նրանց հետ եկած հյուրերը ցած են իջնում և շրջապատված ժողովրդով մտնում են Մայր տաճար:

Ս. պատարագի հանդիսավորութունը հյուրերի ներկայությամբ մի նոր վեհություն է ստանում:

Հանդիսավոր քայլերով տաճար են մտնում հոգևորական պատգամավորները, նրանց հետևում են աշխարհականները:

Ս. Երուսաղեմի պատրիարք հոր՝ Կյուրեղ Բ.-ի և Եգիպտոսի առաջնորդ Մամբրե եպիսկոպոսի առաջնորդությամբ մոտենալով Էջմիածնի սեղանին երկյուղածությամբ և կարոտով համբուրում են այն, ծնրադրում և մեկ առ մեկ իրենց տեղերը բռնում Մայր Աթոռի միաբանության շարքերում:

Նրանց օրինակին են հետևում աշխարհական պատգամավորները և կանգնում Իջման սեղանի ավանդական դասում:

Ձե՞ որ հավատացյալ հայության ներկայացուցիչներն են լսմբված այնտեղ, միասիրտ և միակամ, խոհուն և համարձակ:

Տաճարը առանձին վեհություն է ստանում և Ս. պատարագի հանդիսավորությունը ևս առաջի տղավորիչ և անմոռանալի դառնում է:

Ս. պատարագն ավարտվում է: Մայր Աթոռի միաբանությունը Ամենայն Հայոց Աղբյուրի Տեղակալ Ամենապատիվ Տեր Գևորգ Արքեպիսկոպոս Չևորեքյանի գլխավորությամբ հյուրերին առաջնորդում է դեպի վեհարան:

Դահլիճում հողերը հայրերն ըստ ավագության բռնում են իրենց տեղերը. աշխարհական պատգամավորները և հյուրերը բռնում են դահլիճի երկու կողմերը:

Մի պահ տիրում է հանդիսավոր լուսթյուն: Տեղի է ունենում անխոս հայացքների հուզիչ և անմոռանալի փոխանակություն:

Կարծեք թե ոչ ոք սիրտ չի անում խղի կարոտների, հիացմունքների և փոխադարձ սիրո վեհափառ լուսթյունը:

Եվ ոչ ոք սիրտ չի անում խղել լուսթյունը:

Վերջապես ոտքի է կանգնում Երուսաղեմի ամենապատիվ պատրիարք Հայր Տեր Կյուրեղ Բ.-ը: Մոտենալով Ամենապատիվ Աղբյուրի Տեղակալին, նա երկյուղածությամբ համբուրում է Տ. Տեղակալի անջր և սպա զգացված արտասանում:

«Ամենապատիվ Հայր»

Մենք երջանիկ ենք, որ այսօր դռնվում ենք Ս. Էջմիածնում, Մայր Աթոռում: Մեզ այստեղ է բերել մեր հայրենիքի սերը, մեր ժողովրդի կարոտը: Լցված այն գլխահյությամբ, որ դեպի հայրենիքն ու ժողովուրդը, դեպի Ս. Էջմիածինն ու Մուրթ Աթոռը լուրջ պարտավորութուններ ունենք կատարելու, մենք սահ եկած ենք մեր պարտքը տալու մեր սրբազան Հայրենիքին, մեր եկեղեցուն և մեր ժողովրդին:

«Լիահույս եմ և հավատացած, որ մեր պարտքը մենք կկատարենք լիակատար կեր-

սրով և աղբյուրով մի նոր լուծա կազմակա-
նենք մեր աղգային դանձարանում :

« Հաղորդում եմ Սրբազան Տեղակալին,
Մայր Աթոռի միաբանությանը, Մայր
Հայրենիքին և մեր ժողովրդին Ս. Երուսա-
ղեմի միաբանության հավատարմական
հարգանքը և սերը :

« Պատիվ ունեմ հայանելու Ձեզ իմ և իմ
միաբանության և ժողովրդյան անվերա-
պահ հարգանքն ու սերը հանդեպ մեր Հայ-
րենիքի ժողովրդանվեր պետության և ժո-
ղովրդին, որ անօրինակ աշխատանքով և
մեծ զոհարաններով ու ամբողջ կրքած
են պծնաղարդել մեր սիրուն Հայրենիքը

գործ ու հանձարեղ աշխատանքի մեջ եղավ
նաև ակն ու աղբյուրը մեր Հայրենյաց եր-
ջանկության : Պատիվ ու հարգանք իր ա-
նունին, իր անուշահամ հանձարին և իր
բարեսցակամ ու հայրական սրտին » :

Մափահարության սրտով տակ ամենա-
պատիվ պատրիարք հայրը անցնում է իր
տեղը :

Մտք է առնում Բուլղարիայի հայերի
թեմական առաջնորդ բարձրապատիվ Գրի-
գոր ծ. վարդապետ Կարապետյանը : Այս-
պես է սկսում իր ողջունը հայր Գրիգորը .

« Ձերդ ամենապատիվություն, արտասահ-
մանյան թեմերու կարգին՝ Բուլղարիո



Եպիսկոպոսական ժողովը վեհաբանում

բաղաբարձություն ամեն բարիքներով և
ապահովել անոր տաղաբա վերելքն ու հա-
ռաջադիմությունը կյանքի բոլոր մարդե-
րու մեջ :

« Մենք հպարտ ենք մեր պետությանը և
վստահ ենք, որ ոչ միայն մեր, այլև Սո-
վետական Միության պատմության մեջ ու-
նի տատերով պիտի արձանագրվի անոր
հրաշակերտության զբլվածքը :

« Ամենապատիվ սրբազան Տեր, խնդրում
եմ Ձեզ, որ բարեհաճեք թարգման հանդի-
սանալ մեր դերագույն զգացումներուն Սո-
վետական Միության Գերագույն Պետին և
Մեծ Առաջնորդին՝ Ի. Վ. Մտալիեին, որ
իր մարդկության ազատագրության մեծա-

Ձեր հայ գաղափակներն ևս իրենց պաշտոնա-
կան մարմիններով անպատում բերկրանքի
մեջ են այն օրեն, երբ Սփյուռքի հայու-
թյունը բախտ ունեցավ ընդունելու Ազգիս
ընդհանրական Հայրապետության սրբազան
Տեղակալ Հորդ ավետարեր շրջաբերական
հեռադիրները, որով կհաղորդվեր 1945-ի
գարնան զուժարելի Ազգային-եկեղեցական
ժողովի թվականը :

« Սովետական Միության մեծ ընտանիքին
իրը անգամ, աննախընթաց շինարարու-
թյամբ և մշակութային հսկա առաջադի-
մություններ, արդիս ամբողջականության իս-
կական պարծանք հանդիսացող մեր սիրելի
Հայրենիքին մեջ, ուր դանվելու բախտն

ունինք ներկայիս, Հայաստանյայց եկեղեցւոյ վերանորոգութեան և յոթը տարիների վեր Հայրապետական դասը ծածկող սուղիք քողին վերացման համար այս հաջողութեանը Ձեզ կգարտինք, Սրբազան Հայր:

«Տիեզերաստան պատերազմին փառալոր վախճանը՝ շնորհիվ Սոփեոսական Միութեան զերհանձար ղեկավար Ի. Վ. Ստալիննի և անպարտելի Կարմիր Բանակին, կրանա վերածնունդի նոր շրջան մը Ս. Էջմիածնի համար, որ կհազարտանք թի շուտով պիտի դառնա իր նախկին փառքին Ձեր Ամենապատիվ Սրբազնութեան անժրտելի և բարձրալիկ կարողութեաններով և իմաստուն Հովգապետի արժանիքներով, զորս Հայաստանիցիք ամեն ատեն և ամեն տեղ:

«Մեր որդիական շնորհալորութեանները խոնարհաբար կմատուցանենք Ձերդ բարձր Սրբազնութեան այն մեծ հաջողութեաններուն համար, որոնք հրճվանքով կգարտուն ամենուն սիրաբը:

«Կներկայացնենք մեր դազութի Հայութեան հապատումական ղդացմունքները Սոփեոսական Միութեան և իր հանձարեղ Առաջնորդին, Հայաստանի բարեխում կառայարութեան և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին»:

Ծափահարութեանների փլացուցիչ որոտը մեղմանում է այն ժամանակ միայն, երբ ոտքի է կանգնում հաջորդ ճատախոտը՝ Ռումինիայի հայերի առաջնորդական տեղապարճ Տ. Վաղդէն վարդապետ Պալճյանը:

Գեղեցկաղծ, երիտասարդ վարդապետը հանդիստ տնտով, բայց ուժեղ առաջանութեամբ սկսում է իր ճատը:

«Ամենապատիվ Սրբազան Հայր, խոնարհաբար կներկայացնեմ Ռումինահայ թեմը և մեր բոլոր հապատայալներու կողմն կուղամ ողջունելու Ս. Էջմիածինը և համբուրելու Ձերդ Ամենապատիվութեան Ս. Ա. Նը:

«Կստահ ձեզք, թե ամբողջ սուժանահայ գաղութը բոցավառված է ամենադնիվ սիրով և խանդավառութեամբ հանդեպ մեր Մայր Հայրենիքի՝ Սոփեոսական Հայաստանի և Ս. Էջմիածնի:

«Յովանդակ գաղութահայութեան ղդայնութեան կներտրնը այս սուրբ վայրերն են: Սոփեոսական բարեխում և հզոր կառայարութեան բարյացակամութեան և օժանդակութեան շնորհիվ, ինչպես նաև Ձերդ Ամենապատիվութեան իմաստուն և հայրենասեր գործունեութեամբ Հայաստանյայց եկեղեցին կմտնե իր ղերին մեջ՝ շարունակելու համար իր պատմական առաքելութեանը մեր ժողովրդի կյանքի բարգաւաճման և մեր Սոփեոսական Հայրենիքի վերաշինութեան վսեմ գործին մեջ:

«Այս ճամբուն վրա սուժինահայութեանը Ձեզ կհետեի ամենայն նվիրումով և վճարականութեամբ:

«Թող օրհնյալ ըլլա այս պատմական օրը»:

Պսոք է խնդրում Ատրպատականի փոխթեմակալ Տեր Կարապետ քահանա Մանուկյանը:

«Ձերդ ամենապատիվութեան, Ատրպատականի հայ ժողովրդի ներկայացուցչական թեմական ժողովի և նրա ձերուսագարդ և բարձրալիկ առաջնորդ ղերաշնորհ Տեր Ներսես արքայապետ Մեղիք-Թանդանի կողմից իմ խորին շնորհակալութեանն և հայտնում Ձերդ սրբազնութեան Ձեռ այն ջանքերի առթիվ, որով մենք ամենայն հանգստութեամբ ճանապարհորդեցինք և հասանք Մայր Աթոռ:

«Առ այդ, Սրբազան Հայր, խնդրում ևմ ստաջնորդի և ինձ ընտրող թեմ. ժողովի կողմից մեր երախտաղլտութեանը և մեր հարգանքների խորին հապատեղը հայտնեք մեր կառայարութեան, ինչ ձեով որ Գուք հարմար կդանեք:

«Ընդ սմին Ձեզ ևմ հանձնում հոչակալոր Տաթևի մենաստանի Ս. Գրիգոր Տաթևացու ոսկեկաղմ ձեռաղիր ալիտարանը, որ մտտ 150 տարի պատմութեան ունի»:

Պսոք է խնդրում Իրանահնդկական թեմի առաջնորդ Տ. Վահան ծ. վրդ. Կոստանյանը:

«Ամենապատիվ Սրբազան Հայր, Ձերդ բարձր կարգադրութեամբ ս. թ. հունիսի 24-ին մեկնեցի իմ պաշտոնակայրը՝ նոր Ջուղա, որպես Իրանահնդկաստանի թեմի առաջնորդ: Այս թեմի հայութեանը, որ Եահարասի ձեռքով փոխաղբիւ է 340 տարի ստաջ Իրան, պահել է իր աղգային բոլոր տրաղեցիաներն ու սովորութեանները և կատչած է իր եկեղեցուն: Ջուղան ունի 12 եկեղեցի և մատուռ, բոլորն էլ բարեկարգ ու պայճատ վիճակում: Իրանահնդկաստանի և Թեհրանի հայութեանը անվե-

բազմաճյուղային կապիտալն է Մայր Հայրենիքի, Ս. Էջմիածնի և նրա սրբութիւնների հետ: Նա սիրում է իր հայրենիքն ու տանջում է տաննել Մայր Աթոռը, Սեանն ու Գեղարքը, Մայր Արաքսն ու Հրաղանը, այնուր Մասինն ու Արաղածը:

Քրանա-Չնդկաստանի և Քեհրանի թեմերի տարազիր հայ ժողովուրդը ինձ հանձնարարեց համբուրել Ձերդ ամենապատվութեան Ս. Աջր և հայցել Ձեր օրհնութիւնը: Իրանա-Չնդկաստանի թեմի կողմից Ձեզ բերել եմ 10.000 թուման արժողութեամբ մի արծաթե մի սակյա սկուտեղ, Քեհրանի թեմից՝ 10.000 թումանանոց մի բնախր պարսկական զորք, իսկ Ռոման Բողղանովիչ Իսախանի կողմից մի յազալայն ամերիկյան ավտոմեքենա՝ Ձեր երթևեկութեան համար:

«Սրբազան Հայր, հաճեցեք ընդունել այդ նվիրները: Ոնջրում եմ օրհնեցեք Ձեր և Մայր Աթոռի տարազիր, սակայն ազնիւ հայ ժողովուրդին, որ Ձեզով ու սրտով և դպացումներով Ձեզ հետ է»:

Այնուհետև ողջունի խոսքեր ուղղելով Տ. Տեղակալին արտահայտում են դրեթերուր պատգամավորները: Նրանց ճառերը հաղեցված են նվիրվածութեան և անկեղծութեան դպացումներով: Լինելով հարազատ թարգմանը իրենց ընտրող ժողովուրդի՝ նրանք հաճախ պատմում են խիստ բնորոշ

մտերամասնութիւններ՝ վեր հանելով հայ ժողովուրդի սերը դեպի Մայր Աթոռ Մուրր Էջմիածինը և դեպի Ազգայնախոր Տեղակալը:

Վերջապես ողջունողներին պատասխանում է Տ. Տեղակալը: Սրբազան հովիտակալն հուզել են իր զավակների սրտարուխ դպացումները: Նրա աչքերը արտահայտում են խնդութիւն, և նրա սիրտը բարակում է ցնծութեամբ: Ողջունելով պատգամավորներին և բարի պարտա մաղթելով՝ Տեղակալը նշում է մեր պետականութեան հանգամանքը, շեշտում է, որ այսօրվա հալաբուրիքի և այս համազգային ցնծութեան համար հայ ժողովուրդը պարտական է Մեծ Ստալինին և ուստ մեծ ժողովուրդին: Դահլիճը դղրդում է ծախսահարութիւնները սրտից:

— Մե՛նք մեր աշխատանքներով, մեր նվիրվածութեամբ, նյութական և բարոյական աջակցութեամբ հանդեպ Սովետական Միութեան և Սովետական Հայաստանի կառավարութեան, պիտի ապացուցե՛նք, որ հիրավի մե՛նք արժանի ենք այն մեծ ուշադրութեանը, որ ցուցաբերվեց դեպի մե՛զ:

«Ողջունում եմ Ձեզ և օրհնում գարձն ու աշխատանքները» խոսքերով վերջացնում է իր ողջունի խոսքը Տեղակալը:

Պատգամավորները ուրախ և անջնջիլի ապավորութիւններով թողնում են դահլիճը:

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Երեկոյան ժամը 8-ին ժամանում է Տանն Կիլիկիո վեհապառ կաթողիկոս Գարեգին Առաջինը:

Վեհափառը աղմկալից կեցցեներով առաջնորդվում է դեպի Մայր տաճարը: Թափուրի առաջից փողփողում են խաչյառներն ու խաչերը և «Հրաշափառ» շարականով կաթողիկոսը միաբանութեան առաջնորդութեամբ մտնում է տաճար:

Նա հակիրճ ու ամփոփ կերպով խոսում է առաջիկա Ազգային եկեղեցական ժողովի պատմական նշանակութեան մասին, կոչ է անում սիրել Մայր Աթոռն ու Հայրենիքը, սիրել և ամուր փարվել մեր պետականութեանը, նվիրվել նրանց ստեղծագործ աշխատանքներին և բարձր պահել հայ ժողովուրդի Ազգային Պետական և կրոնական միասնութեան դրոշմները:

Դուրս դալով Մայր Տաճարից վեհափառը քայլերն ուղղում է դեպի վեհարան: Ծա-

նարարչի երկու կողմերը բռնել են հավատացյալները, որոնք կեցցեներով ողջունում են նրան:

Հուզիչ է տեսարանը վեհարանում: Հայ եկեղեցու երկու վեստրանները գրկախառնվում են և համբուրվում, Սրբազան Տեղակալը իր աթոռն առաջարկում է կաթողիկոսին և տեղ բռնում նրա աջակողմում, ձախ կողքին բաղմում է Նրուսազեմի պատրիարքը, մյուսները կանգնում են ըստ ավագութեան:

Կաթողիկոսը ձեռքի շարժումով աղաբարում է նստել:

Սկսվում է խիստ մտերմական, բնասանկան դրույցը: Նա պատմում է ճանապարհին վայելած սովետական օրդանների հյուրասիրութեան և իրեն ցույց տրված օժանդակութիւնների մասին: Ծիծաղը անպակաս է նրա դեմքից, նա անչափ դո՛ւ է իրեն շրջապատող իրազրութիւնից:

— Ճեմարանի համար արժեքավոր նվեր էլ եմ բերել, — հայտարարում է վեհափառը — տարեկան 50 Փունտ ստերլինգ ապահովել եմ ճեմարանի համար, այս տարւաւնը բերել եմ, գրպանումս է, ուզում եք հանեմ, դեմ սեղանի վրա, — ասում է նա և լիաշունչ ու կուշտ ծիծաղում:

Նրա կենսալից ծիծաղի մեջ Հայրենիքն է խոսում, Մայր Աթոռի և Ս. Էջմիածնի կարոտն է, որ վեհափառ շքեղութամբ լըցնում է հսկայական դահլիճը:

Պատգամավորները ցնծադին ծախհարում են, նրա հայտարարութունը վարակում է ամենքին, «կվերադառնանք, մենք էլ կուղարկենք», լսվում է կողքերից. «Այ դործնական մարդ, ինչպես երևում է, չի սիրում խոստումներ և ապառիկ դործեր», լսվում է ետևից: Ծուռ եմ դալիս վերջին արտահայտութուն անողին դռնելու, տեսնում եմ բոլորն ուրախ են, ժպտերես, կայտաւ, բոլորի ուշադրութունն ու նայվածքները նվիրված են դեպի վեհափառը:

Առանձնապես նկատելի է երկու ահանաւոր եկեղեցականների փայփայանքը և խիստ սիրալիք, ջերմ վերաբերմունքը միմյանց: Եվ այդ հասկանալի է. նրանք ճեմարանի առաջին շրջանավարտներն են, դասընկերներ և ճեմարանավարտ առաջին եկեղեցականները: Տարիների ո՛րպիտի վսեմ պատմութուն է կապված կյանքի հետ, մեկը Տանն Կիլիկիոյ վաթողիկոս, իսկ մյուսը՝ Ամենայն Հայոց Հայրապետութեան Տեղակալ: Ու որքան խորհրդավոր, իմաստալից ու դեղեցիկ է պատմական այս դուզադիպութունը:

Մեկ քնդ մեջ Գարեգին Ա-ին վեհափառը հայացքը արտասահմանից եկած հոգևորականներին ուղղելով պատմում է այնտեղի անցուղարձեքից, ինչ որ հիշեցումներ անում, կամ հարցումներ տալիս: Զրույցի հանդիսավորութունն ու քաղցրութունը թույլ չեն տալիս միջամտել և հարցադրումներ անել: Սակայն վերին աստիճանի կենսուրախ և պարզ այդ անձնավորութունը ամեն անգամ դոճունակութամբ շփում է իր ձեռքերը և հիշեցնում Աղդային-եկեղեցական միասնութեան դադափարը: Աղդային-եկեղեցական միասնութուն, — ասա

մեր երկու ահանաւոր եկեղեցականների կեութունը, նրանց նկարագրերը:

Նույնպիսի մտերմական խոսակցութուններ և մտքերի փոխանակութուն տեղի է ունենում Երուսաղեմի պատրիարք հոր կյուրեղ Բ-ի հետ: Պատրիարք հայրը խոսուն մի անձնավորութուն է. նրա մտքերը չարված և ձեւված են, թվում է, թե նա վաղօրոք խորհել է այն բոլորը, ինչ որ այսօր արտահայտում է: Նրա արտաքերը ջուրթունք և մտքերի պարզ շարահարութունն ու խորութունը անզուգական ամբողջութուն են կազմում: Նա արավորիչ է և լուրջ. խոսում է ճամօղիչ լեղվով:

— Եստ րան կպարտենք Սրբազան Տեղակալին, աս օրերը պատմական են ու հաւերթական: Սովետները փրկեցին Հայ Ժողովուրդն ու Հայ պատմութունը», հաւաքա կրկնում է նա: Այս հաիրճ նախադասութունների մեջ ամբողջ դարեր են պատկերում, ամբողջ պատմութուններ ասլում:

Արքայահամանի Հայ պատգամավորները առանձին դոճունակութամբ նշում են մեր դեսպանների ցույց տված աջակցութունը եկողներին: Հերավի, պատգամավորի դիրքին ու պատիվը առանձնահատուկ հարգանքի է արժանացել մեր պետութեան կողմից:

«Եկյոսպական և ոչ մեկ պետութուն դեռ ևս չի հասեր նման նրբազգացութեան պատգամավորին արժանապատիւթեան հանդեպ», բացականչում է մեկը խիստ տեղին շեշտելով Սովետական երկրի առավելութունը:

— Ուշ է, վեհափառը պիտի հանդատանա, — հայտարարում է Ամենապատիւ Տ. Տեղակալը:

— Հանգստանալու չեմ եկել, — քնդմիջում է վեհափառը և զրույցը շարունակում: Կարոտի և սիրտ տենչը հորդում է նրա սրտից. բոլորս հեղեղվում ենք և վարակվում նրանով, նրա զգացումներով ու մտքերով...

Հուշերի, քաղցր դրույցների անմոռանալի երեկո, որ միշտ կապրի բոլորիս սրտում մեկ տանելով աղդային միասնութեան սրբազան ճամբաներով:

Ո. Վ.

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵՆԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆԲՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1945 թ., հունիսի 16, Ս. Եջմիածին

Ն Ի Ս Ց Ա Ռ Ա Զ Ի Ն

Վեհարանի բակում արտասովոր ցնծություն է տիրում: Ժողովին եկած պատգամավորները բոլորն էլ տոնական տրամադրությամբ սպասում են Ազգային-Նկեղեցական ժողովի բացմանը:

Վերջապես ժամը 11-ին սկսվում է հանդիսավոր երթը: Առջևից գնում են Ամենայն Հայոց Հայրապետության Ազգրնտիր Տեղակալ Ամենապատիվ Տ. Գեվորգ արքեպիսկոպոս Չորեքշյանը, Տանն Կիլիկիոյ Վեհափառ կաթողիկոս Տ. Գարեգին Ա.-ը, Ս. Երուսաղեմի պատրիարք Տ. Կիւրեղ Բ.-ը: Երանց հետևում են արտասահմանյան և Սովետական Միության հայ թեմերի թեմական առաջնորդները և ընտրված հոգևորական պատգամավորները, այնուհետև արտասահմանի աշխարհական պատգամավորները և ապա Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի պատգամավորները:

Պատգամավորությունը զանգակների ղողանջի տակ վեհարանից դուրս է գալիս և ուղղվում դեպի ճեմարանի շենքը, ուր տեղի է ունենալու ժողովի բացումը: Պատգամավորները բռնում են իրենց տեղերը դահլիճում:

Նախագահության սեղանի շուրջը տեղավորվում են մեր եկեղեցու ակնաւորները կայացուցիչները: Կենտրոնում տեղ են բռնում Ամեն. Տ. Տեղակալը, Վեհափառ Գարեգին Ա.-ը և Երուսաղեմի պատրիարք Տ. Կիւրեղ Բ.-ը, Եգիպտոսի առաջնորդ Գերաշնորհ Տ. Մամբրէ կաթիկոպոս Միբունյանը: Ներկա է 102 պատգամավոր, որոնցից 28-ը հոգևորական և 74-ը աշխարհական:

Նախագահության շարքում իրենց հատուկ տեղն են գրավում ՍՍՌ Միության Կառավարության ներկայացուցիչ, ՍՍՌ Միության Ժողկոմսովետին կից կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ Ի. Վ. Պոլյանսկին և Սովետական Հայաստանի կառավարության ներկայացուցիչ, ՀՍՍՌ Ժողկոմսովետին կից հայ լուսավորչական եկեղեցու Գործերի խորհրդի նախագահ Ս. Ն. Հովհաննիսյանը:

Տիրում է հանդիսավոր լուռություն: Բոլորի հայացքներն ուղղված են ամենապատիվ


Տ. Տեղակալին և լարված ուշադրությամբ սպասում են նրան: Տեղ Տեղակալը առաջարկում է Տանն Կիլիկիոյ Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա.-ին՝ իր օրհնությունը տալ ներկա եղողներին:

Վեհափառ Հայրապետը ոտքի է կանգնում: Ամբողջ դահլիճը հոտրնկայա լում է Վեհափառի արտասահման ճշարտ մեր» և ավուր պատշաճի աղոթքները, որից հետո քառաձայն խումբը երգում է «Էջմիածինն ի հօրէ՛ն շարահանը: Ապա ողջույնի առաջին խոսքն ասում է Ամենապատիվ Տ. Տեղակալը:

Մեկնաբանելով Հայրենական պատերազմի դերը ամբողջ աշխարհում խաղաղությունը վերականգնելու որպես անհրաժեշտ միջոցառում, դրվատելով Սովետական Միության ժողովուրդների տոկոսնությունն ու հերոսությունը հաղթական պայքարի ընթացքում, Ամեն. Տ. Տեղակալը նշում է այն կարևոր ու մեծ ծառայությունը, որ մատուցել է ռուս մեծ ժողովուրդը խաղաղության և մարդկային ազգի բաղաբակթությունը փրկելու գործին (բուն ծափահարություններ):

«Այս մեծ և վիթխարի շարժման մեջ,— ասաց Տ. Տեղակալը, դեպի Հայրենիքն անմասն ու անտարբեր շմնաց նաև հայ ժողովուրդը. նա Հայրենիքի պաշտպանության համար խապաս դրեց իր ֆիզիկական ու նյութական ողջ կազմությունը, որով գործնականապես ապացուցեց, որ ինքը ռուս մեծ ժողովրդի իսկական բարեկամն է և կապված է նորա հետ անքակտելի կապերով» (բուն ծափահարություններ):

Այնուհետև շեշտելով այս ժողովի նշանակությունն ու դերը, Ս. Էջմիածնի վերածնունդը և հետ այսու անելիքը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, Տեղ Տեղակալն իր ողջույններն ուղղեց Ազգային-Նկեղեցական ժողովին, Սովետական Միության Կառավարության ներկայացուցիչ Ի. Վ. Պոլյանսկուն, Սովետական Հայաստանի Կառավարության ներկայացուցիչ Ս. Ն. Հովհաննիսյանին, Տանն Կիլիկիոյ Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա.-ին, Երուսաղեմի պատրիարք Տ. Կիւրեղ Բ.-ին, արտասահմանի և մեր թե-



Համագրային եկեղեցական փողովի առաջին նիստը

մերի թեմական առաջնորդներին, փոխ թեմականներին, պատգամավորներին և ներկա դասվող հյուրերին:

Վերջացնելով ողջույնի իր խոսքը, Ամենապատիվ Տեր Տեղակալը Ազգային-Եկեղեցական ժողովը հայտարարեց բացված (բուռն և երկարատև ծափահարություններ):

Ամեն. Տ. Տեղակալից հետո ողջույնի խոսք է ասում Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա:

Դրվատելով մեր ժողովրդի և պետության ձեռք բերած նվաճումները, Վեհափառ անհուն բերկրանքով իր գոհունակությունն է հայտնում Սովետական Հայաստանի Կառավարությանը, օրհնում է ժողովը և հաջողություն բարեմաղթում նրա աշխատանքներին:

Ամեն. Տ. Տեղակալը խոսքը տալիս է ՍՍՌ Միության Կառավարության ներկայացուցիչ, ՍՍՌ Միության ժողովմասովետին կից կրոնական պաշտամունքի գործերի խորհրդի նախագահ Ի. Վ. Պոլյանսկուն:

Ժողովը նրան դիմավորում է բուռն և երկարատև ծափահարությամբ:

Ի. Վ. Պոլյանսկին ասում է ողջույնի իր խոսքը.

Կրկին դահլիճը թնդում է աղվալից ծափահարություններից:

Խոսքը արվում է Հայաստանի ժողովմասովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Ն. Հովհաննիսյանին: Ժողովը բուռն ծափահարություններով ողջունում է Հայաստանի Կառավարության ներկայացուցչին:

Ն Ի Ս Տ Ե Ր Կ Բ Ո Ր Դ

1945 թ. հունիսի 18-ին, առավոտյան ժամը 11 և 3/4-ին ճեմարանի դահլիճում սկսվում է Ազգային-Եկեղեցական ժողովի երկրորդ նիստը:

Ժողովին նախագահում է Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա, ատենապետում է բանաստեղծ Ավետիք Իսահակյանը:

Ամենապատիվ Տեր Տեղակալը ղեկուցում է Մայր Աթոռի գործունեության վերջին 4 տարիների մասին, սկսած 1941 թ. ապրիլի 10-ից մինչև ցայսօր:

Այնուհետև ատենապետը կարդում է այն հայտագիրը, որ Ամենապատիվ Տեր Տեղակալը մատուցել էր ՍՍՌ Միության ժողովումսիկետի նախագահ Ի. Վ. ՍՍԱԼԻՆԻՆ: Ժողովը հոտնկայս և որոտալից ծափահարություններով օվացիա է անում ի պատիվ հանձարեղ Առաջնորդի: Հայտագրի ընթերցումից հետո ատենապետը ցույց է տալիս ժողովականներին Ի. Վ. ՍՍԱԼԻՆԻ մականգրությունը:

Այնուհետև Ամենապատիվ Տեր Տեղակալն առաջարկում է ժողովին՝ ողջույնի հեռագիր ուղարկել ՍՍՌ Միության Մեծ Մարշալ Ի. Վ. ՍՍԱԼԻՆԻՆ:

ՍՍԱԼԻՆ անունը բացավառում է ներկա եղողներին, բոլորը տաքի են կանդնում և բուռն ծափահարությունների որոտը երկար ժամանակ թնդացնում է դահլիճը:

Որոշվում է ողջույնի հեռագիր ուղարկել աշխարհի ամենամեծ մարդուն, Մեծ ՍՍԱԼԻՆԻՆ:

Տեր Տեղակալի առաջարկությամբ ժողովն անցնում է ատենապետությունը քննարկելու: Միաձայն քվեարկությամբ ատենապետներ են քննարկում հոյակալոր բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, Սահիան Մալխասյանը և պատգամավոր ճանիկ Չարգին:

Քարտուղարության կազմում քննարկում են Բուրգարիայի առաջնորդ Տ. Գրիգոր վարդապետը, Վրաստանի փոխթեմական առաջնորդ տ. Սահակ ավագ քահանա Սահակյանը, տ. Վահան քահանա Թավարեկյանը և պատգամավոր Ծաղկյան Առաքելը:

Մանդատային հանձնաժողովի կազմում քննարկում են Բելլոթի առաջնորդ գերազնորհ Տ. Արտավազդ արքեպիսկոպոսը, Ռումինիայի առաջնորդ Տ. Վազգեն վարդապետը, պատգամավորներ Աղաջանյան Արմենակը և Սեդրակ Թարյանը:

Ազգային-Եկեղեցական ժողովի հաջորդ նիստը նշանակվում է հունիսի 18-ին, առավոտյան ժամը 11-ին:

րություններով օվացիա է անում ի պատիվ հանձարեղ Առաջնորդի: Հայտագրի ընթերցումից հետո ատենապետը ցույց է տալիս ժողովականներին Ի. Վ. ՍՍԱԼԻՆԻ մականգրությունը:

Նորից բռնկվում են հոտնկայս և որոտալից ծափահարությունները և «ԿԵՅՅԵ ՄԾՄ ՍՍԱԼԻՆԸ» բացականչությունները:

Վեհափառ կաթողիկոսը առաջարկում է ժողովին իր երախտագիտությունը հայտնել Մարշալ ՍՍԱԼԻՆԻՆ: Ժողովը հոտնկայս և խանդավառ ծափահարություններով հայտնում է իր հարգանքն ու երախտագիտությունը Մեծ ՍՍԱԼԻՆԻՆ:

Ժողովն անցնում է օրակարգին և քըննում է Ազգային-Եկեղեցական ժողով գունարեւու կանոնադրությունը:



ԱՄԵՆ. Տ. Տեղակալը զեկուցում է համազգային եկեղեցական ժողովին

Բարձրագատիվ տեր Ռուբեն ծայրագույն վարդապետ Դրամբյանը հողված առ հողված կարդում է կանոնադրությունը, որը ընդունվում է ժողովականների կողմից թիվն փոփոխություններով:

Քառորդ ժամ հանգստից հետո ժողովը վերսկսվում է: Բանաստեղծ Ավետիք Իսահակյանն առաջարկում է ընտրահարություն և երախտիք հայտնել Սովետական Հայաստանի բարեխնամ կառավարությանը: Ժողովականները հոտնկայս և բուն ծախահարություններով ընդունում են այդ առաջարկը:

Ամենապատիվ Տեր Տեղակալը հայտնում է: Ժողովին, որ պատգամավոր Սա. Մալխասյանը «էջմիածին» ամսագրին ուղարկած մի հողվածով առաջարկ է արել տոնել

Մայր Աթոռի կիլիկիայից Ս. էջմիածին փոխադրվելու 500-ամյակը: Ժողովականները միաձայն ընդունում են այս մտահղացումը և որոշում տոնել 500-ամյակը:

Վեհափառ կաթողիկոսը հակիրճ կերպով պատմական տեղեկություններ է հաղորդում Աթոռի փոխադրման մասին և ցանկություն հայտնում մեծ շուքով տոնել 500-ամյակը, ինչպես որ տոնվել է տառերի գյուտը, Աստվածաշնչի թարգմանությունը և այլն:

Ժողովը որոշում է հաջորդ նիստին 500-ամյակը տոնելու բանաձև և ծրագիր ներկայացնել:

Ժամը 2-ին 10 րոպեին ժողովը հայտարարվում է փակված: Հաջորդ նիստը նշանակվում է հունիսի 19-ին, առավոտյան ժամը 11-ին:

Ն Ի Ս Տ Ե Ր Ո Ր Դ

Ազգային եկեղեցական ժողովի երրորդ նիստը տեղի ունեցավ հունիսի 19-ին, հոգևոր ճեմարանի դահլիճում, առավոտյան ժամը 12 և 20 րոպեին:

Ժողովին նախագահում է Տանն կիլիկիս վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա:

Ժողովին ատենապետում է բանաստեղծ Ավետիք Իսահակյանը: Ամենայն Հայոց Ազգրնտիր Տեղակալ Ամենապատիվ Տ. Գեվորգ արքեպիսկոպոսը հայտնում է ժողովականներին փ գիտություն, որ Ամերիկայի արևելյան թեմի պատգամավոր Հայկ Գավոյեյանը նշանակված է ատենապետության անդամ:

Խոսքը տրվում է Տ. Ռուբենի ծ. վարդապետին, որը կարդում է Ազգային-եկեղեցական ժողովի բացման նիստի արձանագրությունը: Ժողովը միաձայն հաստատում է արձանագրությունը: Այնուհետև Տ. Սահակ ավագ քահանա Սահակյանը կարդում է 2-րդ նիստի արձանագրությունը, որը նույնպես միաձայն ընդունվում է ժողովի կողմից:

Ատենապետ Ավետիք Իսահակյանը կարդում է Սովետական Հայաստանի Գերագույն Սովետի նախագահ Մացակ Պետրոսի Պապյանին ուղղված ողջունի գրությունը:

Ժողովը բուն ծախահարությամբ ընդունեց այս ողջունը:

Օրակարգի հաջորդ հարցը Հայ եկեղեցու Սահմանադրության քննությունն է: Ամենապատիվ Տեր Տեղակալն առաջարկում է հետաձգել այդ հարցը, որպեսզի պատգա-

մավորները ժամանակ ունենան կարդալ և ուսումնասիրել:

Ատենապետ Ավետիք Իսահակյանը եզրակտոսի պատգամավոր Ճանիկ Չաքրիին հրավիրում է ժողովի ատենապետությունը շարունակելու:

Ժողովի քննությանն է դրվում ճեմարանի նյութական ապահովության և պահպանության հարցը:

Այս հարցի մասին զեկուցում է Ամենապատիվ Տեր Տեղակալը: Կուսարանելով հոգևոր ճեմարանի ծրագրերը, ուղղությունը, Տ. Տեղակալը նշում է ճեմարանը նյութապես ապահովելու անհրաժեշտությունը: Այնուհետև գերաշնորհ Տ. Արտավազդ արքեպիսկոպոսը կարդում է Հոգևոր ճեմարանի նախահաշիվը: Պարզվում է, որ ճեմարանի տարեկան բյուջեն 40 ուսանող պահելու չհամար կազմում է 1.150.000 ուրբի այն դեպքում, եթե պետական կոոպերատիվ գրներով նյութեր և պարագաներ ստացվեն:

Այնուհետև Ամենապատիվ Տեր Տեղակալը շեշտելով տպարան ունենալու անհրաժեշտությունը եկեղեցական գրքեր, մատենագիրներ հրատարակելու, ինչպես և «էջմիածին» ամսագրի տպագրությունը ապահովելու համար, հայտնում է, որ Սովետական բարեխնամ կառավարությունը թույլատրել է Մայր Աթոռին ունենալ իր սեփական տպարանը:

Երբ Տ. Տեղակալը հայտարարում է, որ այդ առաջին կրոնա-եկեղեցական տպարանի թույլտվությունն է ողջ Սովետական Միության

սահմանների մեջ, դահլիճը թնդում է խանդավառ ծափահարություններից՝ ի պատիվ Սովետական Միության: Հայտարարվում է մի փոքր ընդմիջում: Գազարից հետո, ժողովը վերսկսվում է Ճանիկ Չազրի ատենապետությամբ:

Քննության է դրվում Մայր Աթոռի բուշեի հարցը:

Մտքերի լայն փոխանակությունից հետո միաձայն ընդունվում է Տ. Վազգեն վարդապետի և պատգամավոր Փափաղյանի կազմած բանաձևը:

Այնուհետև Տանն Կիլիկիոն վեհափառ կաթողիկոսը զեկուցում է Մայր Աթոռի Կիլիկիայից Ս. Էջմիածին փոխադրվելու 500-ամյակի տոնակատարության մասին:

Այս խնդրի կապակցությամբ ժողովը լսելով պրոֆ. Աշոտ Աբրահամյանի և ակադեմիկոս Ստեփան Մալխասյանի կողմից առըված լուսաբանությունները, ընդունեց Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա.-ի հետևյալ բանաձևը.

«Անդրադանալով Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Հայրապետության կատարած դերին անցած 500 տարիների ընթացքում, նշանակում է սրել և լուսավորել ժողովրդյան միտքը և գիտակցությունը այդ երկարատև շրջանի մասին. այս մտքով ժողովն օգտակար է համարում և որոշում է 1945—1946 տարին հայտարարել Մայր Աթոռի վերահաստատման հոբելյանական տարի՝ ընդունելով միևնույն ժամանակ Տանն Կիլիկիոն կաթողիկոսության հարատևությունը նույն ժամանակի ընթացքում, որ ոչ միայն չի խանգարել եկեղեցվո միության գաղափարը, այլև նման դեր է կատարել ազգապահպանության դործում իրեն ենթակա թեմերի մեջ, ինչպես և Երուսաղեմի և Կ. Պոլսո պատրիարքությունները»:

Ժողովը բանաձևի քվեարկումը և քննումը հետաձգվում է հաջորդ նիստին: Ժամը 3-ին և 30 րոպեին փակվում է նիստը:

Ն Ի Ս Տ Ձ Ո Ր Ր Ո Ր Կ

Ազգային-եկեղեցական ժողովի շորրորդ նիստը տեղի ունեցավ սույն 1945 թ. հունիսի 20-ին Ճեմարանի դահլիճում:

Ժողովին ներկա էին Սովետական Միության ժողովասովետին կից կրոնական պաշտամունքների հորհրդի նախագահ Ի. Վ. Պոլսոսկին, Սովետական Հայաստանի ժողովասովետին կից հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Հովհաննիսյանը, անգլիական եկեղեցու Քենթրալերի արքեպիսկոպոսարանի ավագ երեց զերհարգելի դոկտոր Հիլեթ Ջոնսոնը:

Ժողովի ատենապետը՝ Ամերիկայի արևել-

յան թեմի պատգամավոր Հայկ Գավուկչյանը խոսքը տալիս է մանդատային հանձնադրվի նախագահ Բելլութի առաջնորդ Տ. Արտավազդ արքեպիսկոպոսին:

Գերաշնորհ Տ. Արտավազդ արքեպիսկոպոսը հայտնում է, որ Մինչև այժմ ժամանել են ժողովին 104 պատգամավոր, որոնցից 31-ը հոգևորականներ են և 73-ը՝ աշխարհականներ:

Նախորդ նիստի որոշման համաձայն ծանուցվում է ժողովին, որ բյուրեղատային հանձնաժողովին մասնակցում են հետևյալ պատգամավորները.

- Կալիֆորնիայի թեմից
- Եգիպտոսի »
- Անգլիայից »
- Բուլղարիայից »
- Թեհրանի »
- Իրանա-հնդկական »
- Վրաստանի »
- Բաքվի »
- Ֆրանսիայի »
- Պաղեստինի »
- Հյուսիսային Կովկասի »
- Շիրակի »
- Այրարատյան »
- Ատրպատականի »

- Հայկ Գավուկչյան
- Ճանիկ Չազր
- Սարգիս Քյուրքչյան
- Գեվորգ Միքառայճյան
- Բժ. Բաղրատ Ավագյան
- Լևոն Տեր-Հովհաննիսյան
- Փաշա Մելիք-Կարապետյան
- Նիկողայոս Խաչատրյան
- Գեղամ Ֆեներճյան
- Պենոն Ճերյան
- Համազասպ Տեր-Հակոբյան
- Վարոս Սարգսյան
- Մինաս Մինասյան
- Բարսեղ Օլուբչյան

Տանն Կիլիկիո
Ռումինիո
Ն. Նախիջևանի

Թեմից
»
»

Ժողովը հանձնարարեց ընտրված հանձնաժողովին ունենալ իր խորհրդակցական նիստը «Բնատուրիստ» հյուրանոցում, երեկոյան ժամը 5-ին:

Տ. Արտավազը արքեպիսկոպոսն առաջարկում է ամսի 22-ին նիստ շունենալ և Օշական մեկնել Մեսրոպ Մաշտոցի տունը կատարելու: Ամենապատիվ Տ. Տեղակալն առաջարկում է Օշականի ուխտագնացությունը հետաձգել Հայրապետական օժուկից հետո:

Ատենապետ Հայկ Գավուկչյանը խնդրում է գերազնորհ Տ. Արտավազը արքեպիսկոպոսին շարունակել ժողովի ատենապետությունը:

Ամենապատիվ Տ. Տեղակալը հայտարարում է, որ Պելյուրի պատգամավոր Մկրտիչ Մարլյանը հանձնառու է եղել Ս. Էջմիածնի տպարանի ամբողջ սարքավորումը իր հաշվով հայթայթել:

Ժողովը բուն ծախհարույթյամբ ընդունում է Մարլյանի նվիրատվությունը:

Ատենապետ Տ. Արտավազը արքեպիսկոպոսը քննության դնելով ճեմարանի պահպանման հարցը հանձնառու եղավ մեկ սանի ծախքերը հոգալ: Այս կապակցությամբ Ամենապատիվ Տ. Տեղակալը հայտնեց, որ յուրաքանչյուր սանի տարեկան ծախքը կազմում է 500 դրլար:

Տանն Կիլիկիո վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ը հայտնում է, որ եզրպետոսից տիրո Կարապետ Մարլյանը մի դումար է կտակել ճեմարանի պահպանման ֆոնդին, որի տարեկան տոկոսը կազմում է 50 եզրպետական ոսկի և որ ճեմարանը իր հարատևության ամբողջ ժամանակաշրջանում ամեն տարի կարող է 50 եզրպետական ոսկի ստանալ: Վեհափառը հայտարարեց, որ առաջին տարվա 50 ոսկին բերել է իր հետ և կհանձնի ամենայն հայտց նորընտիր կաթողիկոսին:

Այս հայտարարությունը ժողովում առաջ բերեց մեծ խանդավառություն, որի հետևանքով հետևյալ հանձնառությունները տեղի ունեցան.

Կալիֆորնիայի թեմը հանձն առավ հոգալ 10 ուսանողի ծախսը, Ամերիկայի արևելյան թեմը՝ նույնպես 10, Իրանա-Հնդկաստանի առաջնորդ Վահան Ժ. վարդապետ Կոստանյանը հայտարարեց, որ իր թեմը հանձն է առնում

Մկրտիչ Մարլյան
Դոքտոր Արտաշես Տիրացույան
Տ.-Մկրտիչ Չորչոփյան:

4 թոշակառու պահել, բացի արդ, հօգուտ ճեմարանի պահպանման հանգանակել է մի երեկույթի միջոցով 17.000 թուման և հանձն առավ 20.000 թուման ևս հանգանակել: Տանն Կիլիկիո կաթողիկոսարանը ճեմարանի համար հատկացնում է տարեկան 5.000 դրլար, եզրպետոսի թեմի առաջնորդ գերազնորհ Մամբրե եպիսկոպոսը խոստացավ իր թեմի միջոցներից հօգուտ ճեմարանի հատկացնել տարեկան 3.000 եզրպետական ոսկի, ակադեմիկոս Ստեփան Մալխասյանը հայտարարեց, որ ինքը կհոգա մեկ թոշակառուի ծախսը, Տ. Սահակ ավագ քահ. Սահակյանը վրաստանի թեմի կողմից հայտարարեց, որ իրենց թեմը կվճարի վեց թոշակառու պահելու ծախսը, Մկրտիչ Մարլյանը հանձն առավ իր անունով պահել մեկ ուսանող, Կալիֆորնիայի թեմի էդեմի տիկնանց Միուսյունը՝ մեկ ուսանող, Ճանիկ Չափրը՝ 2 ուսանող, Օսեն Փափազյանը (եզրպետոս)՝ 1 սան, Ատրպատականի թեմը՝ 1 սան, Ամերիկայի արևելյան թեմի պատգամավոր Հայկ Գավուկչյանը՝ 3 սան:

Այսպիսով ժողովը ավարտված համարեց ճեմարանի պահպանման խնդիրը 40 ուսանողի սահմաններում, ընդ որում սան պահողները հանձնառու եղան թոշակները վճարել վեց տարվա, այսինքն ճեմարանի լրիվ դասընթացի համար (3 դասարան և 3 լսարան):

Այնուհետև ժողովին դրվեց Մայր Աթոռի պահպանության հարցը:

Տանն Կիլիկիո վեհափառ կաթողիկոսն առաջարկեց Մայր Աթոռի պահպանության համար սահմանել «Լուսավորչի լուծա» տուրքը բոլոր եկեղեցիների ամբողջական հասույթների 4 տոկոսի համեմատությամբ: Ժողովը միաձայնությամբ ընդունեց այս առաջարկը:

Այս անընդամենը Բուլղարիայի պատգամավոր Գեորգ Միքթուպչյանը հանձն առավ 5.000 ռուբլի նվիրել Մայր Աթոռի պահպանմանը:

Տանն Կիլիկիո վեհափառ կաթողիկոսը ողջունելով ժողովին ճեմարանի պահպանման խանդավառ հանձնառությունները, առաջարկեց հոգևոր ճեմարանի մատենադարանը եկեղեցական, կրոնական և աստվա-

ծաբանական գրականությունը ճոխացնելու համար ևս խորհել:

Այս հարցի առթիվ Ռոմինիայի փոխ-թեմական Ս. Վազգեն վարդապետը առաջարկեց հետևյալ բանաձևը, որ նույնությամբ ընդունվեց.

«Ժողովը մեծ գոհունակությամբ և երախտագիտությամբ լսելով, որ Սովետական Հայաստանի բարեխնամ կառավարությունը Ս. Էջմիածնին վերադարձուցած է ճանարանի մատենադարանը, փափագ կը հայտնե և առաջարկ կը բերե նորընտիր վեհափառ Հայրապետին սույն մատենադարանը ճոխացնել կրոնական, եկեղեցական և մատենագիտական ուղղությամբ»:

Օրակարգի հաջորդ հարցը Մայր տաճարի նորոգության խնդիրն է: Երոտաղեմի ամենապատիվ պատրիարք Հայրը անհրաժեշտ համարելով Մայր տաճարի վերանորոգումը և այն համարելով անհետաձգելի, կոչ արավ պատգամավորներին այն համարել պատվի խնդիր և հանձն առնել հոգալու պահանջվող ծախսերը:

Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ը ժողովին հաշվետվություններ կայացրեց իր կատարած հանգանակության մասին, երբ ինքը որպես հայրապետության լիազոր նվիրակ գործուղվել էր արտասահման հիշյալ նպատակով: Պարզվեց, որ նա հանգանակել է 37.114 դրոշար, որպիսի գումարը պահ է տրված ապահով դրամատների և հաստատությունների մոտ: Այս ներկայացրեց ժողովին հետևյալ բանաձևը. «Ժողովը լսելով հատուկ զեկուցում Ս. Էջմիածնի տաճարի նորոգության և կատարված հանգանակության մասին, անհրաժեշտ և անհետաձգելի է համարում նորոգման կատարումը: Հաղար վեց հարյուր քառասուն տարվա պատմական այդ կոթողի կյանքը պետք է հարատևել և վայելու վիճակի վերածել, որ հայ ժողովրդի պատիվն է: Բայց ի նկատի ունենալով, որ Մայր Աթոռի վերակազմության և պահպանության, ինչպես և ճեմարանի, տպարանի և այլ կարիքները ժողովրդական հանգանակությամբ և նվերներով պիտի լրացվեն,

այդ պատվաբեր գործի կատարումը կկամենար մեր մեծահարուստ ազգայիններից մեկը կամ մի քանիսը միասին հանձն առնեին: Ուտի և խնդրում է Ամենայն Հայոց նորընտիր և Տանն Կիլիկիո Գարեգին Ա. կաթողիկոսներին հետամուտ լինել և հարաբերության մեջ մտնել, որոնց որ հարկավոր կհամարեն, գործը գլուխ բերելու համար»: Ժողովը անդադրում ծափահարություններով միաձայն ընդունեց նորին վեհափառության բանաձևը:

Ս. Արտավազ արքեպիսկոպոսը առաջարկում է ժողովին հարգանքի խոսք ասել հարգելի տաքտոր Հիլեթ Զոնսունին, որը ներկա լինելով ժողովին, ուշի ուշով հետևում է ժողովի ընթացքին: Ժողովը նրա առաջարկն ընդունում է, որից հետո նա խնդրեց Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ Տեք Տիրան ծ. վարդապետին՝ անդիներն լեզվով հայտնել Զոնսունին ժողովի որոշումը: Ի պատասխան ժողովի ցույց տված ուշադրության, դեկտոր Զոնսունը ասում է հետևյալը.

«Սրբազան հայրեր ի Քրիստոս և քրիստոնյա եղբայրներ: Այս Կիստ պատմական պահին, այս փառավոր ու մեծ եկեղեցու զարթոնքի առթիվ տեսա վերականգնումը այս երկրի ճարտար արվեստի և կրթության հիմա էլ տեսնում եմ այս եկեղեցու վերազարթնումը:

«Քսանվեց տարիներից ի վեր այս երկիրը հառաջադիմում է. Սովետական Միությունը շատ բան պետք է շահի եկեղեցու վերականգնումով: Ձեզ վստահացնում եմ, որ մեր երկիրը շատ մեծ հետաքրքրությամբ հետևում է այս շարժմանը: Անգլիայի մեջ չպիտի գտնվի մի եպիսկոպոս, որը չուզենար ներկա լինել այս պատմական պահին»:

Ի պատասխան այս ելույթի, ամենապատիվ Ս. Տեղակալը հայտնեց, որ իրեն որպես հիշատակ մի նվեր պիտի հանձնի, որը միտ իրեն պիտի հիշեցնի այս դարավոր տաճարը:

Հաջորդ նիստը նշանակվում է հունիսի 21-ին: Ժամը 1-ին 15 րոպեին ժողովը հայտարարվում է փակված:

Ն Ի Ս Տ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ

1945 թ. հունիսի 21-ին, առավոտյան ժամը 12-ին և 30 րոպեին բացվում է Ազգային Եկեղեցական Ժողովի հինգերորդ նիստը:

Ժողովին նախագահում է: Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ը: Կարգավով տերունական աղոթքը և ավուր պատշաճի բարեմաղթությունները, անելուց

հետո նա ժողովը հայտարարում է բացված:

Ատենապետում է բանաստեղծ Ավետիք Իսահակյանը, որի առաջարկով նախ կարդացվում է նախորդ նիստի արձանագրությունը, որը մի շարք ուղղումներից հետո ընդունվում է:

Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ գերապատիվ Տ. Տիրան վարդապետը խոսք է խնդրում մի կարևոր հայտարարություն անելու համար: Ատենապետը խոսքը տալիս է նրան: Նա հայտարարում է, որ մոտ 30.000 դոլլար գումարի չափով նվերներ է բերել Մայր Աթոռին որպես դարպաս:

Ժողովը ծափահարությամբ է ընդունում այս նվերը և բոլորի սիրալիք հայացքներն ուղղվում են հայտարարություն անողին:

Այնուհետև ատենապետը ժողովի քըննարկման է դնում բյուջեի խնդիրը: Այս առթիվ խոսքը տրվում է բյուջետային հանձնաժողովի նախագահ Սարգիս Քյուրքչյանին: Նա կարդում է հանձնաժողովի հետևյալ որոշումը.

«Ա. Հանձնաժողովը միաձայնությամբ որոշում է, որ եկեղեցիների եկամուտներից գանձվող 2 տոկոսի առաջարկը, որ պատգամավորական ժողովի կողմից ընդունվել է արդեն, դորժագրվի:

«Բ. Նկատի ունենալով, որ թեմերից ըստացվելիք եկամուտն անորոշ է և միևնույն ժամանակ էջմիածնի այս տարվա ծախսերը նույնպես անորոշ են, ինչպես նաև կատարվելիք վերանորոգման ծախսերը,— ուստի ժողովը որոշում է նորընտիր կաթողիկոսի իրավասությունը թողնել տնորիննու այդ հարցի լուծումը ըստ իր հայեցակետի, հուսալով, որ հայ ազգը և հայ բարերարները սիրով ընդառաջ պիտի երթան Հայրապետի կողին»:

Լսելով վերոհիշյալ որոշումը, Ամենապատիվ Տ. Տեղակալն առաջարկեց բյուջեի

քննարկումը հետաձգել հաջորդ նիստին, երբ ինքը հնարավորություն կունենա ժողովին ներկայացնել գրավոր կերպով Ս. էջմիածնի համար պահանջվող անհրաժեշտ բյուջեն: Ժողովն ընդունելով այս առաջարկը, հարցի քննարկումը թողեց հաջորդ նիստին:

Մանդատային հանձնաժողովի նախագահ գերաշնորհ Տ. Արտավազդ արքեպիսկոպոսը հայտարարեց, որ մանդատային հանձնաժողովն անհրաժեշտ է դառել ստուգել պատգամավորների անվանացուցակը: Հանձնաժողովի անդամ գերապատիվ Տ. Վաղգեն վարդապետը մեկ առ մեկ կարդաց պատգամավորների անունն ու ազգանունները, որով պարզվեց, որ մինչև այժմ 106 պատգամավոր է ժամանել Ս. էջմիածին և ժողովները տեղի են ունենում նրանց մասնակցությամբ:

Պատգամավոր Ստեփան Մալխասյանը ձայն խնդրելով առաջարկում է ժողովին՝ Մայր տաճարի վերանորոգության հատուկ նախագիծ և նախահաշիվ պատրաստել: Ժողովը միաձայն ընդունում է այս առաջարկը և անցնում Հայոց եկեղեցու Սահմանադրության նախագծի քննությանը: Նախքան այս խնդրի քննության անցնելը, Ամենապատիվ Տ. Տեղակալն իր ելույթով բացատրում է ժողովականներին խնդրի լրջությունը և բացառիկ կարևորությունը և առաջարկում է այն հետաձգել հաջորդ ժողովին, երբ հնարավոր կլինի պատգամավորներին ներկայացնել Սահմանադրության նախագծի վերջնականագիտ ձևակերպված տեքստը:

Ժողովը որոշում է նախագծի քննարկումը հետաձգել:

Ժողովը փակվում է ժամը 2 և 12 չոպեին: Հաջորդ նիստը նշանակվում է հունիսի 22-ին, առավոտյան ժամը 11-ին:

Ն Ի Ս Տ Վ Ն Տ Ե Ր Ո Ր Դ

Ազգային Եկեղեցական Ժողովի 6-րդ նիստն սկսվում է 1945 թ. հունիսի 22-ին, առավոտյան ժամը 12-ին, նախագահությամբ Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ի, որը պատշաճ աղոթքներն ասելուց հետո, ժողովը բացված հայտարարեց:

Ժողովի ատենապետ Ճանիկ Զազրը կարդաց ժողովի հետևյալ օրակարգը.

1. Եկեղեցական Սահմանադրության քննությունն ու վավերացումը:
 2. Ս. էջմիածնի պահպանման բյուջեն և նրա ընդունումն ու հաստատումը:
 3. Ամենայն Հայոց Հայրապետի ընտրություն:
- Ժողովի միահամուռ ցանկությամբ որոշվեց նախ զբաղվել բյուջեի քննությամբ, հետո Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությամբ, իսկ Սահմանադրության քննար-

կումը, որպիս շատ ժամանակ պահանջող հարց, հետաձգել հաշորդ նիստերին:

Տանն Կիլիկիո կաթողիկոս Վեհափառ Գարեգին Ա-ը խոսք առնելով, ժողովի ուշադրութիւնը հրավիրեց այն հանգամանքի վրա, որ ժամանակն է ընտրութեան համար նախապատրաստվելու: Սակայն մի շարք ճառագետներ անհրաժեշտ գտան ընտրութիւնը արագացնել և ընտրական ժողովն սկսել ժամը 3-ին, որպեսզի նախապահութիւնը ժամանակ ունենա ընտրական նախապատրաստութիւնները հոգալ: Չայնիքի ձնշող մեծամասնութեամբ որոշվեց երեկոյան նիստում զբաղվել կաթողիկոսի ընտրութեամբ: Այս որոշումն ընդունելուց հետո ժողովն անցավ օրակարգի առաջին հարցին՝ բյուջեի քննարկմանը:

Խոսք առնելով, Ամենապատիւ Ս. Տեղակալը մանրամասնորեն զեկուցեց անցյալ շորս տարիների ծախքերի ու այն աղբյուրների մասին, որոնցով հոգացվել են Մայր

Աթոռի ծախսերը: Տեղակալ Սրբազանի կարգադրութեամբ Ս. Ռուբեն ծ. վարդապետը կարդաց 1945—46 թ. բյուջեի նախատեսւած իր բոլոր մանրամասնութիւններով, որով Ս. Էջմիածնին ենթակա հիմնարկութիւնների պահպանման ընդհանուր գումարը կազմում է 3.100.000 ուրլի:

Ժողովը լսելով այս հարցի հետ կապված լուսաբանութիւններն ու հավելումները, ընդունեց Ս. Վազգին վարդապետի կազմած հետևյալ բանաձևը.

«Մայր Աթոռի պահպանման համար որոշված 5 տակոս եկեղեցական տուրքին զուգընթաց ժողովը կարող է շարունակել ավանդաբար ընդունված «Լուսավորչի լուսման» հօգուտ Ս. Էջմիածնի անհատական նվիրատուութեան եղանակով»:

Բանաձևն ընդունվեց միաձայն, որից հետո ատենապետը դադար հայտարարեց ժամը 3-ին Մայր տաճարում նիստը վերսկսելու և ընտրութեամբ զբաղվելու համար:

Է Ջ Մ Ի Ա Մ Ի Ն

Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս ընտրելու համար գումարված ժողովն սկսվեց Մայր տաճարում, ժամը 3-ին և 30 րոպեին:

Մայր տաճարի առաջին մասում, դեպի զանգակատունը դրված են նախապահութեան սեղանը և աթոռները, նրա երկու կողմերում դեպի հյուսիս և հարավ շարված են պատգամավորների աթոռները: Իջման սեղանի առաջ, կենտրոնում դրված են կինոնկարահանման ապարատները և տեղավորված նկարիչները նախապահութեան սեղանի աջ և ձախ կողմերում, ինչպես և իջման սեղանի ուղղութեամբ: Տաճարի բոլոր դռները փակ են, բացի հյուսիսային դռնից, որի մոտքը փակված է մեկ փոքրիկ սեղանով, ուր նստած են մանդատային հանձնաժողովի անդամները և միայն մի նեղ արահետ են թողել, որով մեկ պատգամավոր կարող է ներս մտնել:

Մուտքի առաջ կանգնած են պատգամավորներն իրենց պատգամավորական տոմսերով:

Ներս մտնող պատգամավորները տոմսերը ներկայացնում են մանդատային հանձնաժողովին, հատուկ մատչանում ստորագրում իրենց անուն, ազգանունը, ուր և ենըջվում է, ո՞ր թեմի պատգամավոր լինելը և ապա գրավում իրենց տեղերը: Աշխարհական պատգամավորների ստուգումն ու ցու-

ցակազրումն ավարտվելուց հետո գալիս են հոգևորական պատգամավորները, թեմերի առաջնորդները և փոխթեմակալները Ամենապատիւ Ս. Տեղակալի և Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ի առաջնորդութեամբ: Նույն ստուգումն ու ցուցակազրումը կատարվում է նաև նրանց նկատմամբ:

Հոգևորական և աշխարհական պատգամավորները գրավում են իրենց տեղերը: Նախապահական սեղանի կենտրոնում նրստում են Ամենապատիւ Տեղակալ Ս. Գևորգ արքեպիսկոպոսը և վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ը: Նրանց աջ և ձախ կողմերում նստում են հայ եկեղեցու եպիսկոպոսները: Վարդապետները նստում են աշխարհականներին հատկացված տեղերի առաջին շարքում: Տիրում է խորին լուսթիւն: Բոլորը սրտատրոփ սպասում են, թե ե՞րբ և ի՞նչպես կսկսվի ժողովը:

Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ը համապատասխան աղոթքն ասելուց հետո ժողովը հայտարարում է բացված:

Նա հակիրճ, սակայն խիստ սրտառուչ և անկեղծ զգացումներով դիմում է պատգամավորներին, հայտնելով նրանց պատմական այն մեծ ակտի մասին, որ նրանք պիտի վատարեն այսօր Հայաստանյայց եկեղեցու հովվապետ Ամենայն Հայոց Վե-

հասիառ կաթողիկոս ընտրելով: Նա կոչ է անում լուրջ և զգաստ մտտեմալ այս խընդրին, հաշվի առնել նրանց պատասխանատվությունը ժողովրդի առաջ և լսել իրենց խղճի ձայնին:

Ի պատասխան այս կոչի, տիրում է խորին լուռություն, որը հանկարծ բեկվում է 22ունջներով. «այո, այո, խոստանում ենք»: Կրկին թագավորում է լուռություն, բոլորի հայացքներն ուղղված են նախագահության սեղանին:

Հանդիսավոր առաջ է դալիս Եգիպտոսի առաջնորդ գերաշնորհ Մամբրե եպիսկոպոս Սիրունյանը, որն իր օգնականների հետ սկսում է նախընտրական աղոթքը և սաղմոսագրությունը: Անուհետև կարգում է երգման թուղթը բառ առ բառ, որ պատգամավորները կրկնում են հոտնկայտ: Երգվելուց հետո բոլոր աշխարհական պատգամավորները ստորագրում են երգման թուղթը:

Երգման արարողության այս ակտը վավերացվում է երգվեցնող գերաշնորհ Մամբրե եպիսկոպոս Սիրունյանի ստորագրությամբ և երգման արարողության վկաներ՝ Տ. Թուբեն ծ. վարդապետ Դրամբյանի ու Տ. Կարապետ ծ. վարդապետ Թումանյանի ստորագրություններով:

Ժողովի նախագահ Տանն Կիլիկիո Վեհափառ կաթողիկոսն արտասանում է իր վերջին հորդորը. նա ստում է.

«Տանակալի պայմանների մեջ մենք հավաքված ենք այստեղ մեր կաթողիկոսն ընտրելու: Առաջին անգամն է մեր ամբողջ պատմության ընթացքում, որ Տանն Կիլիկիո կաթողիկոսը ներկա է գտնվում կաթողիկոսական ընտրությանը: Այսպիսի ժողովի գումարումը մեր պատմության մեջ հազվագյուտ է. շատ քիչ է պատահել, որ այսպիսի ներկայացուցչություն հավաքված լինի: Ազգային Եկեղեցական ժողովին են ներկայացել հեռավոր Ամերիկայի հայության ներկայացուցիչները, Եգիպտոսի, Անգլիայի, Ֆրանսիայի, Բալկանյան երկրների հայերի պատգամավորները և խորհրդարանի երկրների ու թեմերի առաջնորդներն ու ժողովրդական ընտրյալները: Որոշ տեղեկություններ կան, որ Հարավային Ամերիկայի պատգամավորները նույնպես ճամբա ելած են, բայց տեղի հեռավորության և ճանապարհի դժվարությունների պատճառով դեռ տեղ չեն հասել:

«Արտաքո կարգի նշանակություն ունի

այս համագումարը, որովհետև թե՛ մեր երկրամասի և թե՛ գաղութների այս ներկայացուցչությունը հանդես է բերում մեր եկեղեցու միասնականությունը:

«Երգմամբ սկսեցինք այս ժողովը ազգի և եկեղեցու անունով, կկամենայի, որ ժողովը նվիրական և սրբազան մնար իր պարտավորությունների հանդեպ, կկամենայի այնպիսի ընտրություն կատարվեր, որ ընտրյալը լիներ ազգի ընտրյալը: Կայրթեմ այս դարավոր եկեղեցու սրբազան կամարների տակ, որ Տերը առաջնորդե մեզ և մենք պատասխանատու շմանք մեր խղճի և ժողովրդի առաջ»:

Հայ եկեղեցու ընդունված ավանդական սովորության համաձայն Ազգ. Եկեղեցական ժողովի նախագահ՝ Վեհափառ Գարեգին Ա-ը մեկ առ մեկ կարդաց Հայոց եկեղեցու եպիսկոպոսների անունները, հիշելով ներկաներին և բացականերին և երեք անգամ հարց տվեց պատգամավորներին, արդյոք չկա՞ որևէ անձնավորություն, որ հանձնարարված լինի քվեարկելու որպես ընտրելի: Ժողովականները հայտնեցին, որ նման հանձնարարություն չեն ստացել: Այնուհետև քվեարկության տուփը ստուգվեց և փակվեց ու դրվեց նախագահական սեղանի վրա, որից հետո հայտարարվեց ժողովի կողմից ընդունված զարտնի քվեարկության մասին: Քարտուղարության կողմից Տ. Գրիգոր ծ. վարդապետ Կարապետյանը բարձրաձայն և մեկ առ մեկ կարդաց պատգամավորների անունները և յուրաքանչյուր պատգամավոր մտտեմալով նախագահական սեղանին ստացավ քվեարկության տոմսը, որի վրա պիտի նշանակվեր մեկ թեկնածուի անուն և ակզանունը և նետվեր տուփի մեջ: Վերոհիշյալ ձևով յուրաքանչյուր պատգամավոր տվեց իր քվեն:

Պատգամավորների անուններն ու ազգանունները ստուգելիս, պարզվեց, որ բացակայում են Հալեպի պատգամավոր Արշակ Գալեմբեյանը և Վրաստանի պատգամավորներից Սամվել Շահպարտյանը հիվանդության պատճառով:

Նախագահ վեհափառ կաթողիկոսի հրամանով տուփը բացվեց, ակավեց քվեների ստուգումը:

Խորհրդավոր լուռության մեջ բոլորը լարված ուշադրությամբ հետևում էին քվեների ընթերցմանը. — «Չորեքշաբթյան Սրբազան, «Տեղակալ Գեորգ», Գեորգ արքեպիս-



Նորինաիր Հայրապետը պատգամավորների ուղեկցությամբ Մայր Տաճարից
մեկնում է վեհարան (ընտրությունից հետո)

կոպոս», անընդհատ հնչում էր քվեները կարգացող Մամբրի սրբազանի ձայնը: Կարդալով քվեները նա հանձնում է ժողովի կողմից նշանակված 2 ստուգողներին, որոնք նույնը վավերացնելով և մեկը մյուսին հանձնելով քվեները դարձում են սեղանի վրա:

Ժամը 4-ին 45 րոպեին վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ը հայտնում է քվեարկության արդյունքը. ներկա է 111 պատգամավոր, 110 քվեով: Գեորգ արքեպիսկոպոսը ընտրված է Ամենայն Հայոց կաթողիկոս, այդ մեկ քվեն էլ իրենն է, որ նա տվել է ինձ,— ծիծաղելով հայտնում է վեհափառը: —Ուրեմն ընտրվել է միաձայն,— հայտարարում է վեհափառ Գարեգինը:

Ծափահարությունների և կեցցեհների որոտը թնդացնում է հինավուրց տաճարի դռքեթները: Ամենապատիվ Գեորգ արքեպիսկոպոսը հոգևած է, արցունքները ողողել են նրա դեմքը:

Հուզված են գրեթե բոլոր պատգամավորները, շատերի աչքերն լցված են բերկրանքի և ցնծովյան արցունքներով:

Նորընտիր Հայրապետին մատուցվում է Հայրապետական գավաղանը, տաճարի սեղանների վարդույրները բացվում են, Մայր տաճարի զանգակներն ակսում են դողանջել ավիտելով Հայ հավատացյալներին բերկրության ու ցնծության ավետիսը:

Տաճարը թողում է «Եմիաժինն ի հօրէ՛» շարականի բաղբյրալուր մեղոփաներով: Այն երգում է սղջ պատգամավորությունը հստակաբա:

Շատերն իրենց հոգմուրը չկարողանալով զսպել խմբվում են նորընտիր վեհափառի շուրջը, ամեն մեկն աշխատում է մի վարկյան առաջ համբուրել նրա Ս. Աջը և շնորհավորել նրան:

Վերջապե՛ք բացվում է Մայր տաճարի ավագ դուռը և պատգամավորությունը շարականների երգեցողությամբ և կեցցեհների ցնծազին որոտներով նորընտիր Հայրապետին առաջնորդում է դեպի վեհարան:

Վանքի գտնված հատված խոտն բազմությունը ծափահարությամբ և կեցցեհներով դիմավորում է վեհափառին:

Նրանք շարվում են ճանապարհի երկու կողմում և հանդիսավոր թափոն անցնում է դեպի վեհարան:

Վեհարան տանող սանդուխտների վրայից նորընտիր Հայրապետը իր առաջին օրհնությունն է տալիս ժողովրդին և պատգամավորներին «պահպանի՛ր» կարգում:

Պատգամավորությունը ժամը 5-ին 30 րոպեին ազատում է վեհարանի դավիթը:

Խոտն բազմությունը չի հեռանում վեհարանի բակից և վանքի դավիթից:

Այն ուժը, որ համախմբել է նրանց այստեղ, ոգևորել ու թևեր տվել, ազգային միասնության և մեր պետականության դաշտարան է:

Ուշ դիշերին միա՛յն վանքի շրջապատը դատարկվում է և խորհրդավոր ու անմոռանալի երեկոն իր թևերն է փռում հինավուրց, պատմական վանքի դռքեթներին:

Ն Ի Ս Ս Ե Ո Ռ Ե Ր Ո Ր Կ

1945 թ. հունիսի 25-ին, ցերեկվա ժամը 1-ին 30 րոպեին սկսվում է Ազգային-Նկեղեցական ժողովի երթերուղ նիստը:

Սա Ազգային-Նկեղեցական ժողովի վերջին նիստն է:

Ժողովին նախագահում է նորին Ս. օծություն Ամենայն Հայոց վեհափառ կաթողիկոս Տ. Տ. Գեվորգ Զ-ը, որն յարտասանելով համապատասխան աղոթքները ժողովը հայտարարում է բացված:

Ատենապետում է բանաստեղծ Ավետիք Իսահակյանը: Ատենապետն առաջարկում է բարտուղարությանը կարդալ նախորդ երկու նիստերի արձանագրությունները: Քարտուղարության անդամ Առաքել Գեվորգ Յազըճյանը կարդում է արձանագրությունները, որոնք փոքր հավելումներով ընդունվում են ժողովի կողմից:

Այնուհետև ատենապետն առաջարկում է ժողովին գբաղվել օրակարգի առաջին խընդրով՝ այսինքն Հայ եկեղեցու Սահմանադրության քննությանը և վավերացումով:

Ամենայն Հայոց վեհափառ Հայրապետը ժողովի ուշադրությունը հրավիրելով այդ հարցի վրա ասում է. «Շայն եկեղեցվո Սահմանադրության քննությունն ու վավերացումը պիտի կատարենք այսօր, անշուշտ այն վերջնական չէ, որովհետև, երբ բարոյական ըմբռնումները վերածվում են իրավականի, նրանք միշտ փիճաբանության առարկա են դառնում, ուստի խնդրում եմ խստապահանջ չլինել և չխորանալ մանրամասնությունների մեջ»:

Գերաշնորհ Մամբրե եպիսկոպոս Սիրոնյանի առաջարկով քարտուղարության անդամ բարձրապատիվ Տ. Գրիգոր ծ. Վարդապետը կարդում է նախագահության և Ատենապետության կողմից նախօրոք սրբազարկած Հայոց եկեղեցու Սահմանադրության նախագիծը:

Նախագծի ընթերցումն ավարտելուց հետո, ինչպես հոգևորական, նույնպես աշխարհական պատգամավորները մի շարք դիտողություններ արին, որից հետո Ամենայն Հայոց նորընտիր վեհափառ կաթողիկոս Գեորգ Զ-ը առաջարկեց հետևյալը, որ ժողովն ընդունեց միաձայնությամբ:

Ընկառի առնելով, որ Սահմանադրության մեջ արծարծված միասնականության գաղափարը, ինչպես նաև Կիլիկիո կաթողիկոսականության և պատրիարքական ղույն աթոռների փոխհարաբերությունները ենթարկված են հոգևորականների նախապատրաստական ժողովի քննության և որոշ համաձայնություն է գոյացած, այլ և նկատի ունենալով, որ միասնականության դաղափարը նոր է հանդես բերված և Աթոռների փոխհարաբերությունները դարձած են իրավականի, որ շատ դժվարին գործ է, ինչպես նաև նկատի առնելով, որ ներկա նախագիծը վերջնական բնույթ չունի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնգակով պիտի առաջարկվի խմբագրված Սահմանադրության գործադրությունը ժամանակավորապես և գործնական բովից անցնելի հետո, հաջորդ Ազգային եկեղեցական ժողովի կողմից վերջնականապես պիտի խմբագրվի և հաստատվի, ուստի կառաջարկվի Էներկա նախագիծն ընդունել անփոփոխ: Այնուհետև ատենապետի հայտարարության համաձայն տեղի ունեցավ կարճատև ընդմիջում:

Ընդմիջումից հետո նիստը վերսկսվեց և ատենապետ Ավետիք Իսահակյանը կարդաց Կ. Պոլսի պատգամավորներից՝ Երվանդ Ինճեքյանի և Թորոս Ազատյանի ներկայացրած հետևյալ գրությունը. Ընկառի ունենալով, որ մեր կամքն անկախ պատճառներով Թուրքիո Հայոց պատգամավորությունը չկարողացավ ժամանակին հասնել, նկատի ունենալով, որ մեր պատգամավորության միակամ ընտրելին՝ որպես արժանավորագույն թեկնածու մեր Հայաստան ժամանումն առաջ ալ միեկնություն էր, կը խնդրենք Ազգային—եկեղեցական ժողովին, որ մեր վեց ձայները վեհափառ Տ. Տ. Գե-

վորդ Զ Սրբազան կաթողիկոսն ընտրող 110 ամբողջական ձայներուն միացվեն և ըստ այնմ մտցուի այս պարագան ժողովի արձանագրությանց մեջ»: Այս առաջարկն ընդունվեց միաձայնությամբ:

Հալեպի պատգամավոր Արշակ Գալեմբարյանը, որ հիվանդության պատճառով չեր կարողացել ներկա լինել Հայրապետական ընտրությանը, խնդրեց ժողովին իր քվեն ևս ավելացնել Ամենայն Հայոց Հայրապետի միաձայն քվեների վրա: Ժողովի կողմից սույն առաջարկն ընդունվեց միաձայն:

Այնուհետև նորին Ս. Օծուխուն վեհափառ Կաթողիկոսը առաջարկում է ժողովին մի հանձնաժողով ընտրել Սովետական Միության հանձարեղ առաջնորդ Մարշալ Ստալինին ուղարկելիք ղեկավարացիան շահելու և խմբագրելու: Այս խնդրի շուրջը տեղի ունեցած կարծիքների փոխանակությունից հետո Տանն Կիլիկիո վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ի առաջարկով որոշվեց ղեկավարացիայի պատրաստումն ու խմբագրումը թողնել նախագահության և ատենապետության հաջորդ նիստին ներկայացնելու համար:

Օրակարգի հաջորդ հարցը Գերագույն հոգևոր Խորհրդի ընտրությունն էր: Նախագահության և ատենապետության կողմից առաջարկվեցին հոգևորականներ Տ. Ռուբեն ծ. վարդապետ Կոստանյան, Տ. Ներսես ծ. վարդապետ Աբրահամյան, Տ. Եղիշե վարդապետ Հարությունյան, Տ. Կարապետ ծ. վարդապետ Թովմանյան (անձնափոխանորդ), աշխարհականներ՝ պրոֆ. դոկտոր Ստեփան Մալխասյան, պրոֆ. դոկտ. Աշոտ Աբրահամյան, դասախոս՝ Մինաս Մինասյան, հոգևոր ճեմարանի ապագա տեսուչը և Ստեփան Կամսարական (անձնափոխանորդ): Ժողովը միաձայնությամբ ընդունեց հոգևոր Խորհրդի վերոհիշյալ կազմը:

Սակայն պրոֆ. Աշոտ Աբրահամյանը չափազանց զգալիված լինելու և առողջական վիճակի պատճառով հրաժարվեց Գերագույն Հոգևոր Խորհրդին մասնակցելուց: Ժողովը նրա փոխարեն ընտրեց Երվանդ Շահազիզին:

Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Տ. Տիրան ծ. վարդապետի այն հարցումին՝ թե ժողովը նկատի պիտի առնի՝ եկեղեցու բարեկարգության հարցը, վեհափառ

Հայրապետը պատասխանեց, թե իր շորտարվա տեղակալական կործոններով առթիվ տված զեկուցման մեջ արդեն հայտարարել է, որ Ազգային-եկեղեցական ներկա ժողովը բարեկարգության հարցով ըզբաղվելու հնարավորություն չունի, թե՛ ժամանակի սղության և թե՛ այլ պատճառներով:

Այնուհետև ժողովի ատենապետը հայտարարում է, որ Լոնդոնի Աբգարյան տրեստի պատգամավոր Սարգիս Քյուրքչյանը իր կնքահայրության առթիվ (հայրապետական օժման) 2.000 անգլիական ոսկի է նվիրում Ս. Էջմիածնում մեղվաբուծական անասնություն սիսելու նպատակով, որն ի հիշատակ իր հանգուցյալ մայր Նարգուհիի պիտի կոչվի «Նարգուհի Նազարեթ Քյուրքչյան մեղվաբուծարան»: Ժողովը ծափահարություններով իր գոհունակությունը հայտնեց այս նախաձեռնության առթիվ, որից հետո ժողովը ժամը 3-ին 15 րոպեին փակվեց, երեկոյան ժամը 7-ին վերսիսելու համար:

Նիստը վերսկսվեց երեկոյան ժամը 7-ին և 45 րոպեին: Նախագահում է Նորին Ս. Օժովյուն վեհափառ Հայրապետը, ատենապետում է բանաստեղծ Ավետիք Իսահայանը:

Վեհափառ Հայրապետը խոսք անելով, հարյունեց. «Ուրախությամբ հայտարարում եմ ի գիտություն ժողովի, որ մեր շարքերում է գտնվում ազգային բարեգործ Իրանա-Հնդկաստանի թեմից՝ պ. Ռոման Բողդանի Իսայելը, որը թեհրանում 600.000 թուման ծախսելով կառուցել է մի եկեղեցի. նա նվիրել է Կարմիր Բանակին 250.000 թուման, Բաղրամյանի անվան տանկային շարասյան օգտին նվիրել է 500.000 թուման:

«Ներկայումս Երևանում կառուցելու է մի մանկատուն պատերազմի ընթացքում զոհված զինվորների երեխաների համար, հատկացնելով այդ նպատակի իրազորմանը 250.000 թուման, նաև Ամենայն Հայոց Հայրապետի քնտրության և օժման առթիվ նվիրել է ամերիկյան մի շքեղ ավտոմեքենա, ուստի առաջարկում է ժողովին նրան ընդունել նախաբանության մեջ:

Ժողովը բուն ծափահարություններով իր հավանությունը տվեց այս առաջարկին:

Կարդացվում է Սովետական Միության Գերագույն Սովետի Նախագահության նախագահ Ի. Կալինինին ուղղված հեռագիրը,

որը ընդունվում է խանդավառ ծափահարություններով:

Ամերիկայի արևելյան թեմի առաջնորդ Տ. Տիրան ծ. վարդապետն ի դիմաց պատգամավորության կարգաց հետևյալ ուղերձը.

«Մենք Ազգային եկեղեցական ժողովուսնդամներս, աթուակալներ, թեմական առաջնորդներ, հոգևորական և աշխարհական պատգամավորներ եկած ու հավաքված ըլլալով Էջմիածնի Ս. Տաճարի նվիրական հովանիին ներքև, Հայաստանի, Սովետական Միության և արտասահմանի զանազան երկիրներու թեմերեն, զեղուն սրտով կը հայտնենք Ձեր վեհափառության մեր հրախառնական տղայունները այն իմաստուն և քաջարի ղեկավարության համար, որով առաջնորդեցիք մեր սուրբ եկեղեցին Ձեր երջանկահիշատակ նախորդին վախճանումեն ի վեր, ամենաօգվարին պայմաններու ներքև և Հայրենական մեծ պատերազմի ընթացքին, և ի գլուխ բուսնդակ հայ հավատացյալներու Ձեր բաժինը բերիք փառապանծ հաղթանակի համար կերտված արժանի զոհաբերության:

«Շնորհակալ ենք նաև այն զգոն և հայրական ղեկավարության համար, որով այս ժողովը արդունավորեցիք և արժեցուցիք անոր պատմական նշանակությունը:

«Մենք միարան և առանց վերապահության կհայտնենք մեր որդիական վստահությունը նաև առ այն, որ Դուք ապագային ևս զորացած մեր ամենուն սիրովը և մանավանդ Աստուծո ամենաբանական ողորմությամբ պիտի տանիք հայ եկեղեցվո նավը ուղիղ և ապահով գծով: Եվ վերջապես ամենքս և յուրաքանչյուրս անխտիր այս սրբազան վայրին մեջ համդիսավորապես կը խոստանանք Ձեր վեհափառության, իբրև մեր սուրբ եկեղեցվո պետին և ղեկավարողին, մեր հոտի վերին հովիին, մեր անկեղծ և բոլորանվեր հավատարմությունը և հնազանդությունը հայցելով մեր Տեր Հիսուս Քրիստոսեն, որ զորացնե Ձեր բազուկը և առաջնորդե Ձեզ իր սուրբ հոգվույն իմաստությամբ և շնորհե Ձեզ երկար և արդունավոր կյանք Ձեր առաքելական Աթոռին վերա»:

Ժողովը միահամուռ և անվերջ ծափահարություններով ընդունեց Ամենայն Հայոց վեհափառ կաթողիկոսին ուղղված այս ուղերձը:

Չայն խնդրելով պրոֆեսոր Արարատ Ղա-

րիբայնը հարց առաջադրեց, որ Աղգալին Եկեղեցական ժողովը իր վերաբերմունքն արտահայտի վատիկանի բռնած ընթացքի մասին՝ հանդես գալիս ստական Գերմանիայի դեկավարներին:

Ժողովը լսելով նրա բացատրությունները և լուսաբանությունները շոշափված հարցի առթիվ նպատակահարմար համարեց այդ խնդրի ձևակերպումը թողնել վեհափառ Հայրապետներին: Այս առաջարկն ընդունվեց միաձայն:

Այնուհետև խոսք տրվեց ժողովական պատգամավոր առաջնորդներին՝ ամենապագագույնին՝ Հունաստանի առաջնորդ Տ. Կարապետ արքեպիսկոպոս Մազումյանին: Նա խիստ հուզված ներկայացրեց այն հրակա աշխատանքը, որ կատարել է Ազգիս նորընտիր վեհափառ Հայրապետը բարձրորեն գնահատելի վարչագիտությամբ: Արտաքին բարեմաղթություններով արևշատություն մաղթեց Սովետական Միության հանձարեղ առաջնորդ Մեծ ՍՍԱՄԻՆԻՆ, Հայաստանի ՍՍՄ Գերագույն Սովետի նախագահ Մացակ ՊԱՊՅԱՆԻՆ:

Ի դիմաց աշխարհական պատգամավորների խոսք փնդրեց հոժեմն Բամբազյանը, որը պատկերավոր ներկայացրեց հայ եկեղեցու միասնականության իրողությունը: Նա ասաց. «Հիացմունքով ու պատկառանքով նայենք սա փառավոր տեսարանին, երկու կաթողիկոսներ քով քովի նստած, որ երբեք եղած չէ: Գիտակցենք այս նշանակալից պահուն արժեքը: Մեր հայրերը բախտ շունեցան հանդիսատես ըլլալու նման հուզիչ ու ներշնչող իրողության մը:

Կեցցե մեր Սովետական Հայաստանը իր բարեփոխում և շինարար կառավարությամբ: Կեցցեն մեր վեհափառները»:

Ի դիմաց Հայաստանի ժողովրդի հանդես եկավ պրոֆ. Արարատ Ղարիբջանը: Նա ասաց հետևյալը. «Հայ եկեղեցին կատարեց իր պատմական հազվագյուտ դերը Ձեր բուրբ միջոցով հայ ժողովուրդն այժմ գտնվում է իր հողի վրա: Հողեպես հրձվում եմ, տեսնելով, որ այս ժողովը կարողացավ հանդես բերել միասնականություն հօգուտ հայ ժողովրդի և եկեղեցու Տանն Կիլիկիո վեհափառ կաթողիկոսն այս միասնականության կենդանի օրինակը հանդիսացավ իր խորը հմտությամբ և բուն հայրենասիրությամբ: Հսկա հայրենասիրություն կա նրա փոքր մարմնի մեջ

և այդ հայրենասիրության կրակը տարածվում է ամեն կողմ:

«Մեր նորընտիր Հայրապետ Գևորգ Զ-ը բարձրացրեց մեր ազգի արժեքը, եկեղեցու պատիվը, արդարության և հայրենասիրության ճանապարհով: Թող ողջ գաղութահայրենային լինի և փիտենա, որ իր Հայրենիքի մեջ մտածում են, խոսում ու գործում են բազմահազար մարդիկ և ստեղծագործում են թե իրենց և թե գաղութահայրի համար:

«Մեր նորընտիր վեհափառը, որ օրհնեց Հայաստանի այս մասը, հավատում եմ, որ նա վաղը պիտի օրհնի նաև մյուս մասը»:

«Տարեք Ձեզ հետ մեր ժողովրդի անալլալ սերը մեր եղբայրներին, բարով եկաք, հազար բարի, միշտ եկե՛ք, մեր սրտի մեջ լայն տեղ ունեք» (բուն ծափեր):

Մայր Աթոռի միաբանություն կողմից ողջերթի խոսք է ուղղում պատգամավորներին Ս. Էջմիածնի միաբան Տ. Ռուբեն ծ. վարդապետ Դրամբյանը:

Որդիական անխառն լղացմամբ շնորհավորելով նորընտիր Հայրապետի գահակալությունը, նա գտնում է, որ Մայր Աթոռ էլ ավելի վառ կպահի հայ ժողովրդի միասնության ջահը, համարելով այն իր գործունեության գերագույն նպատակը: Սրտագին բարեմաղթություններով դրվատեց Սովետական Միության և Հայաստանի կառավարությունների բարյացակամությունը դեպի Մայր Աթոռը: Նորընտիր Հայրապետին երկար և արդյունաշատ կյանք մաղթելով նա վերջացրեց իր խոսքը:

Այնուհետև նորընտիր վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գեվորգ Զ-ը արտասանեց Ազգային Եկեղեցական ժողովի փակման հետևյալ ճառը.

«Շնորհակալություն բոլոր նառախոսներին:

«Պատգամավոր մեր զավակներն իրենց խոհակա՞ն գործերով և իմաստուն խոսքերով հմայեցին մեզի: Ժողովը նույն տվեց շատ քնդգծելի կողմեր: |

«Տեսնում եմ թայ ժողովրդի դեպի Ս. Էջմիածինն խնեցած լսեմուն սերը. այդ սերն է, որ Ձեզ հետավոր վայրերից խաղանորդել է մինչև այստեղ, առ ոչինչ դարձնելով նախապահորդական նեղություններն ու դժվարությունները:

«Հայ Եկեղեցին ցարդ բարոյական տեսակետով միասնական էր, բայց իրավական

տեսակետով իշ: Տանն Կիլիկիո վեհափառ կարողիկոսը Եկատի շտաբում Երկար համբողջության հետ կապված յժվարությունները անձամբ էկավ իբրև ուխտավոր և նշմարիտ ու դրական միասնականության հիմք դրավ:

«Այսօր տեսա համերաշխության ոգին վերադարձած մեր մեջ, որի համար պիտի աղոթեմ, որ այն մշտնջենական դառնա:

«Տեսա Ձեր բուն ղգացմունքը դեպի Ս. Էջմիածինը և դեպի մեր սիրելի Հայրենիքը, որ բարձր վերելքներով փառավորվում է: Պիտի աղոթեմ Հայրենիքի և պետության զորացման համար:

«Դուք տեսաք, թե ինչպիսի համերաշխություն կա պետության և եկեղեցու միջև և ինչպիսի ազնիվ զգացումներ իրար հանդեպ: Տեսաք, թե ինչպիսի դժվարություններ հարված են և ինչպիսի փառաշարժություն կա մեր Հայրենիքի մեջ: Այս քոլորը տեղի են ունենում և իրականում են թուս մեծ ժողովրդի և նրա մեծ պետության միջոցով:

«Օրհնում եմ ռուս մեծ ժողովրդին և նրա Մեծ Առաջնորդ Մարշալ ՍՏԱՍԻՆԻՆ:

«Օրհնում եմ և Ձեզ բոլորիդ, օրհնում եմ հայ ժողովրդին, որ Ձեզ նման խոհական ներկայացուցիչներ ընտրեց:

Վերջացնելով իր ճառը, նորին Սուրբ Օծոթյունը արտասանեց տերունական աղոթքը և Հայրապետական «պահպանիչ» կարգաց:


Այնուհետև Համազգային Եկեղեց. Ժողովի պատգամավոր Արարատ Ղարիբջանը կարգաց ժողովի փակման առթիվ ՍՍԻ Միութեան հանձարեղ Առաջնորդ Մեծ ՍՏԱՍԻՆԻՆ ուղղած հեռագիրը, որ ընդունվեց երկարատև ու խանդավառ ծափահարություններով:

Ժողովի ատենապետ ակադեմիկոս Ավետիք Իսահակյանը հայտարարեց, թե 1945 թվի հունիսի 16-ին բացված Ազգային Եկեղեցական Ժողովը սպառել է իր օրակարգի բոլոր հարցերը և հետևապես այն փակված է հայտարարվում:

Կեցցենների խլացուցիչ աղաղակը ընդգրկեց ողջ դահլիճը: Ժողովականները երկար ժամանակ շղաղարող ծափահարություններ և հոտնկայս իրենց շերտ զգացմունքներն էին արտահայտում դեպի Մայր Աթոռը: Երբ վեհափառը ոտքի կանգնեց ժողովարարահից դուրս գալու դիտավորությամբ՝ ջերմագին բացականչություններն ու ծափահարությունները ուղղված նորին Սուրբ Օծոթյանը էլ ավելի սաստկացան և շքախումբը ժողովրդի բերկրալից սիրով շարժվեց առաջ՝ վեհին առաջնորդելով դեպի վեհարան:

Հունիսի 25-ին, երկուշաբթի, երեկոյան ժամը 10-ից 15 ժամ անց փակվեց Ազգային Եկեղեցական Ժողովը:

Ռուբեն Եպիսկոպոս ԴԲԱՄԲՅԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի ՕՇՄԱՆ ՀԱՆԳԵՍԸ

1945 թ. հունիս 24. Ս. Էջմիածին: Վաղ առաջնորդանից վանքի դավիթն ու շրջապատն են հավաքվում ժողովրդական զանգվածները:

Այսօր հայ հավատացյալի մեծազույն տոնն է, այսօր տեղի է ունենալու Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոսի օծումը:

Կաթողիկոսական օծումը մեր ժողովուրդը իր պատմական ավանդույթուններով սրբազործել է որպես ազգային տոն, որպես հայ եկեղեցու երջանկության և հավերժության տոնը:

Այսօր վանքը այլ տեսք ունի: Նրա վեհապանծ դմբեթներից արտասովոր ուրախության և հիացքի հեղեղներ են հոսում, որոնք միախառնվելով դանդակատան քաղցրալուր երգերի հետ, դրվելով նրանց անուշ զողանջները, ցնծությամբ սփռվում են հնադարյան վանքի չորս կողմը, համբույրներ և նոր շունչ ու ոգի՝ սլարվելով դարերից ի վեր կյանք ու արև բերող քարերին ու հողերին:

Հանկարծ դավթում խոնված ամբողջ ալեկոծվող ծովի նման այս ու այն կողմ է սփռվում և կեցցեների ու ծափահարությունների սկանջ խլացնող թնդյունն ու որոտը իրենց ուրախությունն են ազդարարում:

Ավտոնների ճոճչյունը և սուլոցը ազդարարում են համազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների ժամանումը:

Կեցցեների խլացուցիչ տարափի տակ նրբանք մտնում են վեհաբանի բակը:

Ժամի 11-ն է: Ձանդակատնից զողանջում են զանգերը, որոնք ազդարարում են սրբազան արարողության սկզբնավորումը:

Վեհաբանում զգեստավորված են նորընտիր Հայրապետը, Տանն Կիրիկիո՝ վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ը, եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները և սպասում են աղբարար զողանջին:

Վանքի միաբանությունը, չքաններից Ս. Էջմիածին ժամանած քահանաներն ու սարկավազները, դպիրներն ու աշակերտները տոնական զգեստների շտապուցիչ գեղեցկությամբ սպասում են առաջին կոչնակին: Երկարածիգ, երկչարք թափորի մի

ծայրը վեհաբանումն է և մյուս ծայրը Մայր տաճարի զլխավոր մուտքի մտ: Նրանց երկուստեք շրջապատել է ժողովուրդը:

Վերջապես «Հրաշափառ աստված» հոգեցունց շարականի հնչյունները դրդապնում են հնամյա վեհաբանի կամարները: Օղբ լցվում է իմաստուն խորհրդավորությամբ և երկյուղածության ու նվիրածության զգացումով:

Թափորը շարվում է: Ամենից առաջ գնում են ջահակիր ու խաչվառակիր շարքերը, նրանց հետևում են քահանաները, միաբանությունը, վերջապես դալիս ևն զգեստավորված եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները՝ մեր եկեղեցու բարձրագույն տեսուչներն ու առաջնորդները Տանն Կիրիկիո վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ի զլխավորությամբ:

Նորընտիր Հայրապետին դեպի Մայր տաճար են առաջնորդում կաթողիկոսական ամառնովանու տակ, սր կրում են չորս քահանաներ: Ամսհոյանու ոսկեթել զարդանկարները արևի վառ ճառագայթների տակ էլ ավելի վեհույթյուն են ստանում զեղեցկության հեղեղներ սփռելով չորս կողմը:


Նորընտիր Հայրապետի առաջից չորս վարդապետներ տանում են կաթողիկոսական բողբ:

Զգացումների, ասրումների, հոգեկան հույզերի ալեկոծումներն են, որ փոխարինում են միմյանց, և մարդկային հոգին ազահարար կլանելով դեղեկցության այդ հմայքը չի հագնում, ստեղծված հիասքանչումից: Մինչ զանգերը զողանջում են անդադար, նրանց քաղցրահնչյուն զողանջների մեջ լսում են հավերժության, Մայր աթոռի վեհափառության, հայ եկեղեցու միասնության երգը:

Ահա թե ինչու այնքան կախարդիչ են բողբները և վսեմ՝ նրանց հնչյունները:

Դուք դալով վեհաբանի դարբասից, երդեցիկ խումբը հնչեցնում է «Ուրախ լիբ, սուրբ եկեղեցի» շարականը:

Գավթում ժողովրդական զանգվածների լուրթյունը էլ ավելի քաղցրություն է ներշնչում անմահական երգի թռիչքներին և հաղթական թափորը մուտք է գործում:



Նորնաիր Հայրապետին առաջնորդում են դեպի Մայր Տաճար

Մայր Տաճարը: Երկյուղածությամբ հեռեմ նալում Վեհին դիտելու: Որքա՛ն փոխված է նա: Այսօր փառքով օծում են նրա սպիտակահեր դուխը և երևի այդ զգացումն է այդպես ուժգին կերպով անդրադարձել նրա հոգու և սրտի վրա, նրան սեղմել, ձգել իր ճակատադրական օղակներէ մեջ: Բայց նա քայլում է ինքնավստահ, հպարտ և նրա խոհուն աչքերը լի են ինչ որ մտքերով:

Չգուցե եմ, որ նա լիակատար չափով ապրում է պատասխանատուության, պարտքի դիտակցութեան վերջին փոթորիկները: Թ՛վում է, թե լսում եմ նրա սրտի արտփները, զգում նրան լափող կրակի ջերմութունը և կարգում նրա սրտին դրողմած կյանքի արձանագրութունը: «Ժողովրդի համար, հանուն ժողովրդի, Հայրենիքի համար, հանուն Հայրենիքի»:

Ահա կանգնած ենք Իջման սեղանի առաջ:

Նա սովորական աղոթքները մըմնջալով լիանում է ձեռքերը սեղան բարձրանալու և ս. պատարապ մատուցանելու:

Սակայն նրա պարզ կեցվածքը, աղոթքն ասելը և շարժ ու ձևերն այն չեն, ինչ որ տեսել էի հաճախ: Այսօր նա արտասովոր մարդ է, ամեն մի քայլի հետ լսելով է մի նորութուն, որ լի է երկյուղածությամբ և հավատով, նվիրվածությամբ և հաստատակամությամբ, աստվածապաշտությամբ և դեպի հայրենիքն ու ժողովուրդն ունեցած անհատնում սիրով ու վճռականությամբ:

Արտասովոր վեհութուն է ստանում Մայր սեղանը, երբ աչտեղ են բարձրանում նորընտիր Հայրապետը, Տանն Կիլիկիո վեհափառ կաթողիկոս Գարեգին Ա-ը, եպիսկոպոսներն ու արքեպիսկոպոսները:

Ահա հայ եկեղեցու երկու ականավոր գործիչները, նրա հիմնական սյուները, երկու կաթողիկոսները: Ահա նրա լավադույն որդիները դեպի հայ ժողովուրդն ունեցած անհուն սիրով և նվիրվածությամբ լեցուն:

Միաբանները և հույեղբայրական պատգամավորները բունում են իրենց սովորական տեղերը:

Համազգային եկեղեցական ժողովի պատգամավորները տեղ են դրավում այլազ սեղանին դեմ առ դեմ, աջ ու ձախ դասերում:

Իրենց հատուկ աթոռներն են դրավում պետական ներկայացուցիչները, ՍՍԻ Միու-

թյան Ժողկոմսովետին կից կրոնական պաշտամունքի դործերի Պորճրդի նախագահ Ի. Վ. Պոլյանսկին և Հայկական ՍՍԻ Ժողկոմսովետին կից հայ եկեղեցու դործերի խորճրդի նախագահ Ս. Ն. Հովհաննիսյանը:

Մայր տաճարն են մտնում հյուրերը, ժողովուրդն ու ուխտավորները խիստ օրինակելի կարգապահությամբ: Լուսթյունը իր կախարդիչ հմայքներն է տարածում բոլորի վրա, յուրաքանչյուրն զգում է այս վեհ ժամի պատմական նշանակութունը և անձնատուր է եղել իր հոգեկան ապրումներին, իրեն ներքին զգացումներին:

Տաճարը լցված է ինչ որ խորհրդավոր, հոգեգրավ անդորրությամբ:

Այս հմայիչ վեհութունը աղոթքների անընդհատ ելևէջներով ու սրտադին մըրմունջներով հետզհետե վարակում է ամենքին ողեչունչ զրացումների հեղեղներ ստեղծելով:

Երգում է քառաձայն խումբը և հինավուրց վանքի դմբեթները արձագանքելով երգում են Մայր Աթոռի, Ս. Իջմիածնի հովիթժականութեան անմահ շարականները, որոնք միաձուլվում են զանգերի քաղցրահնչյուն նվագների հետ:

Վերջապես պատարադին վեհափառ Հայրապետն արտասանում է. «Զի քո է կարողութիւն և զորութիւն և փառք յաւիտյանս ամեն» աղոթքը:

Կրկին թագավորում է վեհափառ լուսթյունը: Բոլորի հայացքները տեւալում են դեպի Մայր սեղանը:

Ամենայն հայոց վեհափառ Հայրապետը զրացված և սրտառոշ տոնով կարգում է Հայրապետական դահին հավատարիմ մնալու երդման աղոթքը:

Նա ծունկի է եկել Մայր սեղանի առաջ և իր երգումն է տալիս Հայ եկեղեցուն, հայ ժողովրդին և Լուսավորչի դահին:


Հնգիչ է այս արարողութունը: Դարերից ի վեր պատասխանատուության այս վեհազույն զրացումներով է հայ եկեղեցին հովանավորել իր ժողովրդին՝ նրան հաղթանակից հաղթանակ առաջնորդելով: Դարերից դար բազմաթիվ կաթողիկոսներ են երգվել և հավատարմության, նվիրվածութեան ուխտը կատարել հայ ժողովրդի առաջ և մնացել իրենց երդման և ուխտի մեջ անսասան ու անդրդվելի:

Այսպես է անցել մեր կաթողիկոսութունը իր պատմական ուղին:

Երգումից հետո տաքի է կանգնում Վե-



Ղեկավար Հայրապետի և օժուկը :



Վեհափառ Հայաստանի օժուովց կեսն արաջնաբարձ էն դեպի վեհափառ

հափառը և շարունակում է ս. պատարա-
ղը:

Ահա վերաբերումը կատարող եպիսկոպո-
սը արտասանում է «Հալատամբը» և նրա
սրտատուչ աղոթքի երեկնները տարածվում
են ողջ տաճարում:

«Հալատամբից» հետո վերսկսվում է
օժման արարողությունը: Վեհափառի դեմ-
քը դեպի ժողովուրդը դարձրած, ձեռքերը
բարձրացրած և ծունկի եկած աղոթում է:
Գարեգին Ա-ին վեհափառ կաթողիկոսը
կարդում է համապատասխան աղոթքները:
Հուզվելով լի վեհափառ Հայրապետի
սիրտը բարբախում է, նրա շրթունքներն
անբնդհատ շարժվում են, երևի նա իր հո-
գեկան այնպիսի թրջումների ամենամիտրա-
կան աղոթքներն է մրմնջում բռնեյախ:

Հանդիսավոր վեհաթիվում իր դապաթ-
նակետին է հասնում: Երբ վեհափառ Գա-
րեգին Ա-ը արտասանում է «Ասաքելոյ ա-
ղանոյ» օրհներգությունը և սրբալույս
մյուսունով սկսում են օժել նրան:

Հուզված է նորընտիր կաթողիկոսը, նա
չի կարողանում դապել իր ներքին, հոգե-
կան ապրումների հեղեղները և նրա խո-
սուն աչքերից սկսում են դուրս թայթքել
մարդարանման արտասուքները:

Նա հենց այս պահից զգում է այն ծան-
րությունը, որ զնում են նրա ուսերին:

Գիտակցությունը և ինքնաճանաչությունը
նր վոթորկել են նրան:

Կրկին հնչում են օժման աղոթքները և

ահա նրա դիմին են փռում հայրապետա-
կան քոչը:

Վեհափառը օրհնում և խաչակնքում է
բոլորին և սուր շարունակում ս. պատարա-
ղը:

Պատարագն ավարտվում է:

Հոգեորականների և աշխարհական պատ-
գամավորների թափորը վեհին առաջնոր-
դում է դեպի վեհարան:

Սուսն բազմությունը բռնել է ճանա-
պարհը և սրտային ողջուններով դիմա-
վորում է իր նորած կաթողիկոսին: Վե-
հափառը խաչակնքում է նրանց և օրհ-
նում: Նա արդեն վեհարանումն է:

Նա բազմած է կաթողիկոսական դահին:
Նրա աջ և ձախ կողքին կանգնած են դա-
վադանակիրներն ու կաթողիկոսական խոր-
հրդանշանները բռնողները:

Կանոնավոր հերթականությամբ Նորին
Սուրբ Օծություն Աջը համբուրելով շնորհա-
վորում են նրա դահակալությունը նախ հո-
գեորականները, ապա աշխարհական պատ-
գամավորները և հետո հյուրերը:

Ողջունի ճասերը հակերճ են, ամփոփ,
բայց սրտատուչ:

Շատերը ուրախությունից արտասվում
են:

Վերջապես հայ եկեղեցու Լուսավորչի
թավուր դահի վրա բազմած է արժանրն-
ախի Հայրապետը՝ վեհափառ Գևորգ VI-ը:
Ռ. Վ.

ՃԱՆԿԵՐՈՒՅԹ Ի ՊԱՏԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ-Ի

Կաթողիկոսական օժման առթիվ հունի-
սի 24-ին ձեմարանի շենքի դահլիճում ճաշ-
կերույթ տրվեց Ազգային Եկեղեցական Ժո-
ղովի պատգամավորներին և հյուրերին:

Ճաշկերույթին ներկա էին ՍՍՌ Միու-
թյան կառավարության ներկայացուցիչ և

ՍՍՌԺ Ժողկոմսովետին կից Կրոնական
պաշտամունքների Պորհրդի նախագահ Ի.
Վ. Պոլյանսկին, Հայաստանի ՍՍՌ կառա-
վարության ներկայացուցիչ ՀՍՍՌ Ժող-
կոմսովետին կից հայ եկեղեցու պործերի
Պորհրդի նախագահ Ս.Ն. Հովհաննիսյանը:



ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Հայրենական մեծ պատերազմին և դեր-
մանական Ֆաշիզմի դեմ մղված պայքարին
ցուցաբերած իր եռանդուն աշխատանքի
համար Ամենայն Հայոց Հայրապետության
Արքեպիսկոպոսի Սեղակալ Ամենապատիվ Տ. Գե-
վորդ Մբրազան Արքեպիսկոպոսը արժանա-
ցալ ՍՍՌ Միութեան Կառավարության ա-
ռանձին տաղարկության և «Կովկասի պաշտ-
պանության համար» մեդալին: Այս առ-
թիվ «Սով. Հայաստան» թերթը հաղորդում
է հետևյալը:

«Կովկասի պաշտպանության համար» մե-
դալի հանձնումը Ամենայն Հայոց կաթողի-
կոսի Սեղապահ արքեպիսկոպոս Չեղոբեջյա-
նին:

Օրերս Հայկական ՍՍՌ Գերագույն Սով-
ետի Նախագահության Նախագահ ընկ. Մ. Պապյանը ՍՍՌ Միութեան Գերագույն Սովետի Նախագահության անունից հանձ-
նեց «Կովկասի պաշտպանության համար»
մեդալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սեղա-
պահ Արքեպիսկոպոս Գեվորդ Չեղոբեջյա-
նին, որը պարգևատրվել է «Մասունցի Դա-
վիթ» տանկային շարասյուն կառուցելու և
երկրի պաշտպանության Փոնդի համար
միջոցների հանգանակություն կաղճակի-
պելու համար:

Մտանալով մեդալը, Ամենայն Հայոց Կա-
թողիկոսի Սեղապահ Արքեպիսկոպոս Գե-

վորդ Չեղոբեջյանը դիմեց ընկ. Պապյանին
հետևյալ խոսքերով:

«Հայ հողատերականը պիտի հավատարիմ
լինի իր Հայրենիքին, իր ժողովրդին, իր
պետությանը: Այս ուղիով ես դնացել եմ
սկզբից և պիտի դնամ ցմահ: Մովետական
պետությունը դնահատելով իմ ձիւղ ու-
ղին, արժանացրեց նրա արգելափակության: Ինձ
համար թանկ է այս բարձր պարգևը:

«Հայրենական պատերազմի ամբողջ ըն-
թացքում հայ եկեղեցին, հայ հողատերակա-
նությունը և իմ հավատացյալ հոտը ոչինչ
չեն խնայել ընդհանուր հողթանալի հա-
մար: Հավատացած եղեք, որ այսուհետև
ևս նրանք ոչինչ չեն խնայի երկրի վերա-
շինության ասպարիզում:

«Ամբողջ սրտով ցանկանում եմ մեր պե-
տությանը ավելի մեծ նվաճումներ և հա-
ջողություններ»:

Մեդալը հանձնելու ժամանակ ներկա
էին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի
Նախագահության քարտուղար ընկ. Հ.
Գալստյանը և Հայկական ՍՍՌ ժողովու-
րդական կից հայ եկեղեցու զործերի Սոր-
հըրդի նախագահ ընկ. Ս. Ն. Հովհաննիս-
յանը:

(«Սովետ. Հայաստան» 5 հունիսի,
1945 թ., № 112 (7365).)

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԺՈՂՈՎԻՆ ԺԱՄԱՆԱԾ ՊԱՏՊԱՍՎՈՐՆԵՐԻ ՈՒ ՀՅՈՒՐԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂՈՄՍՈՎԵՑՈՒՄ

Հունիսի 26-ին Հայկական ՍՍՌ ժողովու-
րդական Հայկական ՍՍՌ ժողովուրդների
Նախագահի Սեղակալ ընկ. Ս. Կ. Կարա-
պետյանը ընդունեց արտասահմանյան եր-
կրների հայկական դաղուլթները և ջի-
ծին Հայ Եկեղեցու ժողովին ժամանած

պատգամավորներին ու աշխարհական հյու-
րերին:

Ընդունելությանը ներկա էին Հայկական
ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահ ընկ.
Սիմակ Մահակյանը, Հայկական ՍՍՌ ժող-
ովուրդների Նախագահի Սեղակալ ընկ. Հ.

Մարջանյանը, Հայկական ՍՍՌ Առողջապահության Ժողովրդական Կոմիտար ընկ. Գ. Ղեկմանը, Լուսավորության Ժողովրդական Կոմիտարի Տեղակալ ընկ. Ա. Ղազարյանը:

Ընկ. Ս. Կարապետյանը պատգամավորներին ու հյուրերին ծանոթացրեց Սովետական Հայաստանի նվաճումներին արդյունաբերության, գյուղատնտեսության ու կուլտուրայի բնագավառում:

Ընդունելության ժամանակ ելույթ ունեցած արտասահմանյան Հայկական դադուիներին ներկայացուցիչները նշում էին Սովետական Հայաստանի հսկայական նվաճումները ժողովրդական տնտեսության, շինարարության, կուլտուրայի, արվեստի, ժողովրդական կրթության, առողջապահության բնագավառում և այլն:

Պատգամավորներն ու հյուրերը բազմաթիվ հարցեր ավեցին ինչպես Սովետական Հայաստանի կյանքին վերաբերող, այնպես էլ արտասահմանի Հայկական դադուիներին հետ կապված, որոնց ընկ. Ս. Կարապետյանը մանրամասն պատասխաններ ավեց:

Արտասահմանի Հայկական դադուիների մի շարք ներկայացուցիչներ Հայկական ՍՍՌ կառավարության առաջ միջնորդություն հարուցեցին, որպեսզի հնարավորություն տրվի Հայկական դադուիներից երիտասարդության առավել ընդունակ մասը ուղարկել Սովետական Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու համար:

Հայկական ՍՍՌ Ժողովուրդների Նախագահի Տեղակալ ընկ. Ս. Կարապետյանը խոստացավ այդ հարցը քննության առնել:

Ընդունելության ժամանակ ելույթներ ունեցան նաև Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահ ընկ. Սիմակ Սահակյանը, Ժողովուրդների Նախագահի Տեղակալ ընկ. Հ. Մարջանյանը, Առողջապահության Ժողովրդական Կոմիտար ընկ. Գ. Ղեկմանը և Լուսավորության Ժողովրդական Կոմիտարի Տեղակալ ընկ. Ա. Ղազարյանը:

(«Սովետ. Հայաստան», 27 հունիսի, 1945 թ., № 128 (7381))

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՍՍՌ ԺՈՂՎՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Հայկական ՍՍՌ Ժողովուրդներին կից հայ եկեղեցու Գործերի Խորհրդի նախագահ Ս. Ն. Հովհաննիսյանն ընդունեց Համազգային Եկեղեցական Ժողովին ժամանած հոգևորական պատգամավորներին: Պատգամավորության մեջ էին Տանն Կիլիկիո Կաթողիկոս Տ. Գարեգին Ա-ը, Երուսաղեմի Պատրիարք Տ. Կյուրեղ Բ-ը, Կ.

Պոլսի պապրիարքական տեղապահ Տ. Գեորգ սրբազան արքեպիսկոպոսը, Լիբանանի առաջնորդ Տ. Արտավազդ արքեպիսկոպոսը, Եգիպտոսի առաջնորդ Տ. Մամրեի եպիսկոպոսը և ուրիշները:

Ընդունելությանը ներկա էր ՍՍՌ-ի Կրոնական պաշտամունքի Գործերի Խորհրդի Նախագահ Ի. Վ. Պոլյանսկին:

ՀԱՆԿԵՐՈՒՅԹ ՍՍՌ-Մ ԺՈՂՎՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆԷԲԻ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ի. Վ. ՊՈԼՅԱՆՍԿՈՒ ԵՎ ՀՍՍՌ ԺՈՂՎՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՄՈՑ

Հունիսի 28-ին ՍՍՌ Միութան Ժողովուրդներին կից կրոնական պաշտամունքի գործերի Խորհրդի Նախագահ Ի. Վ. Պոլյանսկու և ՀՍՍՌ Ժողովուրդներին կից հայ եկեղեցու գործերի Խորհրդի Նախագահ

Ս. Ն. Հովհաննիսյանի մոտ տեղի ունեցավ ճաշկերույթ ի պատիվ արտասահմանից ժամանած հայ եկեղեցական Ժողովի աշխարհիկ և հոգևոր պատգամավորների և հյուրերի:

ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԵՐ

Ֆրանսիայից ժամանած Հայ Եկեղեցական Ժողովի պատգամավորները իրենց հետ բերել են իբրև նվեր Սովետական Միության Գեներալխսիմուս մեծ ՍՍԱԼԻՆԻՆ հնագույն մարդկական սուր:

Օրերս այդ սուրը հանձնվեց արտասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերության ներկայացուցիչներին՝ ընկեր ՍՍԱԼԻՆԻՆ ուղարկելու համար հետեվյալ ուղերձով:

«Մեծ ՍՍԱԼԻՆԻՆ, Սովետական Միության Գեներալխսիմուսին, որն ամբիշտ փրկեց աշխարհի ժողովուրդները քաղաքակրթության ամենանեղ թշնամուց՝ գերմանական Փաշիզմից— լավագույն բարեկամին հայ ժողովրդի, որն իր իսկական ազատութունն ու անկախութունը դատվ Սովետական Հայաստանում— այս հին սուրը անսահման երախտագլտությամբ մատուցում են ձեզ հարգելի բերումով Ֆրանսիայում ապրող հայ հայրենասերները:

Ֆրանսիայում ապրող հայ հոյրեճ սերների հանձնարարությամբ Հայ Ազգային ձախտի նախագահ՝ Հ. ՄԱՐՄԱՐՅԱՆ Ընդհանուր քարտուղար՝ ՄԵՄՐՈՊ ԱՍՍՏՐԵՍՆ

(«Սովետ. Հայաստան», հուլիսի 6,
1945 թ., № 134 (7397))





ՊԱՏԳԻԱՄԱԿՈՐՆԵՐԻ ՀՈՒՇԵՐԻՅ ԵՎ ՏՊԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՅ

ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻԲ

Մենք Գալիֆորնիո պատգամավորները էջմիածին պալու և Հայրենիքը տեսնելու բուն ցանկութեամբ մասնաբ Սովետական ինքնաթիռ մը 29 մայիսի 1945 թ.:

Աստիտ ժամը 2-ին ինքնաթիռը սկսով վեր բարձրանալ: Ճամբորդներս՝ երեք ենք միայն, երեք Հայ, իսկ օդանավի պաշտոնյաները՝ ութը, երեքը ամերիկացի և Հինգը ուս, հրամանատար Ռուչիոյի գլխավորութեամբ:

Հիացումի մասնիված ենք ոչ միայն անոր համար, որ կտուրանք երկնքն, կարծես եղիայի նման հրեղեն կառոք, այլ կը հիանանք անով, որ օդանավը միայն մեր տրամադրութեան տակ զրկած է և առանց վճարումի:

Արդարև, դարմանալի աշխարհ մըն է, որ կտրեցինք օդն, և այս տասը օր: Տեսանք հեղատահ Փերեր, ամպամերձ անտառներ, դալարազեղ հովիտներ, ծաղկալեռ սարեր և արևոտ երկինք: Միպիրիան մեր մեջ որպես հին աքտորավայր ստեղծում միայն զբոսներ էր և այս հին օրերում էր, իսկ հիմա կարծես մեր Գալիֆորնիո Մեն Վոքի հովիտը լինելնք և կամ Միերա Նիվատա լեռներէ վեր: Չէ՞ որ դարունն է այսօր և ան ալ Սովետական դարուն:

Հիացում պատճառեց մեզ նաև բարեկիրթ վերաբերմունքը օդանավորչներուն. կարծես հինավուրց բարեկամներ լինելնք կամ հարազատ եղբայրներ:

Չուեցինք Ալասկայէն Միպիրիա, Ռւնց, Սերմջան, Եպոլութսք, Նիչո-Ինդիոք, Գրադնոյեսք, Օմսք, Կադան, Մոսկվա և Թբիլիսի: Ուր որ իջեանեցանք, նույն ջերմիկ վերաբերմունքը դտանք մեզ հյուրասիրողներու մոտ: Ամենուրեք հարգանք, առատ ճաշ, հանդատալեռ անկողին, ամեն բան պատրաստ էր մեզ համար:

Ամենավորերիկ կայաններու մեջ անգամ մեզ զիմավորողներ ունեցանք, որոնց մեջ կար անգլիախոս մեկը, օրիորդ մը Սովետ համախարաններէ շրջանավարտ: Նորատիպ առաջելուհիներ, լուսավորիչներ աղբերու եղբայրութեան:

Այո, երեկի ցրտաշունչ Միպիրը դարձեր

է եղբայրութեան վառարան, իրարամերձ ցեղեր եղբայրացեր և սիրո հողով շաղկապվեր են իրարու հետ: Շխտակն առած, մենք ալ կերպով մը նույնացանք նրանց հետ, այլևս, երբեք չփորձեցանք հարցնել, թե ո՞ւր կրտնվինք կամ մեզ հյուրնկալողները ի՞նչ ցեղի կպատկանին, կարծես ամենքն ալ Հայեր լինին:

Անգամ մը մեզ զիմավորող օրիորդին հարցուցի. «Օրիորդ, այս քաղաքը քու ծննդավայրդ է՞»:

— Ոչ, — պատասխանեց, — իմ ծննդավայրս Քիեվն է, բայց սա ալ իմ երկիրն է, չէ՞ որ այս երկրի երեոասարդներն ալ հերոսաբար կռվեցան և իրենց կյանքի գրնով պաշտպանեցին իմ Քիեվը...»: Եթե կրտնական մը չլինելի և եթե վաթսուս տարու մի մարդ չլինելի, թույլատրվեր ինձ, ես ճակատը կհամբուրեի ալ օրիորդին:

Քենթըրպրի ախաղ երեցին «Սովետ Իշխանութեան» անուն գիրքը կարդացեր էի: Որուն հետեւելով հարցուցի օրիորդի մը «Թե արդարև այժմ կմշակվին Միպիրիո մեջ հացահատիկներ, որոնց արմատը չլիցանար և երեք տարի պարբերաբար ցորեն կարտադրեր: Թե արդարեւ օդն պարտադրութեան կատաղիլ՞ բոլորու համար: Թե արդարև դունավոր բամբակներ կարտադրե՞ Սովետ հողը»:

— Այո, ըսով օրիորդը, Սովետ միտքը կիրծե և կհաջողի բնութեան ուժերը սանձել:

Չարմանքով հետեւեցանք նաև այն երեվույթին, որ մեր ճամբորդութեան օրերին մեկը տեւց ըման քառասունութը ժամ, առանց գիշերի, առանց խափարի: Մեր մոտ ամեննն երկար ցորեկն անգամ ժամը ինին կիբըջանար խափարով, մինչդեռ հոս ժամը 12-ին դեռ արևը մարք էր մտած, մեկնն երկուք վերջալուսը համբուրուեցամ արշալույսին հետ և դարձյալ նոր օր, նոր արև: Եվ սա դարձանային եղանակի բնական մի երևույթ էր, սակայն մենք համոզվեցանք, որ Սովետ դույններն են անկեղծ և լույսն ու արևը անմար...:

Սովետ Հանրապետութեանց մեկուն մայ-

բազաղաքն ենք. առաջնորդվեցանք մի փարկ: Հոն մշտադալար ծառերու շուքին շարված են Սովետ հերոսներու մեծադիր պատկերները: Հոն են Ստալին, Մոլոտով, Կոնև և ուրիշներ, հոն է նաև հայազգի Միկոյան: Ո՛րքան հպարտ էինք, որ հայն ալ ազատ աղբերու կարգին իր պատվալոր տեղն է դրա՛ված, և աս Սովետ Միութեան կերպրութեան շնորհով:

Երկու օր մնացինք Մոսկվա, հրաշքներու նոր քաղաքը: Ձէինք Կշտանար դիտելի Գորկիի ու Հոկտեմբերյան պողոտան: Նեջընտն ու Մոսկվա օթելները, Հաղթական աշտարակներու երկնաշող աստղերն ու Կարմիր հրապարակը: Ոտքով շորս անդամ շրջեցինք Կրեմլի շուրջ, Լենինի դամբարանի մոտեն, շունչ առինք Հոկտեմբերյան պարտեզի ծառերուն տակ, ուր հին օրերու մահճուտին մեջ ժամանակավ մժղուկներ միայն կվիտային, այժմ անիկա բուրաստանի է վերածված:

Մասնք կրնու և մեթրո. ամեն կողմ հիացում: «Մեր այս մեթրոն (դեանուղին), ըստվ անվիտախոս օրիորդ մը, մեր մայրաքաղաքի բնակչութեան փրկարարն եղավ: Թշնամի ուռմբերու տարափին տակ հոս է, որ ամպիրնացան քաղաքի մանուկներն ու անկարները և աղահոյժ զղացին մտանդներն»: «Այս դեանուղին, շարունակեց օրիորդը, սուրբ է մեզի համար նաև անոր համար, որ պատերազմի երկունքին մեջ դայն կառուցինք մեր արշայն գնով»: Որե՛է երկիր, կխորհինք, չկրնար ուռմբերու տակ այսքան հոյակապ կառուցվածք կերտել, ուրիշ երկիր մը նմանօրինակ պարագաներու տակ թերևս խուճապի մատնվիր: Փա՛ռք մեր մտքի և քաղուկի հերոսներուն:

Հոն այցելեցինք Կուլտուրայի փարկը, ընդարձակ տարածութեամբ դետին մը, ուր լեռնանման դերված են հիթլերի բանակին դրաված ուղմամթերքներ, թնդանոթներ, հրանոթներ, դանազան ձևի և դանազան մեծութեամբ, ուռմբեր՝ մեծ ու պրոփիկ, թենքեր՝ ահարկու կազմով, դանազան ձևի սովետականներ, դարմանահրաշ դործիքներ՝ դաժան ու մահասփյուռ, թրգացած մետաղներ՝ ամեն աստիճանի հասուկ: Պաշտանք Սովետ դրութեան, որ այժխարհը փրկեց այդ սոսկատեսիլ մահվան երախնն:

Հրավիրվեցանք ՄՄՄՄ կառավարութեան Կրոնից Խորհրդի սենյակը: Խորհրդի Նախագահ Պոլյանսկին այդ օր Երևան մեկնեց էր: Մեզ ընդունեց փոխ-նախագահը: Մեզ

հանդեպ ցույց տվավ սիրալիր վերաբերմունք: Հետաքրքրվեցավ Ամերիկահայ եկեղեցական խնդիրներով, ապա սեղանի մը շուրջ բարեմաղթութեաններ ըրինք Սովետ Միութեան հաղթանակի և Ժողովուրդներու բարօրութեան, եկեղեցիներու պայծասացման ուղղալ:

Միբլի եղավ մեզ այցելել նաև Հայ կուլտուրայի Տունը, հին Լազարյան շէնքին մեջ: Այս նվիրական հաստատութունը, որ ժամանակին մեծ ծառայութուն մատուցած էր հայ մտքին, այժմ դարձյալ հայ մտավորականներու ձեռքին մեջ կհանդիսանա լուսո փառարան մը:

Թրիլիսին մեջ հիշատակութեան արժանի բան մը պատահեցավ: Ինքնաշարժով Ռուբեն Տիգրանյանի եղբոր տունը փնտսելու ատեն դրամապանակս կորցուցած եմ: Մեծ մտահոգութուն մըն էր ինձ համար, որովհետև ոչ միայն լման դանձս կորցուցեր էի, այլև անձնադիրս, որով ինձի համար այդևս Ամերիկա վերադառնալու հույս մեջ կտարուրերի, երբ ինքնաշարժի վաճառքը ներս մտավ և ըստվ. «Պարոն, կարծեմ այս դրամապանակը Ձերը ըլլալու է, խնդրեմ նայեցեք մեջնն բան մը պակաս չըլլա...»: Ըսեք խնդրեմ, ինչի՞ վերադրել այս ուղղամտութունը:

Եվ այս բոլորեն վերջ մեր մեջ մեր ուրտերը կրծող բազմանք մը կար: Հայաստան աշխարհը կուղեինք տեսնել, հայրենի հողը կուղեինք համբուրել: Պագնել, համբուրել հայրենի հողը, ուխտն էր այս մեր նվիրական, ուխտը ոչ միայն մեր բանտի, հալածանքի և արցունքի օրերուն, այլև ուխտը այն անմուրազ հողիներուն, որ միխլոններով ցանեցինք անապատի աղաղներուն մեջ անհաց և անշիրիմ, Տեր Զորին—Մասն, Եփրատեն—Կարմիր ծով...:

Անմուրազ հողինե՛ր, ողջույն ձեզ, դուք մեռած չէք, Հայաստան ողջ է: Եվ դուք պանդուխտ, փտարանդի հայեր, ցնձացե՛ք մեզի հետ, տեսե՛ք, ամպեր փարատեր են, տեսե՛ք Ալեկիառ Մասիսը կշտադուռնի...:

Մայր Արաքսը իր արցունքը թափեց Մայր Վորլայի մեջ: Ողջույն, հայեր, ողջույն ձեզ, Մայր Հայաստան դրկարաց, հալատացե՛ք, պիտի ընդունի ձեզ:

Կ. Բահ. ԳԱԼՅԱՅԱՆ
(Գալիֆորնիո պատգամավոր և Եդեմի հովիվ)

ՌԻՍՏԱՎՈՐԻ ՄԵ ՀՈՒՅԱՆՏԵՏՐԵՆ

4 հունիս, 1945: Դարձյալ կճամբորդեմ... Ես երկրներ այցելած եմ, տեսած եմ մեծ քաղաքներ, շքեղ հաստատություններ, գեղեցիկ և հրաշալի վայրեր, անթիվ ժողովուրդներու դարավոր ստեղծադարձություններ, բայց ամենուրեք պանդուխտ զգացած եմ ու հոգիս չէ ժպտած: Ստիպան ախոր ուրախ և երջանիկ եմ, քանզի կճանադարհորդեմ գեպի երազներուս Հայրենիք՝ Մայր Հայաստան:

10 հունիս: Կյանքիս երջանկության օրը... այսօր ոտք դրի Հայոց աշխարհի վրա, համբուրեցի մեր նախնիքներու աբրահամ ներկված սրբազան հողը, հանդարտընթաց վայրաշարժեն դիտեցի Մայր Արաբսի պղտոջ ջուրերը, դուռը Մասիսնե, բլր իրենց ձյունածածկ դադաթներով, ծծեցի Արարատյան դաշտի մաքուր և սուղ ջարար օդը, բմպեցի մեր հայրենիքի զով ջուրը ու վերջապես այտերս և շրթունքներս հպեցան Ս. Էջմիածնի հազարամյա քարերուն ու մյուսոնարույր սրբությունց: Ամբողջ էությունս բերկրեցավ:

11—12 հունիս: Պատելով և մարդոց հետ ծանոթանալով անցուցի ժամանակս: Տեսա մեր նախնիներու հոյակապ տաճարները, համբուրեցի անոնց զերկզմանները, հոգիոց բախ հոգեւոր հորս՝ Տ. Եանե Ս.-ի շիրմին առջև, որ կհանգչի Ս. Գայանեի հիննավուրց վանքի շուքի տակ: Խոտեցա աշխատանքի վերադարձող կոլխոզնիկներուն հետ, որոնց վառվուրտն դեմքին վերա աշխատանքի սերն ու նվիրումը դեղեցկորեն կցորանա ու նաև հայ հաղթական բանակալիններուն հետ, որոնք քաջն Վարդանանեում նման ցույց տվին արիություն և հերոսություն հայրենական պատերազմի ընթացքին: Ես խոտեցա առավոտ և երեկոսադրթքի եկող հայ հավատացյալին հետ, որուն հավատքը հաստատուն է Արարատի նման: Ես մտերմացա մեծին ու փոքրին, հայաստանցիին ու եկվորներուն, պատգամավորներուն և վերջապես ամենքին հետ, որոնց միտեն, արյունեն և էութենեն եմ: Ու այժմ սրտեռանդն կհավատամ, որ հայր իր երջանկությունը կդատե Արարատի հավերժական նախածքին տակ և Ս. Էջմիածնի կաթողիկեին ներքև:

22 հունիս: Ս. Էջմիածնի Մայր Տաճարի դմբեթին տակ մաշած, բայց հավիտենապես անմահ սրբազան քարերու շուրջ բուրված պատգամավորներ կատարեցին Ամենայն Հայոց Հայրապետի ընտրությունը: Միաձայնությամբ և խանդավառ մթնոլորտի մեջ կաթողիկոս ընտրվեցավ Տեղապետ Սրբազանը: Այս ընտրությունը կատարված է այժմ ամբողջ Հայության իղձը: Ծշմարիտ է, որ Տ. Խորեն կաթողիկոսի մահն ևս ոչ ոք կարող էր այնպիսի խահաճություն վարել կաթողիկոսարանի դործերը, սրբազան կատարած է ընտրություն: Ան իր զբաղում և խոհեմ ղեկավարություն, արժանիան վարկեցողություն, իբրև տեսություն և ողջմտության ընդհանր ինքն ժամանակաշրջանի մը պիտի ստեղծե հայ եկեղեցու համար: Հայության կամքը և ձայնը իր հետն են: Միաձայնությամբ ընտրվեցավ ու միաձայնությամբ հայ ժողովուրդը պիտի առաջնորդվի իրմով:

24 հունիս: Հայրապետական օծումը կատարվեցավ մեծ հանդեսությամբ: Հայ եկեղեցվի և ժողովրդի ցնծատունն է այսօր: Փա՛նք թեզ, Աստված, ալ մեր շրթունքները «Հանգուցայ» բառը պիտի շարտասանեն: Լուսավորչի դահուն վրա բաղվեցավ արժանարևոտի հայրապետ մը հանձին Գեվորգ Զ-ի: Էջմիածնի, ինչպես նաև բոլոր հայ աթոռներուն նպատակը եղած է հոգեվոր կյանքի մշակում հավատացյալ հայ ժողովրդի մեջ և անոր ֆիզիկական մշտնջենական ապահովությունն ու պահպանումը: Որքան ատեն որ հայ ժողովուրդը կա, անսասուն կմնա էջմիածինը: Ներկա դարուս մեջ չկա հաստատություն մը, որ ավելի կրնա ծառայել սփյուռքի հայ ժողովրդին, քան հայոց եկեղեցին: Սփյուռք էջմիածնի կնայն, ինչպես նախահանգիտ մոտեցող նավը՝ փարոսին: Գեվորգ Զ մարմնացումն է այդ փարոսին:

9 հունիս: Լսած էինք, թե «կրոնքը մեռած է, Խորհրդային Միության մեջ»: Սակայն մենք իրողությունը տարբեր դասնք: Մենք տեսանք ժողովրդին հավատքը իր Աստծուն և հայ եկեղեցու ու սրբությունց հանդեպ ոչ միայն էջմիածին, այլ նաև Երևանի և ուրիշ վայրերու մեջ, ուր պատահություն ունեցանք այցելելու և պատարագելու: Հելլըն Զոնտանը՝ Բենիթրոպոսի տվազ երեցը, որ Խորհրդային Միության զանազան կողմերը այցելած էր և ներկա էր Աղղային եկեղեցական ժողովին առա-

ջին ու չորրորդ նիստերուն և կաթողիկոսական օծման հավաստեց ինձ, թե «ներկայիս կրօնական վերադարձնում մը կա Ռորհրդային Միութեան մեջ և սխտութեամբ կնպաստե այլ շարժումին»: Գոցված եկեղեցիներն և վանքեր կվերարացվին արդևն և հալատացյալներ առաջնու և երկու աղտի կերթան: Եթե արտասահմանի հայերս արցունքաւ աչքերով դիտած ենք կրօնական վիճակը Հայաստանի մեջ, այժմ մեր խորունկ համոզումն ու հավատքն է, որ այդ արցունքը ժպտի փոխված է մեր աչքերուն մեջ:

12 հուլիս: «Հայաստան երկիր դրախտավայր», ի դուր չէ տաղերգած բանաստեղծը: Դյուրութեամբ ընծարկեցաւ մեզ հնարավորութեան սահմաններուն մեջ տեսնելու մեր երկրին դանազան կողմերը: Հայաստան հարուստ է հոյակերպ վանքերով և հիշատակարաններով: Ամեն մեկ քար պատմութեան մը ունի: Մեր նախնիք անկենդան քարին մեջ իսկ կյանք դրեր են: Ճարտարապետական ոճը պիտի հոյակապ կառուցվածք ունեն մեր վանքերն ու եկեղեցիները, կոթողներ, որոնք պատիվ կրեն դանոնք կառուցանող ժողովուրդին: Մեր հայրերը ոչ միայն աղոթքը են, այլև իրենց ճարտար ստեղծագործութեաններով զԱստված մոտեցուցեր են մարդուն սրտին ու հոգիին:

Հայաստան իր բնական տեսարաններով բանաստեղծական թովչութեամբ մը ունի: Արարատյան դաշտը անմասն է իր դեղեցկութեամբ: Արարատ իր ճերմակ դաղաթով կտրե համբուրվել սովորուն հետ, որոնք մերթ կծածկեն իր ստորոտներու կողերը և ձյունի դաղաթը կարծես կախված կթողուն երկնքի մեջ, մերթ կատարեն համբուրնթացորեն դեպի վար կասհեն ու կծածկին չնաշխարհիկ լեռը իրենց շղարեն ներքև: Կապույտ երկնքի տակ «Ալուր հական» կցուցադրե իր ամբողջ դեղեցկութեամբ: Մայր Արաքսը իր սլոր մոլոր պտույտներով, Գեղամա ծովն ու Սևան կղզին իրենց կանաչավետ լեռներով և մուրդ երկնքով, Ծաղկաձորի հրվանդանը և բուրբուռնալիս ծաղիկներն, ու անտառները, Աղատ դեպի խորխոր դիտված Տրդատա թախտեն ու Գե-

ղարդա վանքի հովտեն կույս բնութեանը, այս բոլորը իրենց յուրահատուկ դեղեցկութեամբ ուխտավորը կհամակեն դրախտի տպավորութեամբ:

15 հուլիս: Եկեղեցական ժողովի պատգամավորներուն հետ և երբեմն առանձին այցելիցի Երևանի կարևոր հաստատութեանները, ինչպես Պետական համալսարանը, բժշկական հաստատութեանն ու հիւանդանոցները, Մատենադարանն ու Չմանդանոցները, Հանրային դրաղարանը, Պետհրատի շէնքը, հնութեանց, երկրաբանական և կերպարվեստի թանգարանները, թատրոնն ու օպերայի շէնքը, կառավարատունը, դիտութեանց ճեմարանը, երաժշտանոցը, «Արարատ» գործարանը, մանկատանները և այլն: Հիշյալ հաստատութեաններն իրենց կառուցվածքով, բովանդակութեամբ և ժողովուրդին իրենց մատուցած ծառայութեամբ փառք ու պատիվ կրեն հայ անունին: Այցելուն կհիանա այն մշակութային շինարարական գործունեութեան և արտադրութեանց վրա, որոնք կատարված են Երևանի և մոտակա նորակերտ ավաններուն մեջ վերջին քանի մը տարիներու ընթացքին: Իսկ եթե պատկերազմը չըլլար, ալ ավելի ծրած, ծաղկած ու զարգացած պիտի գտնեինք մեր հայրենիքը:

Թատրոնն ու օպերան իրենց ներկայացումներով և բեմադրութեամբ որևէ արվեստագետի նախանձը կընան շարժել: Մենք տեսանք «Անուշ» և «Արմատ» օպերաները՝ հայկական համերգ կազմակերպված ՀՄՍԻ երաժշտական ուսումնական հաստատութեաններու ուսանողներու կողմէ. ինչպես նաև «Պատիի համար», «Համիթ», «Կարմիր Մայրակը», «Երկիր հայրենի» խաղարկութեանները, «Պանդուխտ» լայնթը և «Դավիթ բեկ» շարժանկարը: Ասոնք մեր սրտերը լեցուցին աղբյւրին հրապտութեամբ և երջանիկ ենք, որ գանոնք տեսնելու պատահութեամբ շնորհվեցաւ մեզ: Մենք պիտի վերադառնանք վերածնվող հայրենիքի մասին լայնադուրս դրացումներով և դաղափարներով լեցված:

18 հուլիս: Հայ ժողովուրդի հյուրասիրութեան ըմբռնելու և դպրու համար մարդապրելու է Հայաստան: Մեր երկրի սահմաններուն հարկի մոտեցած տեսանք հայուն ավանդական սասնջականութեանը: Աշխարհի տեսնական այս նեղ օրերուն մեջ բոլոր պատգամավորներուն Հայաստա-

նի մեջ ունեցած հյուրանոցի, կերակուրի և ճամբորդութեան ծախքերը հողմեցան էջմիածնի կողմէ: Երբ այցելեցինք կոլտոզներուն, անոնք իրենց բախարուսն խորովածով, դինիով ու կոնյակով պատվեցին մեզ: Օշական այցելութեանս ժամանակ աղքատիկ և հույս անշուք խրճիթէ մը ներս մտա ջուր խմելու. մնաք բարովի առնել, տանտիրուհին բաւի. «ինչո՞վ կրնամ հյուրասիրել զՁեզ»: Այս ոգին այցելուն պիտի դանկ Հայաստանի բոլոր մասերուն մեջ, Հարուստին, աղքատին, շինականի և քաղաքացիին քով:

Երեանի հաստատութեանները պատած միջոցիս հրճմանքով նշմարեցի պաշտոնյաներու և գործառնարներու սիրալիր վարվեցողութեանը, բարեկրթութեանը, անոնց ժպտուն և սիրուն՞ դեմքերը, ծառայութեան և օգնութեան ոգին:

19 հուլիս: Որոշված է այսօր կամ վաղը ստիպանալով մեկնել Թեհրան: Հագին կրնդվի այդ կարգադրութեան դեմ: Ի՞նչ պես բաժանվեմ հայրենի երկրեն, մեր պատմական եղբայրներեն ու քույրներեն, ընկերներեն ու սրբազան վայրերեն: Կուզեմ աղբիւ ու մեռնել հոս ու թողվել նախնիքներուս նշխարներուն հետ: Ներսես ճախ մը, սակայն, կըսե ինձ, թե ժամանակավոր է այս բաժանումը ու այս մտածումն է, որ սիրովանքի կաղզույցը կուտա ինձ: Եկա իբր ուխտավոր, կմեկնեմ որ՝

պես ջերմեռանդ հալատացող և տարածիչ այն համուրումներուն և իրողութեանց, որ հայոց աշխարհը մշակութային և շինարարական ու արդյունաբերական մեծամեծ նվաճումներով պիտի փութոյլի: Ուշ է այն օրը, երբ Ախուրյանի և Արաքսի շրթերը պիտի համբուրվին և այդ հավերժական համբույրին մեջ հայ ժողովուրդը պիտի տեսնէ ու դանկ իր դարավոր երազներուն իրականացումը, այսինքն միացյալ Հայաստանի ստեղծումը:

Մեր թիկունքին կանգնած է սուս մեծ ժողովուրդը, որ մեր անկաշառ բարեկամն է: Մենք անցյալի մեջ եղած ենք մեծ, այժմ փոքր ենք, բայց այդ փոքրութեամբ ավելի մեծ ենք հիմա, քան անցյալի մեջ: Հայը օտար երկնքի տակ ժպտա չունենա, այլ Մայր Հայաստանի մեջ իր նախնիքներու հողին վրա պիտի դանկ իր փտարանդի և առտապած հողմուն խալիկն և պաշտպան: Հայոց եկեղեցին ինչպես ի հնումն, նույնպես և այժմ, առաքելական և դատարարակցական մեծ դործ և պարտականութեան ունի կատարելիք մեր ժողովրդի հողերը և բարոյական պաշտառացման և հարասեման համար:

Ինչպես միասնական էր Այդալին Եկեղեցական ժողովը, նույնպես միասնական և միարան լինելու է ամբողջ հայութեանը իր Հայրենիքին և եկեղեցիին շուրջ:

ԴԵՐԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ



Մ Ի Բ Ա Ն Ի Օ Ր Կ Ա Յ Ա Ս Ա Ն Ա Ռ Ի Մ

Երջանկահաշիշատակ Տ. Տ. Խորեն Ա. Կաթողիկոսի մահից հետո Հայրապետական Աթոռը ծածկված էր սև ջողով:

Իրար հաջորդող աննպաստ պայմանների շնորհիվ կաթողիկոսական ընտրութիւնը ձեռնարկեց շատ տարիներ: Հավատացյալ հայը, հայ ժողովուրդը, որ հույսով և բարոյական մեծ կասկերով շարկապված է Մայր Աթոռի հետ, մեծ մտահոգութեամբ սպասում էր այն քաղցր և երջանիկ օրվան, որ պիտի լսեին կաթողիկոսական ընտրութեան բեկբալի լուրը:

Պատմութիւնը մեղ ցույց է տալիս, որ Մայր աթոռ Ս. Էջմիածինը երբեմն հասել է իր փառքի դադարեցնակետին և շատ անգամ մերկացել է իր փառքից և ունեցել է դժնդակ օրեր: Սակայն Աստուած յուրաքանչյուր անգամ հանդես է բերում մի մարդ, որի ձեռքով ու աշխատութեամբ նորից վերակենդանացնում է Մայր Աթոռը, ծաղկեցնում և զորացնում նրան:

Հանգուցյալ Տ. Տ. Խորեն Կաթողիկոսի մահվանից հետո Աստուծո շնորհքով դոստադրված ասպարեզ դուրս եկավ Ամենապատիվ Տ. Տ. Գեղարք Արքեպիսկոպոսը՝ Ազգընտիր Տեղակալն Ամենայն Հայոց Հայրապետութեան: Նա իր ամբողջ ուժով ու կարողութեամբ աշխատեց և ի մտի դրավ, որ Հայոց Հայրապետական Աթոռը ծաղկեցնե: Եվ նրա ջանքերն ի դերն չանցան:

1945 թ. փետրվարին Ատրպատականի հայ ժողովուրդը լսեց այն քաղցր ավետիսը, որ դալիս էր Մայր Աթոռից, թե Հայոց Հայրապետի ընտրութիւն պիտի լինի: Այս հրավերը մեր ժողովրդի կողմից լրովեց ամենամեծ ոգևորութեամբ: Թեմական իշխանութիւնը Գերաշնորհ Տ. Ներսես Արքեպիսկոպոսի նախադահութեամբ թեմում ժողով հրավիրեց և որոշեց ընտրել երկու պատգամավոր՝ աշխարհիկ և հոգևվոր և ընդառաջել Ս. Էջմիածնի կարգադրութեան տարվա հունիս ամսի 16-ին դալ Ս. Էջմիածին և մասնակցել Աղբալինեկեղեցական ժողովին ընտրելու Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Մենք պատգամավորներն աշխարհիկ պ. Բարսեղ Գրիգորի Դորուղչյանը և տողերիս գրողը հունիսի 7-ին ուրբաթ օր ճանապարհվեցինք մեղ հետ տանելով նաև Մայր Աթոռի նվեր տասն կտոր գորգ: Հինգշաբթի օրը մենք անցանք Արաքս և մտանք

Սովետական հողը:

Մեղ ընդառաջեց ինտուրիստի ներկայացուցիչը և առաջնորդեց ճաշատնյակ, որ պատրաստված էր պատգամավորների համար: Մեղ հետ էին Ս. Երուսաղեմի Ամենապատիվ Պատրիարք Տ. Կյուրեղ Բ, Ջանիկ Չաղբ իր հարգելի աիկնոջ հետ միասին և Օժեն ֓ափաղյան Եպիսկոպոսի պատգամավորները: Ծաղկուց և մի փոքր հանդստանալուց հետո մեղ համար հատուկ պատրաստված դնացք նստելով շարունակեցինք ճանապարհը: Ամբողջ ճանապարհի ընթացքում մեղ ընձեռեցին ամեն դյուրութիւն: Մեր ճանապարհին մենք տեսանք շտանված հարգանք Սովետական Իշխանութեան կողմից, ամեն տեղ, ամեն կայանութեան հարմարութեան հարմարութեանը ընդհուպ մինչև Հայաստանի մայրաքաղաք Երևանը: Երևանում մեղ դիմավորեցին ամենամեծ շքով: Մեղ առաջնորդեցին մեղ համար պատրաստած «Ինտուրիստ» օթելը:

Ես Երևանը տեսել էի 1918 թվի դեկտեմբերին, Երբ Իրանի կառավարութեան կողմից 2 թուրք պաշտոնյայի հետ եկել էի Հայաստան, որպես կառավարութեան ներկայացուցիչ: Այն ժամանակ Երևանը ցեխից էր կառուցված և ունեք ցածրահասակ տնակներ: Այժմ համեմատել նոր Երևանը հնի հետ հանցանք է: Բոլորովին փոխված է Երևանի դեմքը: Քաղաքում նոր պլանով կառուցված են գեղեցիկ երկու, երեք և ալելի հարկանի բաղամթիվ տներ, լայնարձակ ու գեղեցիկ փողոցներով, մեծ հրապարակներ, թատրոն, Մինեմա, դալրոցներ (տարբական և միջնակարգ), համալսարան, ինստիտուտներ և այլն: Եինարարութեան և մշակույթային աշխատանքը վեր է ամեն դնահատանքից, միայն պիտի գլուխ խոնարհեցնել եղած աննման աշխատանքի արդյունքի առաջ: Դաշտերում մի թիզ հող չես դտնի, որ անմշակ մնացած լինի: Տեսանք դաշտերում կոլխոզնիկներին, որոնք խմբերով աշխատում էին առանց գլխավորի: Դա ցույց է տալիս նրանց գիտակցական վերաբերմունքը դեպի ընդհանուր գործը:

Երևանից անցանք Ս. Էջմիածին և լծվեցինք աշխատանքի: Մի քանի օր խորհրդակցական ժողովներ ունենալուց հետո, հունիսի 22-ին ձեռնարկեցինք կաթողիկոսական ընտրութեան:

Կիլիկիա Վեհափառ Կաթողիկոսը 18 եպիսկոպոսների անուն մի ցանկ կարգաց և այդ ցանկից դադարնի քվեարկութամբ 110 քվեով ընտրվեց Ամենապատիվ Տ. Գեփորզ արքեպիսկոպոսը՝ Աղղբնաիր Տեղափառ Ամենայն Հայոց Հայրապետութան։ Սա մաքուր և անխարդախ ընտրություն էր։ Նորընաիր Վեհափառ Հայրապետը իր Տեղակալութան օրերին ցույց տվեց խելացի, խոհեմ, շրջահայաց և զգուշավոր դոր-

ծունեություն։ Ձեռք տարակուսում, որ նույն աչալուրջ և խոհեմ քաղաքականությունը կշարունակի իր դահակալութան երկար տարիներին։

Թող Տեքը զորացնե և պահե համերամբնդ երկայն ավուր Ի փառս և Ի պատիվ Հայաստանյայց Առաքելական Մ. Եկեղեցւոյ։

ԿԱՐԱՊԵՏ ավագ քահ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
1945 թ.
Ս. Էջմիածին

ՀՈՒՋԻՉ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Զրույց արտասահմանյան հայերի պատգամավորությունների և ներկայացուցիչների հետ)

Երևանից մեկնելուց առաջ Հայ Եկեղեցական Ժողովի մասնակից արտասահմանյան հայերի պատգամավորությունների ներկայացուցիչները Սովետական Հայաստանից ստացած իրենց պապավորությունները հաղորդեցին Հայիական Հեռուգրական Գործակալութան թղթակցին։

Ամերիկահայերի պատգամավորության ներկայացուցիչ Գ. Սելյանն ասաց.

«Մենք այցելեցինք Երևանի դիտական, կուլտուրական և գեղարվեստական հաստատությունները, մենք եղանք սովխոզներում ու կոլխոզներում, օպերայի, օպերետայի, դրամատիկական, պատանի հանդիսատեսի թատրոններում, տեսանք հայկական երգի ու պարի, պետական ջազի, երաժշտական դպրոցների սովխոզների սքանչելի վարպետությունը, ինչպես նաև Հայաստանի Կինոստուդիայի հոյակապ արտադրությունները, որոնց թվում ամերցեի «Պալիթ Բեդ» կինոնկարը, հայրենասիրական վսեմ ներշնչումների աղբյուրը։ Մենք հնարավորություն ունեցանք մանրամասն ծանոթանալ արդյունաբերության, դյուրառատության, մշակութի և առողջապահության, դարմանահրաշ վերելքը պատկերող թվերի հետ, որոնք ամրողացրին մեր պապավորությունները։

Մենք բախտավոր և բազմերախտ ահանարտեսներն եղանք Հոկտեմբերյան Մեծ Ռեուլուցիայի ծնունդ մեր աղալին պանծալի վերածնության։

Մենք սկանատեսներ եղանք այն անժրտեսներին, թե մեր ժողովրդի կյանքում

ինչպիսի հրաշքներ են դործել Ստալինյան Կոնստիտուցիան, ամենադեմոկրատականը աշխարհի բոլոր հիմնական օրենքների մեջ, ինչնյան-ստալինյան աղալին քաղաքականությունը աղղութունների կնճառա խընդրի՝ մեր ժամանակների Գորբյան հանդույցի լուծման այդ սակեղեն բանալին։

Այդ բոլորի համար մենք պարտական ենք ժողովուրդները աղատարբին և հայ ժողովրդի անփոխարինելի բարեկամ դերագույն զորավար ԻսաիՖ վիսսարիոնովիչ ՍՏԱԼԻՆԻՆ։ Ստալինյան արևի տակ, որ մայրամուտ չունի, Սովետական Հայաստանը կաճի և կբարդալաճի»։

Փրանսիայում ապրող հայերի պատգամավորության ղեկավարներ աղղալին ճակատի նախագահ Ա. Մարմարյանը և աղղալին ճակատի քարտուղար Մ. Ասատուրյանը ասացին հետևյալը.

«Մեզ հայտնի էր Հայաստանի նախասովետական վիճակը։ Մեր երկրում կային աղքատություն և այիրահներ։ Բայց այսօր սովետական հասարակարդի շնորհիվ մեր ժողովուրդն արդեն ունի պետականություն բառի բովանդակ իմաստով։ Մշակույթի այն վայրերը, որ մենք այցելեցինք, պարզապես հիացունք պատճառեցին մեզ։ Անչափ կերպարանափոխվել է մեր հայրենիքի դիմագիծը։ Ստեղծարար մեծ աշխատանք է կատարված մեր ժողովրդի բարեկեցությունը բարձրացնելու համար։ Ձեռք են բերված հաջողություններ, որոնք յուրահատուկ են բարձրարարյան պետականություն ունեցող ժողո-

վուրդները: Մասնավորապես մեր ուշադրութիւնը դրաւից մեր ժողովրդի մշակութային բարձր մակարդակը: Սովետական Հայաստանի թատրոնը և կինոն կարող են մրցել եվրոպական շատ ժողովուրդների նման Հաստատութիւնների հետ: Բոլոր այն երաժշտական ելույթները, որոնց մենք հաճույք ունեցանք ներկա դանսիւրու, մեզ պարզապես խանդավառեցին: Մեր ժողովուրդը ճրագը փոխարինել է էլեկտրական լույսով, իսկ դաշտերը չութի փոխարեն հերկում են տրակտորներով: Անջրդի հողերի ոռոգումը, սովխոզների ու կոլխոզների բարեկեցութիւնը արդարեւ են սովետական կառավարութեան անխնայ աշխատանքի: Այս բոլորը կարելի եղաւ իրականացնել սովետական իշխանութեան շնորհիւ, ուստ մեծ ժողովրդի մեծ անպակասութեան և սովետական սեպուրիկաների կղերայրական համադրժակցութեան շնորհիւ: Մենք դժուրահեռութեամբ արձանադրում ենք և այն, որ մեր ժողովուրդը պատվաւոր տեղ է դրաւիլ Փաշիգի ու խաւարամոլութեան դեմ մղած Հայրենական պատերազմում:

«Մենք, արտասահմանի հայերս, անասմանորեն երախտապարտ ենք մեր հայրենիքին՝ Սովետական Հայաստանին, նրա աշխատավորութեանը, ինտելիգենցիային, նրա հայրենասեր կառավարութեանը:

«Մի քանի ամսից հետո մեր սիրելի հայրենիքը՝ Սովետական Հայաստանը կնշի իր 25-ամյակը, որի ընթացքում նա բարձր է պահել սովետական հայրենիքի դրոշմը, հաղթանակների ու նվաճումների դրոշմը:

«Այդ առթիւ մենք շնք կարող մեր խորին երախտագիտութեան զգացմունքը չըհայտնել սովետական պետութեան ղեկավար և սովետական ժողովուրդների մեծ հաղթանակների կազմակերպիչ, մեր ժողովրդի լավագույն բարեկամ մեծ զորավար ՍՏԱՆԻՆ»:

Լիբանանում ապրող հայերի պատգամավորութեան ներկայացուցիչ Ս. Էրիզանն ասաց.

«Յանկանում եմ իմ խորը զգացմունքները և հիացմունքը հայտնել այն սպավորութիւնների առթիւ, որոնք ես ու իմ ընկերները ստացանք Սովետական Հայաստան այցելելու ժամանակ: 25 տարեւ ընթացքում մեր հայրենիքը՝ Սովետական Հայաստանը նվաճել է այնպիսի բարձունքներ, որոնց պատմութեան մեջ քիչ ժողովուրդների է վիճակվել հասնել: Հայ ժո-

ղովուրդը վերածնել է շատ դարերի ընթացքում կորցրած իր պետականութիւնը: Հայ ժողովրդի հինավուրց կուլտուրան սովետական հասարակարգում ոչ միայն պահպանվել, այլև աննախընթաց ծաղկման է հասել: Երկրի տնտեսութիւնը կառուցված է ամուր հիմքի վրա, արմատապես փոխվել է հայ դուրի դեմքը: Հողագործութիւնը կառուցված է ղիտական առաջավոր հիմքի վրա, իսկ կոլխոզային կարգը նախանձնի վիճակ է ստեղծել սովետական դուրացիութեան համար:

«25 տարեւ ընթացքում փոխվել է նաև հայրենիքում ապրող հայ ժողովրդի դեմքը, որը ձեռք է բերել իր պետականութիւնն ունեցող ժողովրդին յուրահատուկ հպարտութիւն: Սովետական Հայաստանի նոր, երիտասարդ սերնդին անձանոթ է լքալ, անպաշտպան և անպատասան տարազի զգացումը, որը յուրահատուկ է արտասահմանի հայութեան երիտասարդութեանը, ինչպես նաև անձանոթ են ամենօրյա կենցաղային հոգսերի դժգոհութիւնները: Սովետական Հայաստանի երիտասարդ սերունդը, — որտեղ մենք երջանկութիւն ունեցանք ապրելու երեք շարաթ, — լի է բարձր հպարտութեան զգացմունքով իր հայրենիքի համար, նա իրեն զգում է հայրենիքի մեծ շինարարութեան և վերածնութեան մասնակիցը, ժողովրդի կուլտուրայի վերելքի մասնակիցը: Վերջապես, այդ սերունդը իրեն զգում է այդ երկրի տերը, որովհետև նա ըստ արժանիւնի պաշտպանեց 25-ամյա մեծ նվաճումները, որոնք ձեռք են բերվել ծանր զոհարարութիւնների զնով:

«Որպես իր հայրենիքը սիրող արտասահմանյան հայութեան ներկայացուցիչներէց մեկը, ես լի եմ մեծ երախտագիտութեան զգացմունքով այն բոլորի համար, ինչ որ ես տեսա, լսեցի և ապրեցի Սովետական Հայաստանի և նրա մայրաքաղաք չքնադ երևանի թանկագին իրականութեան մեջ, և հատկապես նրա համար, որ Սովետական Հայաստանում ապրող հայերը անմասնակից չեն մնում արտասահմանյան հայութեան բախտի նկատմամբ, որ նրանք լըրջորեն մտահոլված են նրա ապագայով:

Հեռանալով Սովետական Հայաստանից, մենք մեզ հետ տանում ենք մեծ հավատի զգացմունք մեր ժողովրդի ապագայի նկատմամբ, որովհետև այստեղ մեր տեսած ամենայն պեղեցիկը վկայում է, որ նրա ապագան էլ ավելի ղեղեցիկ կըլինի: Մենք

սրբազան պարտք ենք համարում մեր անասման երախտագիտութիւնը հայտնելու բոլոր ճնշված ու ստրկացված ժողովուրդների փրկութեան փարոսին՝ հանճարեղ ՍՍԱԽՆԻՆՆ, որին մենք բոլորս պարտական ենք մեր մայր-հայրենիքի վերածնութեան և ծաղկման համար, մենք լի ենք մեծ երախտագիտութեան զգացմունքով դեպի ազնիվ ու մեծ ունւ ժողովուրդը, որը եղել է և մնում է մեր ժողովրդի պաշտպանը և մեծ բարեկամը: Մենք մեր շնորհակալութիւնն ենք հայտնում Սովետական Հարաստանի կառավարութեանը և ժողովրդին՝ մեղ ցույց տրված հյուրընկալութեան և մեր հայրենիքը այնպէս մոտիկից ուսումնասիրելու հնարավորութիւն տրամադրելու համար»:

Ռումինիայում ապրող հայերի պատգամավորութեան ներկայացուցիչ զոհաբո Ս. Տիրացյանն ասաց. «Մենք մեր հափերժ

սիրելի հայրենիքից մեկնում ենք ամենալավադույն տպավորութիւններով, սրով հետև ասն բոլորը, ինչ որ տեսանք ու լսեցինք, դերադանցում են մեր բոլոր սպասումները: Այսօր մենք Ռումինիա ենք մեկնում խորին համոզմունքով, որ այլևս ոչ մի բան է փրճակի չի կանգնեցնելու հայերի հայրենիքի տնտեսական ու կուլտուրական վերելքը, որովհետև այդ վերելքը կատարվում է սրընթաց արագութեամբ և գտնվում է հաստատ ձեռքերում:

Մենք հպարտ ենք մեր ստացած տպավորութիւններով և հույս ունենք, որ մեղ հետ միասին նաև արտասահմանյան ամբողջ հայութիւնը շատ շուտով կկարողանա հափաքվել հայրենիքի հովանու տակ»:

(«Սովետ. Հայաստան», 6 հուլիսի, 1945 թ., 134 (7387)):

(ՀՀԳ)

ՀԱՅ ԵՎԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՐԵՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ


Ս. թ. հուլիսի 3-ին Երևանի օդանավակայանից հատուկ ինքնաթիռներով դեպի Թեհրան և Սոֆիա մեկնեցին Ռումինիայի, Բուլղարիայի, Իրանի, Թյուրքիայի, Հունաստանի, Լիբանանի, Սիրիայի, Պաղեստինի, Եգիպտոսի և Ամերիկայի պատգամավորներն ու հյուրերը:

Երևանի օդանավակայանից թռչելուց առաջ Հայ Եկեղեցական Ժողովի պատգամավորները և հյուրերը հեռադիր ուղարկեցին Սովետական Միութեան Գեներալխոստնու Մեծ ՍՍԱԽՆԻՆՆ, որով շնորհակալու-

թեան և երախտագիտութեան զգացմունք են հայտնում սիրելի հայրենիքը այցելելու հնարավորութեան և ցույց տրված հյուրընկալութեան համար:

Շնորհակալութեան հեռադիր ուղարկվեցին նաև Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահութեան Նախագահ ընկ. Մ. Պապյանին և Ծայրագույն Պատրիարք Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեղորգ Զ-ին:

(«Սովետ. Հայաստան», 6 հուլիսի, 1945 թ., № 134 (7387))



ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ
ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԳԵՎՈՐԳ Զ-ԻՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՄԵԿՆԵԼԻՍ

ՎԵՀԱՓԱՌ
Տ. Տ. ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Էջմիածին.

Բաժանվելէ առաջ մեր նվերական Մայր- թյան այն հյուրընկալության համար, ու
Հայրենիքեն, պարտք կղզանք մեր խոր ե- րուն արժանացանք արտասահմանի պատ-
րախտագիտութիւնը հայտնել Ձերը վեհա- վամալորներս:

Արտասահմանի եկեղեցական և աշխարհական պատգամալորներ՝
Մամբրե Խաչիկ. Սիրունյան առաջնորդ Եղիպտոսի
Արքեպ. Գալփայան
Գեվորգ Միքնայեան
Տիրան Խաչիկ. Ներսայան
Վարդան Խաչիկ. Գապարյան
Դուկտոր Առաքելյան
Ա. Սիֆիրյան
Մուշեղ Մկրտչյան
Ս. Թուրքաբեյան
Դուկտոր Մամբրե



1945 թ. ՀՈՒՆԻՍԻ 16-Ի ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿԸ

Անուն, ազգանուն, իայրանուն	Քեմ
1. Տ. Տ. Գարեգին Ա կաթողիկոս	Տանն Կիլիկիո
2. Տեր Գեվորգ Ս. Արքեպիսկոպոս Չեորեքչյան	(Տեղակալ)
3. Տեր Կյուրեղ ծ. վրդ. Իսրայելյան	Երուսաղեմի Պատրիարք
4. Տեր Գեվորգյարքեպ. Արսլանյան	Պատրիարք. Տեղ. Պոլսի
5. Տ. Մամբրե կաթիսկոպոս Սիրունյան	Եզիպտոս
6. Տ. Գրիգոր ծ. վրդ. Կարապետյան	Բուզարիա
7. Տ. Վաղգին վրդ. Պաշճյան	Ռոսիինիա
8. Տ. Վահան ծ. վրդ. Կոստանյան	Իրանա-Հնդկական թեմ
9. Տ. Կարապետ ապ. քհ. Մանուկյան	Ատրպատական
10. Տ. Արտավազդ արք. Սուրմեյան	Լիբանան
11. Տ. Մամբրե կա. Գալֆայան	Կալիֆորնիա
12. Տ. Կարապետ քհ. Գալֆայան	
13. Տ. Տիրան ծ. վրդ. Ներսոյան	Ամերիկա
14. Տ. Սիոն ծ. վրդ. Մանուկյան	»
15. Տ. Կարապետ արքեպ. Մաղլումյան	Հունաստան
16. Տ. Մաթեոս ծ. վրդ. Աճեմյան	Էջմիածին
17. Տ. Տաճատ ա. քհ. Տեր-Վարդանյան	Արարատյան թեմ
18. Տ. Եղիշե վրդ. Հարությունյան	»
19. Տ. Խորեն վրդ. Էլչուճյան	Շիրակի թեմ
20. Տ. Հովհաննես քհ. Սարգսյան	»
21. Տ. Ռուբեն ծ. վրդ. Դրամբյան	»
22. Տ. Ներսես ծ. վրդ. Աբրահամյան	Վրաստան
23. Տ. Սահակ քհ. Սահակյան	»
24. Տ. Կարապետ ծ. վրդ. Թումանյան	Նախիջևան
25. Տ. Մկրտիչ ա. քհ. Չորչոփյան	»
26. Տ. Եղնիկ վրդ. Աղնավուրյան	Բագու
27. Տ. Վարդգես քհ. Գրիգորյան	»
28. Տ. Համազասպ ա. քհ. Ղարազոզյան	Հյուսիսային Կովկաս
29. Տ. Պսակ քահ. Ստեփանյան	»
30. Տ. Մխիթար ա. քհ. Դարբինյան	»
31. Տ. Սուրեն ծ. վրդ. Թորոսյան	»
32. Տ. Վահան ա. քհ. Պամարբեկյան	»
33. Տ. Իգնատիոս ա. քհ. Տեր-Մովսիսյան	Օրեսաս
34. Գալստֆարյան Արշակ Գրիգորի	Լիբանան
35. Պապոյան Գեվորգ Գրիգորի	»
36. Էլիեչյան Եգիբեմ Գեվորգի	»
37. Մարյան Մկրտիչ Դավիթի	»
38. Տ-Հովհաննիսյան Լևոն Կարապետի	
39. Ֆենեկչյան Գեղամ Գասպարի	Իսպահան
40. Քարյան Սեդրակ Կիրակոսի	Փարիզ
41. Ենգրճյան Առաքել Գրիգորի	»
	Կալիֆորնիա

Անուն, ազգանուն, հայրանուն	Փեմ
42. Գավուկյան Հայկ Սարգսի	Ամերիկա
43. Զանգոզյան Ջեյմս Մկրտչի	»
44. Վառվառյան Հայկ Ստեփանի	Հունաստան
45. Բարադամյան Գրիգոր Համբարձումի	»
46. Ութուճյան Աստղուհի Արևոտղոմի	Լոնդոն
47. Քյուրքչյան Սազիս Նազարեթի	»
48. Թուղլաճյան Միքայել Բարսեղի	Կ. Պոլիս
49. Ինճեյան Երվանդ Մուրադի	»
50. Պասմաճյան Լոդոֆեթ Սիմոնի	»
51. Ազատյան Թորոս Մարտիրոսի	Ակն
52. Թոփաքալաշյան Պետրոս Հարու- թյունի	Բուլգարիա
53. Մեքթուպճյան Գևորգ Կարապետի	»
54. Տիրացյան Արտաշես Գրիգորի	Ռումինիա
55. Զաքար Ճանիկ Մարտիրոսի	Եգիպտոս
56. Փափազյան Էոժեն Ճոնի	»
57. Ծրյան Պենոն Հովսեփի	Երոսաղեմ
58. Ավագյան Բաբրատ Գալստի	Թեհրան
59. Իսայել Ռոման Բոզգանի	»
60. Արրուլչյան Բաբգեն Գրիգորի	Ատրպատական
61. Զոհրաբյան Եղիա Հովհաննեսի	Արարատյան թեմ
62. Կամսարական Ստեփան Հովհան- նեսի	»
63. Մինասյան Մինաս Սարգսի	»
64. Սալիբյան Նիկողայոս Գերասիմի	»
65. Սարյան Մարտիրոս Սարգսի	»
66. Մխիթարյան Գարեգին Գալստի	»
67. Լևոնյան Գարեգին Ջիվանի	»
68. Խոճիկ Էրվարդ	»
69. Շահազիզյան Երվանդ	»
70. Տեղ Հովհաննիսյան Ներսես վրդ.	»
71. Հախումյան Տիգրան Սիմոնի	»
72. Աբրահամյան Աշոտ Գարեգինի	»
73. Աղաշանյան Արամ Աբելի	»
74. Մալխասյան Ստեփան Սարգսի	»
75. Իսահակյան Ավետիք Մահակի	»
76. Ալեքյան Հմայակ Մովսեսի	Շիրակի թեմ
77. Սարգսյան Վարոս Խուրշուդի	»
78. Աթոյան Սերոբ Հովհաննեսի	»
79. Սարգսյան Մուշեղ Մկրտչի	»
80. Մելիքսեթյան Անուշավան Սարգսի	»
81. Մեղքոնյան Լևոն Հակոբի	»
82. Խաչատրյան Յուլակ Մորոսի	»
83. Գործակալյան Հովհաննես Մկրտչի	»
84. Թաշճյան Սարգիս Գրիգորի	»
85. Մինասարյան Հայգասար Մնացա- կանի	»
86. Հարությունյան Գավրոշ Գրիգորի	»

Անուն, շագանուն, հայրանուն	Թեմ
87. Արմենյան Արմեն Նուրիջանի	Շիրակի թեմ
88. Ղարիբջան Արարատ Սահակի	»
89. Հովասաթյան Գանրեզին Պողոսի	Վրաստանի թեմ
90. Ննիգուրյան Հովհաննես Կոնստանդինի	»
91. Խարատյան Հովհաննես Մկրտիչի	»
92. Գրիգորյան Լևոն Գրիգորի	»
93. Ավաղյան Առաքել Հովհաննեսի	»
94. Միրզոյան Լևոն Արզումանի	»
95. Դովլեթյան Սմբատ Հակոբի	»
96. Մելիքնուբարյան Հովհաննես Վարդանի	»
97. Աղաջանյան Արմենակ Սարգսի	»
98. Ղամբարյան Մարգարիտ Ռոմանի	»
99. Սրվանձադյան Գարեգին Համադասպի	»
100. Կաճկաճյան Նիկոլ Ալեքսանի	»
101. Շահպարտյան Սամվել Պողոսի	»
102. Մելիք Կարապետյան Փաշա Մարտիրոսի	»
103. Բեշտավյան Միքայել Ջակոբի	Նախիջևանի թեմ
104. Դուրբերյան Միքայել Կարնայետի	»
105. Շիրմանյան Եփրեմ Լուսպարտնի	»
106. Ղաթլամաճյան Ներսես Մկրտչի	»
107. Այուսյան Գևորգ Հարությունի	»
108. Տեր-Մկրտչյան Արշակ Հարությունի	Բաքվի թեմ
109. Բաբայան Բախշի Հովհաննեսի	»
110. Խաչատրյան Նիկողոս Խրիստաֆորի	»
111. Հակոբյան Բարիս Մարտիրոսի	»
112. Հովակիմյան Անդրեաս Հարությունի	»
113. Գրիգորյան Սամսոն Ալեքսանի	Լեոնային Ղարաբաղ
114. Զաքարյան Սեդրակ Հովհաննեսի	Կիրովաբադ
115. Միրզոյան Սրապիոն Թամարզի	Հյուսիսային Կովկասի թեմ
116. Գուշիկյան Ամադիկ Սերոբի	»
117. Տ. Հակոբյան Համադասպ Արմենակի	»
118. Խալաթյան Ալեքսան Դերձինի	»

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՍԱՐԱՆԻ

1945---46 ՈՒՍՈՒՄՆ. ՏԱՐՎԱ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՂԱՅՄԱՆՆԵՐԸ

Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանն ունի դպրանոցական (միջնակարգ) և ճեմարանական (բարձրագույն) բաժիններ:

Հոգևոր ճեմարան ընդունվում են 18—35 տարեկան քաղաքացիները:

Գպրանոցական բաժնում ընդունվում են առնուազն Հայոց յոթամյա դպրոցներ ավարտողները, իսկ ճեմարանական բաժնում՝ տասնամյա և բարձրագույն դպրոց ավարտողները:

Հոգևոր ճեմարան մտնել ցանկացողները պետք է դիմում ներկայացնեն Ս. Էջմիածնի Հայոց Գերագույն Հոգևոր Խորհրդին և

դիմումի հետ ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1. ծննդյան վկայական.
2. ուսման վկայական.
3. ընդարձակ ինքնակենսագրություն.
4. երկու լուսանկար, սեփական ստորագրությամբ:

Դիմումներն ընդունվում են մինչև 1945 թվի սեպտեմբերի 25-ը:

Հոգևոր ճեմարանը գիշերօթիկ դպրոց է և ուսումը ձրի:

Հասցե՝ Էջմիածին— Հայոց Գերագույն Հոգևոր Խորհուրդ:

